«Կոլեկցիոները» վեպի վերլուծությունը միջտեքստային ծավալման մեջ հնարավորություն է ընձեռում ապացուցելու այն տեսակետը, որ միջտեքստային տարրերի օգտագործումը իրապես տեքստաստեղծման ուրույն միջոց է: Այնուամենայնիվ, Ֆաուլզը, զարգացնում է այն միտքը, որ ազատությամբ շնորհված մարդը, սահմանափակելով ուրիշի ազատությունը, զրկելով նրան ազատությունից, վերածվում է հրեշավոր մի անձնավորության: Հիրավի, նորաստեղծ տեքստը, իր մեջ կրելով միջտեքստային տարրեր, կարող է մեծ արժեք ներկայացնել միայն այն դեպքում, եթե վերջինս տարբերվում է անդրադարձվող տեքստից անհատական, հեղինակային մեկնաբանմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Арнольд И. В., Стилистика. Современный английский язык: Учебник для вузов. Москва, Флинта, Наука, 2002, 384 стр.
2. Болотнова Н. С., Филологический анализ текста. Учеб. пособие. 4-е изд. М., Флинта, Наука, 2009, 520 стр.
3. Гучинская Н.О., Шпильманский эпос и проблема текстопорождения. Интертекстуальные связи в художественном тексте, Санкт-Петербург, Образование, 1993, 46-57 стр.
4. Кристева, Ю., Бахтин, слово, диалог и роман. Французская семиотика: От структурализма к постструктурализму / Пер. с франц., сост., вступ. ст. Г.К. Косикова, Москва, ИГ Прогресс, 2000, 427-457 стр. [<http://www.philology.ru/literature1/kristeva-00.htm>]
5. Смирнов И. П., Порождение интертекста (элементы интертекстуального анализа с примерами из творчества Б. Л. Пастернака), Изд-во СПбГУ, 1995, 193 стр.
6. Фатеева Н. А., Интертекст в мире текстов. Контрапункт интертекстуальности. Изд. 3-е, стереотипное. М., КомКнига, 2007, 280 стр.
7. Fowles J., The Collector, London, 1963.
8. Shakespeare W., The Tempest [sparks.eserver.org/books/shakespeare-tempest.pdf]

REFERENCES

1. Arnol'd I. V., Stilistika. Sovremennyj anglijskij jazyk: U4ebnik dlja vuzov. Moskva: Flinta: Nauka, 2002, 384 str.

2. Bolotnova N. S., Filologičeskij analiz teksta. Učeb. posobie. 4-e izd. Moskva: Flinta: Nauka, 2009, 520 str.
3. Gučinskaja N.O., 66pil'manskij jepos i problema tekstoporo#denija. Intertekstual'nye svjazi v hudo#estvennom tekste. Sankt-Peterburg: Obrazovanie, 1993, 46-57 str.
4. Kristeva, Ju., Bahtin, slovo, dialog i roman. Francuzskaja semiotika: Ot strukturalizma k poststrukturalizmu / Per. s franc., sost., vstup. st. G.K. Kosikova. - Moskva: IG Progress, 2000, 427-457 str. [<http://www.philology.ru/literature1/kristeva-00.htm>]
5. Smirnov I. P., Poro#denie interteksta (jelementy intertekstual'nogo analiza s primerami iz tvorčestva B. L. Pasternaka) Sankt-Peterburg: Izdvo SPbGU, 1995, 193 str.
6. Fateeva N. A., Intertekst v mire tekstov. Kontrapunkt intertekstual'nosti. Izd. 3-e, stereotipnoe. Moskva: KomKniga, 2007, 280 str.

АНАИТ МАКАРЯН - АНАЛИЗ ИНТЕРТЕКСТУАЛЬНЫХ РЕПРЕЗЕНТАНТОВ НА МАТЕРИАЛЕ РОМАНА ДЖ. ФАУЛЗА “КОЛЛЕКЦИОНЕР”

Ключевые слова: интертекстуальность, интертекстуальные репрезентанты, интертекстуальный анализ, идиостиль, интенция автора

Данная статья посвящена изучению интертекстуальности, которая имеет важнейшую текстоформирующую функцию. Интертекстуальный анализ романа Дж. Фаулза "Коллекционер" и пьесы Шекспира "Буря" способствует выявлению особенностей идиостиля Фаулза. Лингвопоэтический, лингвостилистический и межтекстуальный анализ двух литературных произведений показывает аллюзивный характер романа "Коллекционер", в котором шекспировские понятия "красоты" и "уродства" ассоциируются с концептом "свободы", отражая индивидуальное восприятие мира Фаулза. Итак, данный анализ позволяет сделать вывод, что новообразованный текст, сформированный интертекстуальными репрезентантами, представляет ценность, если этот текст отражает мировоззрение и интенции автора.

ANAHIT MAKARYAN - STUDY OF INTERTEXTUAL MARKERS OF THE NOVEL “THE COLLECTOR” BY J. FOWLES

Keywords: intertextuality, intertextual markers, intertextual analysis, individual style, author's intention

The present paper aims at studying intertextuality as one of the basic means of structuring a text. Intertextual analysis of the novel “The Collector”

by J. Fowles and the play “The Tempest” by W.Shakespeare make it possible to disclose the peculiarities of Fowles’ individual style. Linguopoetic, linguostylistic and intertextual analysis of the two literary works reveals the allusive character of the novel “the Collector”, where the Shakespearean concepts of “beauty” and “ugliness” are associated with the concept “freedom”, highlighting Fowles’ individual perception of the world. Hence, the given study has yielded the conclusion that the allusive text containing intertextual markers can present value if only this text reflects the worldview and the intentions of the author.

Ներկայացվել է՝ 02.02.2021
Գրախոսվել է՝ 02.02.2021

**ՈՉ ԽՈՍՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԵՌՈՒՍՏԱԲԱՆԱՎԵՃԵՐՈՒՄ**

ԼՈՒԻԶԱ ՄԱՐԱԲՅԱՆ

Հիմնաբառեր՝ գենդեր, քաղաքական հեռուստաբանավեճ, ոչ խոսքային հաղորդակցություն, ոչ խոսքային ազդակ

Գենդերը մարդու ինքնության ամենակարևոր տարրերից մեկն է: Այն ազդում է մարդու արտաքին տեսքի, լեզվի, հետաքրքրությունների, տարբեր հարաբերությունների, աշխատանքի ընտրության վրա: «Գենդեր» եզրույթը վերաբերում է հասարակության մեջ տղամարդկանց և կանանց զբաղեցրած դիրքին, նրանցից ակնկալվող վարքի նորմերին, հոգեբանական և սոցիալական առանձնահատկություններին (Կնյազյան 2016: 5): Գենդերային տարբերությունները հստակ երևում են ոչ միայն խոսքային, այլև ոչ խոսքային հաղորդակցության մեջ: Այն երկու սեռերի մոտ մշտապես տարբեր է եղել:

Հետազոտության առարկան է կանանց և տղամարդկանց ոչ խոսքային հաղորդակցությունը քաղաքական հեռուստաբանավեճերում: Հետազոտության արդիականությունը և կարևորությունը պայմանավորված են բանավիճային տիրույթում գենդերային հաղորդակցության ոչ խոսքային միջոցների իրականացման, կանանց և տղամարդկանց կերպարների առանձնահատկությունների բացահայտման անհրաժեշտությամբ:

Սույն հոդվածում դիտարկվում է ոչ խոսքային հաղորդակցությունը՝ քաղաքական հեռուստաբանավեճի շրջանակներում, ներկայացվում են մի շարք վերլուծություններ քաղաքական բանավեճերից: Փորձ է արվել ուսումնասիրել կին և տղամարդ քաղաքական գործիչների ոչ խոսքային ազդակները և վարքագիծը, ներառյալ՝ կեցվածքը, դեմքի արտահայտությունը և ժեստերը:

Քաղաքական բանավեճերը թեկնածուներին հնարավորություն են տալիս ընտրողներին փոխանցել իրենց զգացմունքներն ու մտադրությունները՝ կառուցելով վստահության և հարգանքի մթնոլորտ: Բնականաբար, նրանք գործի են դնում ոչ միայն խոսքային միջոցներ, այլև ոչ խոսքային ազդակներ իրենց բազմաթիվ ընտրողների

համակրանքին հասնելու նպատակով: Ընդհանուր առմամբ, քաղաքական բանավեճերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մարդիկ քաղաքական գործիչներին նաև գնահատում են ըստ նրանց ոչ խոսքային ազդակների՝ սկսած դեմքի արտահայտությունից մինչև արտաքին տեսքը, սանրվածքը և հագուստը:

Ա. Մեհրաբյանն առաջիններից էր, ով կարևորեց ոչ խոսքային հաղորդակցությունը և եզրակացրեց, որ ոչ խոսքային միջոցները ստացողին փոխանցում և հաղորդում են վերաբերմունքի 93 տոկոսը (Mehrabian 1968a): Մեկ այլ հեղինակ հավելեց, որ արդյունավետ հաղորդակցության 93 տոկոսը որոշվում է ոչ խոսքային ազդակներով (Heathfield 2007): Հաղորդակցության այս տեսակը կարող է հաստատվել նաև այնպիսի միջոցներով, ինչպիսիք են **դիմաշարժությունը, հպումը, հեռավորությունը, ժեստերը, կեցվածքը** և այլն: Ըստ տեսաբանների՝ ի սկզբանե ոչ խոսքային ազդակներն ուղեկցվում են հուզական արտահայտություններով, մասնավորապես՝ **դեմքի արտահայտությունները, մարմնի շարժումները և խոսքի տոնը**, բայց կարող է ներառել նաև ֆիզիկական տեսքի այլ ձևեր՝ **մաշկի և մազերի գույն, կեցվածք, դեմքի արտահայտություն, հայացք, հագնվելու ոճ կամ հպում** (Bucy 2017): Ոչ խոսքային հաղորդակցության մեկնաբանությունն ավելի ճշգրիտ է դառնում, երբ մեկնաբանողը կարող է ավելի ստույգ որոշել այն պատճառը, որն առաջացրել է ոչ խոսքային ազդակ: Եվ բոլորովին պարտադիր չէ, որ ինչ-որ մեկի արտահայտած ոչ խոսքային ազդակները հույզեր արտահայտեն: Նման ազդակները մեկնաբանելու համար չկա հաստատուն բանաձև: Որոշ քաղաքական գործիչներ կարողանում են վերահսկել իրենց ոչ խոսքային ազդակները: Հետևաբար կարող ենք փաստել, որ զարգացնելով ոչ խոսքային ազդակների իրազեկությունը՝ քաղաքական գործիչը կարող է մեկնաբանել և արդյունավետորեն բանավիճել իր հակառակորդի հետ: Ոչ խոսքային հաղորդակցությունը երկու սեռերի մոտ մշտապես տարբեր է եղել: Ըստ Ա. Կնյազյանի կատարած հետազոտության՝ ոչ խոսքային հաղորդակցության մակարդակում գենդերը կարևոր դեր է կատարում շոշափողական, շարժաբանական և դիմախոսական հաղորդակցության մեջ (Կնյազյան 2016): Նրա կարծիքով ցանկացած անհատի վարքագիծը ինչ որ մի իրավիճակում նկարագրելով՝ հնարավոր է որոշել մարդու գենդերը: Քաղաքական հեռուստաբանավեճերի մեր վերլուծության ժամանակ շեշտը հիմնականում դրվել է **դիմախոսության, ժեստերի, կեցվածքի և ժպիտի** վրա:

Քաղաքական հեռուստաբանավեճերում *կեցվածքը* կարևոր նշանակություն ունի հանդիսատեսի վրա տպավորություն թողնելու

հարցում: Այնուամենայնիվ, հարկ է նկատել, որ կին քաղաքական գործիչները ավելի լավ են վերահսկում իրենց կեցվածքը, քան տղամարդիկ: Չնայած մի շարք հետազոտողներ պնդում են, որ տղամարդու և կանանց մարմնի լեզվի տարբերությունները կանխորոշված են կենսաբանական գործոններով, սակայն մեծամասնությունը կիսում է այն կարծիքը, որ այն հիմնականում պայմանավորված է սոցիալական և մշակութային տարրերով (Vrugt&Luyerink 2000): Հասարակության կարծրատիպային համոզմունքների կառուցումը ներկայացնում է արականության և իգականության գենդերային փոխազդեցությունը (Vrugt&Luyerink 2000: 95): Եթե հաշվի առնենք սոցիալական կողմը, ապա պետք է նկատենք, որ կանայք հակված են նստել **հավաքված կեցվածքով՝ ոտքերը խաչված**, մինչդեռ տղամարդիկ նստում են **փռված դիրքով՝ ոտքերը տարածված** (Vrugt&Luyerink 2000): Մի շարք հետազոտություններ ցույց են տվել, որ եթե բանախոսները **գլուխը բարձր են պահում**, ապա արտահայտում են իրենց ինքնավստահությունը, հպարտությունն ու նաև արհամարհանքը, մինչդեռ **գլուխն իջեցնելը** նշանակում է հպատակություն, մեղավորություն և նվաստացում, ինչպես նաև տխրություն (Coulson 2004):

Քաղաքական բանավեճերում կենտրոնական կարևոր դեր է կատարում *դեմքի արտահայտությունը*: Դիմախոսությամբ դրսևորված հույզերի մեծ մասն առավել ճիշտ է ընկալվում կանանց դեպքում (Կնյագյան 2016: 26):

Աչքերի ուղղակի շփումը վստահության և անկեղծության նշան է, իսկ հայացքից խուսափելը՝ մեղավորության նշան (Knapp 2014): Աչքերի շփումը կարող է դիտարկվել ոչ միայն որպես համարձակ ու գերիշխող պահվածքի դրսևորում, այլև դիտվել որպես հարգանքի նշան (Burgoon 2010): Տղամարդիկ, խոսելիս հակված են ուղղակիորեն նայել աչքերի մեջ, մինչդեռ լուռ ժամանակ նրանց մոտ բացակայում է աչքերի շփումը: Սակայն, նույնը չենք կարող ասել կանաց պարագայում. լսելիս նրանք պահում են աչքերի շփումը՝ ցույց տալով, որ ուշադիր են լսում (Reiman 2008):

Կանայք՝ տղամարդկանց համեմատ, այդքան էլ ազդեցիկ չեն, բայց կարող են ընկալվել որպես ավելի հմուտ, երբ անմիջականություն են ցուցաբերում՝ *ժպիտի* և *գլխի շարժման* միջոցով: Կանանց թվում է, որ անմիջականության շնորհիվ նրանք կարող են ազդեցիկ լինելու տպավորություն թողնել տղամարդկանց վրա (Carli 1993): Կին քաղաքական գործիչները գնալով կորցնում են իրենց գրավչությունը, մինչդեռ տղամարդիկ կարծես, գրավչություն են ցուցաբերում բոլոր մակարդակներում (Podratz 2002): Հետազոտությունները ցույց են տալիս,

որ ֆիզիկական գրավչությունը մեծացնում է թեկնածուի ընտրական հաջողության հասնելու հնարավորությունը (Mattes 2014): Ոչ խոսքային մակարդակում *ժպիտը* ներկայացվում է որպես հզոր միջոց քաղաքական բանավեճերում: Ըստ որոշ ուսումնասիրությունների՝ այն թեկնածուները, ովքեր ժպտում են վստահության, այլասիրության և իրազեկության զգացում են ներշնչում (Mehu 2007) և ավելի համոզիչ են թվում: Կարելի է ենթադրել, որ հատկապես հեռուստաբանավեճում պարտադիր է ժպտալը, քանի որ այդ կերպ կարելի է ապահովել հնարավորինս մեծ հեռուստալսարան: Հեռուստաբանավեճում դրսևորվում են բանավիճող կողմերի՝ խոսքարվեստին տիրապետելու, ասածը հիմնավորելու, փաստարկելու, համոզելու կամ տարհամոզելու հմտությունները, և որքան լավ են բանավիճողները ներկայացնում իրենց առաջնորդական ունակությունները, այնքան ավելի մեծ արձագանք են առաջացնում հեռուստադիտողների շրջանում՝ ուղղորդելով նրանց կատարելու ճիշտ ընտրություն:

Հարկ է նկատել, որ չնայած այն հանգամանքին, որ կանայք շատ են ժպտում, միևնույն ժամանակ դեմքի արտահայտությամբ հաղորդում են վախն ու տխրությունը, մինչդեռ տղամարդկանց դեմքի արտահայտությունն ավելի ակնհայտ է գայրույթ արտահայտելիս (Wallbott 1988): Որպես դեմքի արտահայտության դրական դրսևորում են դիտվում նաև **հոնք բարձրացնելը, գլուխը բարձր պահելը և չլարվելը:**

Հետազոտելով ոչ խոսքային հաղորդակցության մակարդակում գենդերային տարբերությունները՝ քննության ենք առել ԱՄՆ քաղաքական գործիչ, Դեմոկրատական կուսակցության անդամ Քամալա Հարիսի և Հանրապետական կուսակցության անդամ Մայք Փենսի ոչ խոսքային ազդակները՝ մասնավորապես դիմախոսությունը, հույզերը, աչքերի շփումը և ժպիտը /https://www.youtube.com/watch?v=Q_CEb3dRqw/:

Հատկանշական է, որ երկու բանախոսները դրսևորում էին համեմատաբար խաղաղ վարքագիծ: Երկուսն էլ հաճախ էին ժպտում: Մեր կարծիքով Հարիսը ժպիտն օգտագործում էր չհամաձայնելու, չհավատալու, չվստահելու և քաղաքավարի առարկելու համար: Ինչպես նաև ժպիտը Հարիսին ավելի գրավչություն էր հաղորդում և վստահություն էր ներշնչում իրեն քվեարկողներին: Երբ նրան ընդհատում էին, նա առանց զայրանալու և ձայնի տոնը բարձրացնելու՝ ժպտալով շտկում էր իրավիճակը:

“Mr Vice-President, I'm speaking... If you don't mind letting me finish, then we can have a conversation” /տե՛ս աղյուսակ 1/:

Նա երբեմն բարձրացնում էր իր ձախ հոնքը կամ պտտեցնում էր աչքերը, երբ Փենսը ինչ-որ հակասական բան էր ասում:

“The American people have witnessed what is the greatest failure of any presidential administration in the history of our country”: Բոլոր այն հեռուստադիտողները, ովքեր սպասում էին, որ նա կգայրանար, նրանք տեսնում էին, թե ինչպես էր նա պահում իր հանգստությունը՝ դրսևորելով դիմախոսության մի շարք ձևեր:

Փենսը ժպիտն օգտագործում էր ինքնավստահ, համոզիչ երևալու համար: Որպես անհամաձայնության նշան՝ նա գլուխն էր շարժում, սեղմում շուրթերը կամ բարձրացնում էր հոնքերը:

“The fact that you continue to undermine public confidence in a vaccine. If a vaccine emerges during the Trump administration, I think is unconscionable. Senator, I just ask you, stop playing politics with people’s lives”. /տե՛ս աղյուսակ 1/:

Հարցադրումներից մեկի ժամանակ նա գլուխը հետ է տանում՝ ցույց տալով, որ գոհ է իր հարցադրումից:

“American people would really like to know if you and Joe Biden, if somehow you win this election going to pack the Supreme Court to get your way?”: Այսպիսով, նա կարծես իր հույզերն ու զգացողություններն էր փոխանցում հանդիսատեսին՝ արտահայտելով իր անհանգստությունը և մտահոգությունը, միևնույն ժամանակ շեշտադրելով իր գերակայությունը:

Հարիսի խոսքը, կախված թեմայից, հուզականորեն փոխվում էր: Խոսելուց նա ուղիղ նայում էր իր հակառակորդին և երբեմն ձեռքը դնում էր կզակի տակ: Փենսի հետ խոսելիս նա բուն կերպով շարժում էր ձեռքերը, երբեմն ուժգին թափահարում էր դրանք՝ արտահայտելով իր հուզմունքը:

“When I asked, well, why didn’t you tell anybody about COVID-19, he said, because the president wanted the people to remain calm”:

Հուզմունքից նա երբեմն չէր կարողանում վերահսկել ինքն իրեն: Նա տեղում նստած անընդհատ շարժվում էր, խոսելիս ձեռքերն իրար սեղմում և թվում էր՝ այդ կերպ իրեն ավելի ինքնավստահ էր զգում:

“The American people are voting right now and it should be their decision about who will serve on this most important body for a lifetime”:

Երբ նա խոսում էր, նայում էր ուղիղ տեսախցիկին և շարժում գլուխը: Դա պրոֆեսիոնալ վարքագիծ է հատկապես հեռուստաբանավեճերի ժամանակ. այն լավ տպավորություն է թողնում հեռուստադիտողի վրա: Նա մեծ թվով մարմնի շարժումներ էր կատարում, ինչպես նաև ցուցաբերում էր հմուտ աչքերի շփում /տե՛ս աղյուսակ 1/: Ամեն անգամ, տեսախցիկին նայելիս՝ նա շարժում էր երկու ձեռքերը, այնուհետև, երբ ավարտում էր խոսքը, փակում էր աչքերը, ժպտում և շրթունքները սեղմում:

“If doctors tell us to take vaccines, I’ll be the first in line, but if Trump tells us we should take it, I am not taking it”:

Հարկ է նշել, որ Հարիսը կարողանում էր աչքերի շփում հաստատել ոչ միայն հաղորդավարի, այլև հեռուստադիտողի հետ՝ գործի դնելով մեծ թվով հույզեր և ձեռքի շարժումներ, քվեարկողներին կոչելով, որ ինքը համոզիչ է և ամերիկացիները հենց իրենք պետք է որոշեն, թե ում են ուզում տեսնել նախագահի աթոռին:

“The American people deserve to make the decision about who will be the next president of the United States”:

Ինչ վերաբերվում է Փենսիլն՝ նա ամբողջովին վերահսկում էր իրավիճակը: Երբ Հարիսը ժպտալով խոսում էր Ամերիկայի պատմությունից, նա ոչ ակնհայտ քննադատելով լսում էր, այնուհետև պատասխանեց նրան՝ ուղիղ նայելով տեսախցիկին, բարձրացնելով հոնքերը, որպեսզի հանդիսատեսի ուշադրությունը գրավի, շարժելով գլուխը նա փորձում էր տալ ուղիղ և թիրախային պատասխաններ:

“They are going to pack the Supreme Court if they somehow win this election. If you cherish our Supreme Court, you need to reject the Biden-Harris ticket, come November the third re-elect president Donald Trump”.
Նա նույնպես խոսելիս ուղիղ նայում էր խոսակցին և ուղիղ հարցադրումներ անում: Նրա դեմքի արտահայտությունը արտաքուստ հարգանք էր արտահայտում Հարիսի նկատմամբ: Եվ այդ արտահայտությունը նա պահեց մինչև վերջ:

Ոչ խոսքային մակարդակում Քամալա Հարիսի և Մայք Փենսի հուզարտահայտչական միջոցների վիճակագրությունը ներկայացվում է աղյուսակում:

Աղյուսակ 1

Քամալա Հարիսի և Մայք Փենսի ոչ խոսքային միջոցների կիրառման արդյունքը.

	Քամալա Հարիս	Մայք Փենս
Ժպիտ	65%	35%
աչքի շփում	55%	45%
հոնքերի բարձրացում	45%	55%
գլխի շարժում	60%	40%
աչքի շարժում	55%	45%
շրթունքների սեղմում	55%	45%
ձեռքերի շարժում	70%	30%
մարմնի կեցվածք	55%	45%

Ամփոփելով ոչ խոսքային հաղորդակցության ուսումնասիրության արդյունքները՝ հանգում ենք այն տեսակետին, որ կանանց և տղամարդկանց ոչ խոսքային հաղորդակցությունը շատ տարբեր է: Ըստ մի շարք տեսաբանների՝ այդ տարբերությունները բխում են ոչ միայն կենսաբանական, այլև սոցիալական և մշակութային գործոններից: Ոչ խոսքային հաղորդակցությունը կանանց և տղամարդկանց մոտ օգտագործվում է գիտակցաբար և անգիտակցաբար՝ խոսքը կամ զգացմունքները ընդգծելու նպատակով, ինչպես նաև տվյալ ասպարեզում դիրք հաստատելու, առաջ գնալու կամ ինքնահաստատվելու համար: Ուսումնասիրվել է կին և տղամարդ քաղաքական գործիչների ոչ խոսքային ազդակները՝ դիմախոսությունը, ժեստերը, կեցվածքը և ժպիտը հեռուստաբանավեճի ժամանակ:

Եզրակացնում ենք, որ չնայած տղամարդ քաղաքական գործիչը ավելի հավասարակշռված է, հույզերը վերահսկող և փորձառու, այնուամենայնիվ կին քաղաքական գործիչը՝ գործի դնելով մի շարք ոչ խոսքային միջոցներ, ինչպիսիք են ժպիտը, աչքերի շփումը և ժեստերը, կարողանում է ազդել հանդիսատեսի վրա և ավելի համոզիչ երևալ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Bucy, E. P. (2017). Nonverbal Cues. *The International Encyclopedia of Media Effects*, 1-11.
2. Burgoon, J. K., Guerrero, L. K., & Floyd, K. (2010). *Nonverbal communication*. New York, NY: Routledge.
3. Carli, L. L. (1993, August). *Perceptions of nonverbal behavior*. Paper presented at the annual meeting of the American Psychological Association, Toronto, Ontario, Canada.
4. Coulson, M. (2004). Attributing emotion to static body postures: Recognition accuracy, confusions, and viewpoint dependence. *Journal of Nonverbal Behavior*, 28(2), 117-139. doi:10.1023/B:JONB.0000023655.25550.b
5. Heathfield, S. *Listen with your eyes: Tips for understanding nonverbal communication*. 2007.
6. Knapp, M. L., Hall, J. A., & Horgan, T. G. (2014). *Nonverbal communication in human interaction* (8th ed.). Boston, MA: Wadsworth.
7. Կնյազյան Ա., Անգլիական երգիծական խոսույթի գենդերային հայեցակերպը, դոկտորական ատենախոսություն 2016:
8. Կնյազյան Ա. Լեզու և Գենդեր:Երևան, ԵՊՀ հրատ. 2018, 210 էջ:

9. Mattes, K., & Milazzo, C. (2014). Pretty faces, marginal races: Predicting election outcomes using trait assessments of British parliamentary candidates. *Electoral Studies*, 34, 177-189. doi:10.1016/j.electstud.2013.11.004
10. Mehrabian, A. (1968a). *Inference of attitudes from the posture orientation and distance of a communicator*. *Journal of Consulting and Clinical Psychology*, 32, 296-308.
11. Mehu, M., Little, A. C., & Dunbar, R. (2007). Duchenne smiles and the perception of generosity and sociability in faces. *Journal of Evolutionary Psychology*, 5(5), 133-146. doi:10.1556/JEP.2007.1011
12. Podratz, K. E., Dipboye, R. L., & , (2002). In search of the “beauty is beastly” effect. Rice University.
13. Vrugt, A., & Luyerink, M. (2000). The contribution of bodily posture to gender stereotypic impressions. *Social Behavior and Personality: An International Journal*, 28, 91-103. <http://dx.doi.org/10.2224/sbp.2000.28.1.91>
14. Wallbott, H. G. (1988). Big girls don't frown, big boys don't cry: Gender differences of professional actors in communicating emotion via facial expression. *Journal of Nonverbal Behavior*, 12(2), 98-106. doi:10.1007/BF00986

ՀԱՄԱՅԱՆՑԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՂՆԵՐ

1. https://www.youtube.com/watch?v=Q_CEb3dRqw/:(10.12.20)
2. Reiman, T. (n.d.). Retrieved from <http://www.bodylanguageuniversity.com> (20.10.20)

REFERENCES

1. Knyazyan A. Angliakan ergitsakan khosuyti genderayin hayetsakerp@. Doktorakan atnakhosutyun 2016
2. Knyazyan A. Lezu ev Gender. Yerevan YPH hrat. 2018

ЛУИЗА МАРАБЯН - ГЕНДЕРНЫЕ ОСОБЕННОСТИ НЕВЕРБАЛЬНОЙ КОММУНИКАЦИИ В ПОЛИТИЧЕСКИХ ТЕЛЕДЕБАТАХ

Ключевые слова: гендер, политические теледебаты, невербальная коммуникация, невербальный сигнал.

В статье исследуются гендерные характеристики невербального общения во время телевизионных политических дебатов. Невербальная коммуникация играет далеко не последнюю роль в процессе

взаимодействия людей. Средства невербальной коммуникации как своеобразный язык чувств являются таким же продуктом общественного развития, как и язык слов. Среди таких средств выделяют мимику, взгляды, позы, жесты, прикосновения, поведение человека в окружающем его пространстве. Все эти виды невербальных сообщений находятся во взаимодействии, иногда дополняя друг друга, иногда противореча друг другу.

LUIZA MARABYAN - GENDER FEATURES OF NON-VERBAL COMMUNICATION IN TELEVISED POLITICAL DEBATES

Keywords: *gender, political debate, non-verbal communication, non-verbal cues*

The paper examines gender characteristics in nonverbal communication during televised political debates. Nonverbal communication plays an important role in the process of human interaction. Means of nonverbal communication as a kind of language of feelings are the same product of social development as the language of words. Among such means are facial expressions, views, postures, gestures, touches, behavior in the surrounding space. All these types of nonverbal messages interact, sometimes complementing each other, sometimes contradicting each other.

Ներկայացվել է՝ 23.02.2021
Գրախոսվել է՝ 23.02.2021

ՀԱՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՆՈՐ ԵՎ
ՆՈՐԱԳՈՒՅՆ ՓՈՒԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱԳՈՒՍՏ ԱՆՎԱՆՈՂ
ԲԱՌԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏՈՒՄ

ՌԵԲԵԿԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հիմնաբառեր՝ բառապաշար, հնաբանություններ, պատմաբաներ, հագուստ, հեղինակային (անհատական) նորաբանություններ, հագուստի մշակույթ, փոխառյալ բառեր

Լեզուն նյութական, իրական աշխարհի, նրանում գործող փոխհարաբերությունների դրսևորումն է, իսկ լեզվի բովանդակային կողմը՝ նյութական աշխարհի արտացոլումը: Ժամանակակից լեզվաբանության հիմքում ընկած է լեզվի իմաստային-իմաստաբանական կողմի քննությունը: Լեզվի ներքին՝ բովանդակային կողմի վերլուծության հիման վրա 20-րդ դարի 60-70-ական թվականներին լեզվաբանության մեջ առաջ եկան այսպես կոչված լեզվաբանական դաշտերի մի շարք տեսություններ: Այս իմաստային դաշտերը բազմակողմանիորեն քննվել են ռուսական և եվրոպական գրականության մեջ, մինչդեռ հայ լեզվաբանության մեջ վերջին տասնամյակներում է, որ բառապաշարի որոշ խմբերի վերաբերյալ գրվել են հոդվածներ, մենագրություններ և պաշտպանվել են ատենախոսություններ:

Արդի հայերենն ունի բավական հարուստ բառապաշար: Այդ բառապաշարի մեջ իրենց ուրույն տեղն ունեն հագուստ անվանող արմատական բառերը, բառաբաղադրությունները, նորաբանությունները, նորակազմությունները, այն նոր ու նորագույն փոխառությունները, որոնք առայժմ չունեն իրենց համարժեքները, հնաբանությունները՝ հնաբառերը և պատմաբառերը

Լեզվաբանական գրականության մեջ ընդունված է հնաբանությունները երկու խմբի բաժանել՝ բուն հնաբանություններ և պատմաբառեր: Հնաբանությունների՝ երկու խմբերի տարբերակումը հստակ ձևակերպված է Ս. Էլոյանի կողմից. «Առաջին դեպքում հնանում են բառերը, սակայն նրանց անվանած երևույթները, հասկացությունները մնում են՝ փոխարինվելով այլ կենսունակ հոմանիշներով, իսկ երկրորդ դեպքում բառերը մնում են, բայց հնանում են նրանցով մատնանշված երևույթները, հասկացությունները» (Էլոյան 1989: 236):

Բուն հնաբանությունները բառապաշարի այն շերտին են պատկանում, որոնք ժամանակի ընթացքում տարբեր պատճառներով կորցրել են իրենց կենսականությունը, գործուն մասնակցություն չեն ցուցաբերում լեզվի հաղորդակցման գործընթացին և գործածությունից դուրս են եկել՝ անցնելով ոչ գործուն բառապաշար:

Լեզվի տարբեր փուլերում հնանում և գործածությունից դուրս են գալիս ոչ միայն քաղաքական կյանքին, մշակույթին, առևտրին ու դրամական հարաբերություններին, չափին ու կշռին, կենցաղային իրերին, այլև հագուստ-կապուստին վերաբերող բազմաթիվ բառեր:

Հագուստ-կապուստը մարդու անհրաժեշտ ուղեկիցն է. փոխվում են քաղաքական, մանավանդ տնտեսական, մշակութային գործոնները, փոխվում են նաև հասարակության պահանջները հագուստի մշակույթի ասպարեզում:

Փոխվում է հագուստի ձևը, գույնը, կտորի որակը, տեսակը, զարդանախշերը, հարդարանքի միջոցները, հագուստի և նրա բաղադրիչ մասերի շատ անվանումներ այլևս չեն համապատասխանում նորաձև, նորաճ հագուստներին, և բառակազմության ներքին օրենքներով ստեղծվում են նոր հոմանիշ անվանումներ: Հին անվանումները, կորցնելով իրենց անվանողական գործառույթը, ստանում են ոճական նշանակություն: Ասպարեզից դուրս գալով՝ դրանք հաղորդակցման գործընթացին չեն մասնակցում, այլ գործածվում են որոշակի ոճերում, հատկապես գեղարվեստական գրականության մեջ՝ խոսքային համապատասխան իրադրության պայմաններում (Աղայան: 136):

Խոսելով բուն հնաբանությունների մասին՝ Լ. Եզեկյանը գրում է. «Բուն հնաբանությունները ավելի շատ գործածվում են տվյալ երկի գեղարվեստականության բարձրացման, բովանդակության ավելի պատկերավոր, արտահայտիչ և համոզիչ դարձնելու նպատակով» (Եզեկյան: 129):

Բուն հնաբանությունների (ինչպես նաև պատմաբաների) տեսական հարցերով զբաղվել են մի շարք լեզվաբաններ, բայց մեր խնդիրն է գործնականորեն ներկայացնել այն հնաբաները, որոնք լեզվի տարբեր փուլերից հասել են մեզ, և այն բառերը, որոնք այսօր՝ աշխարհաբարի փուլում, մեր աչքի առջև դարձել են կամ դառնում են հնաբաներ:

Թեև Ս. Էլոյանը տեսականորեն հիմնավորել է հնաբանությունների՝ հնաբաների և պատմաբաների առանձնացումը, այնուամենայնիվ շատ դեպքերում գործնականորեն դժվար է որոշ հնաբաներ և պատմաբաներ տարբերակել, ուստի մենք առաջնորդվել ենք ԺՀԲԲ-ի և ԱՀԲԲ-ի՝ մեզ հետաքրքրող բառերի դիմաց տրված հնգ. և պատմ. նշումներով, ինչպես

նաև մեզ ծանոթ մի շարք բուն հայերեն և փոխառյալ բառերի գործածության նվազող հաճախականությամբ:

Ըստ արդի հայերենի բացատրական բառարանների տվյալների՝ հագուստ անվանող բուն հնաբանությունները հետևյալներն են՝ **աբա** (խիտ գործված բրդյա կտորից կարված տղամարդու վերնագգեստ), **արխալուղ** (տղամարդկանց և կանանց կարճ մինչև ծնկները հասնող հագուստ), **երախ** (քահանայական զգեստ՝ պճեղավոր շապիկ), **թղլիկ** (առանց եզրերի գլխարկ, չեպչիկ, փոթիկ), **թումբան** (բամբակյա տաք շալվար, անդրավարտիք), **լակաշ** (մաշված, պատառոտված կոշիկ), **խլա** (թիկնոց, պատմուճան), **խլապեռ** (շղարշ, նուրբ քող), **մանդիլ** (գլխաշոր, վարշամակ), **մուճակ** (տնային ոտնաման, չուստ), **չափքան** (կանացի զգեստ, որ հագնում էին շապկի վրայից), **չուխա** (մահուդե նուրբ կտորից կարված երկար վերարկու), **պախճավանդ** (սեղմիրան), **պապմուճան** (թիկնոց, վերնագգեստ), **պարեզոպ** (թեթև վերնագգեստ), **պլեդ»** (տղամարդկանց ուսերին զցելու բրդյա քառակուսի կտոր), **ռեդիկյուլ** (կանացի ձեռքի պայուսակ), **ռեդենզոպ** (տղամարդկանց երկար ու լայն վերարկու), **սփածանեղի** (գոգնոց, վրան զցելու շոր), **վզկապ** (պիոնեռական փողկապ), **ուրար** (2-րդ իմաստով՝ տղամարդկանց համար որպես գոտի կամ կանանց համար որպես գլխաշոր գործածվող կտոր), **փակեղ** (եկեղեցականի վեղար, վակաս, փիլոն իմաստներով), **փեղոյր** (տղամարդու կամ կնոջ հնամաշ գլխարկ), **օդ** (տրեխ, սանդալ, ոտնաման):

Այսօր մեր աչքի առջև հնաբառեր են դարձել **գդակ**, **ժաբո**, **լակաշ** (մաշված, պատռված կոշիկ), **խանձարուր**, **կապոպ**, **կրկնակոշիկ**, **մակինոպ** (թոշ, **պրեխ** (չարոխ), ինչպես նաև զինվորական հագուստների անվանումները՝ **գրապ**, **կոմունարկա**, **մունդիր**, **ֆրենչ**:

Պատմաբառերը լեզվի ոչ գործուն, պասիվ շերտին են պատկանում: Դրանք առաջացել են լեզվի պատմության որոշակի փուլերում (գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար՝ նախախորհրդային և խորհրդային շրջաններ) հասարակական կյանքում կատարված տեղաշարժերի հետևանքով:

Պատմաբառերն իրենց գոյությամբ զգացնել են տալիս, թե լեզվի որ շրջանից են անցել աշխարհաբար, քանի որ դրանց արտահայտած առարկաները, երևույթները, հասկացությունները բնորոշ են եղել միայն լեզվական այս կամ այն փուլին: Հագուստ անվանող պատմաբառերը մեզ են հասել հիմնականում գրաբարից, քանզի գրաբարը ամենից լավ ուսումնասիրված և հայտնի լեզուն էր, երկար ժամանակ գրաբարը եղել էր գրի ու գրականության լեզու, ուսուցվող լեզու և, վերջապես, գրաբարի բառապաշարի վերաբերյալ կային մի շարք բառարաններ:

Պատմաբաները, ի տարբերություն բուն հնաբանությունների, չունեն իրենց հոմանիշ ձևերը, դրանք մի տեսակ **տերմինային** արժեք ունեն և գործածվում են հագուստի տարբեր տեսակներ (որոնք հետագա դարերում այլևս գոյություն չունեին) **անվանելու անհրաժեշտությունից** ելնելով: Խորհրդային հասարակարգի փլուզումից հետո բազմաթիվ քաղաքական, տնտեսական, մշակութային բառեր և տերմիններ դարձան պատմաբաներ: Խորհրդային դպրոցներում աշակերտները պարտադիր կրում էին կարմիր վզկապներ, իսկ բանակում կարմիր բանակայինները՝ **կոմունարկաներ** (գլխարկներ): Այսօր թե՛ **վզկապը**, թե՛ **կոմունարկան** դարձել են պատմաբաներ, որովհետև նրանց հիմքում ընկած հասկացությունները այլևս գոյություն չունեն:

Պատմաբաների գործածության ոլորտները սահմանափակ են. դրանք գերծածվում են գեղարվեստական, պատմա-գեղարվեստական և երբեմն նաև գիտական գրականության մեջ դարաշրջանին **ոճական երանգավորում** տալու նպատակով, դարաշրջանին բնորոշ միջավայր ստեղծելու միտումով, խոսքային իրադրության պահանջով, խոսքին ավելի վերամբարձություն, վեհություն տալու ցանկությամբ:

Հագուստ անվանող պատմաբաները հետևյալներն են՝ **աշխարավանդ** (թագավորական թագի ժապավեն), **ապարոշ** (գլխի փաթաթան), **արտախորակ** (խույրի կամ թագի արտաքին փաթեօց, ապարոշ), **բազկապան** (թևճակ), **բալախոն** (հին ռուսական լայն ու երկար վերնագգեստ), **գարդմանակ** (թագավորական թագի զարդ), **դիմակալ** (սաղավարտի շարժական մաս, որ հագնում էին դեմքը պաշտպանելու համար), **զանգապան** (զինվորական պաշտպանիչ հագուստի մաս), **լանջապահ**, **լանջապան**, **լանջապանակ** (լանջը պահպանող զրահ՝լանջագրահ = կրծքագրահ), **կզակալ** (սաղավարտի այն մասը, որ անց են կացնում կզակին՝կզակի տակով),**լողիկ** (թեթև վերարկու,թիկնոց), **խաչազգեստ** (վրան խաչի պատկեր ունեցող զգեստ), **խորգածորձ** (մազե **ձորձ**, մազե հագուստ), **խույր** (ակնեղենով զարդարված գլխանոց,որ կրում էին թագավորները, բարձրաստիճան իշխանավորները և կրոնավորները), **ծիրանի** (ծիրանագույն անթև զգեստ,որ հագնում էին թագավորները),**կամբակ** (փափուկ կաշվից պատրաստված թագավորական կոշիկ), **կորդակ** (գլուխը ծածկելու հարմարանք, գլխապան), **կուրտակ** (զինվորական սաղավարտի տեսակ), **ճոշան** (կրծքի զրահ, կրծապան, լանջապանակ), **սաղավարտ** (մետաղյա գլխանոց), **սրնքակալ** (սրունքները պաշտպանող հագուստ), **վարշամակ** (թաշկինակ, գլխաշոր, սրբիչ, չարսավ, պատանք), **վտավակ** (տակի զգեստ, զգեստ, վերարկու), **տառապրկ** (զինվորական

վերնազգեստ), **փակեղ** (վարշամակ, ուրար իմաստով), **քղամիդ**, **քցափ** (կրոնավորի գլխարկ), ինչպես նաև **ամազոնկա**, **խիտրոն**, **ջաբրոն**, **սուկան**, **տոգա**, **տունիկա** ևն:

Պատմաբաներն առատորեն գործածվում են պատմավեպերում, պատմական դրամաներում, պատմական թեմաներով գրված չափածո գործերում: Այս բնագավառում նրանց գործածությունը խիստ անհրաժեշտ է:

Ներկայացնենք հայ պատմավեպերից մի շարք փաստեր, որոնցում հանդես են գալիս բազմաթիվ պատմաբաներ:

Նա հազել էր պարսկական **պապրմուճան** և երկարավուն գլխարկը գլխին, ոլորուն **մաշիկները** ոտներին՝ պարսիկ պիտի կարծվեր, եթե չլինեին նրա սենյակի դարանում դրված մագաղաթի ձեռագրերը և կազմերին խաչաքանդակ արծաթե, ոսկե ավետարանները (Դ.Դ, Վ, 34):

Վարդանը մոտեցավ, հանեց **սաղավարտը** և չոքեց մոր մահիճի մոտ (ն.տ. 77):

Նա օրերով գլխից չէր վերցնում **փաթթոցագլխարկը**, որի պատճառով գլուխը թողնում էր կարկտահարված արտի տպավորություն (Տ.Մ.: 29):

Ճերմակ, հաստ սրնքակալները նա բռնագրավել էր իսպանացիներից, ներքինի երկար **տոգան**՝ հելլեններից (ն.տ., 29):

Որդան կարմրագույն շապիկի վրայից հազել էր արքայական **ծիրանին**, գլխին դրել ոսկեճանճան, ատամնավոր վարսակալ **խույրը**, ոտքերը հագրել երկար ճերմակափայլ **սրնքազգեստներ** (ն.տ., 251):

Նա հազել էր զորապետի **տունիկան**, գլխին դրել նրա **սաղավարտը** ու, ծիծաղը հազիվ զսպելով, ողջունում էր լեգեոնականներին (ն.տ.: 502):

Իսկ ինքը՝ Համասփյուռը, ցանկանում է արդյոք հենց վաղը **ապարոշ** դնել գլխին (ն.տ., 99):

Իր փառահեղ գահի վրա բազմել էր արքայից արքա Տիգրանը, նրա ձախ կողքին Տիկնանց տիկին Համասփյուռն էր, աջ կողքին՝ արքայազն Արտավազդը, հետո՝ շքեղ **քղամիդներ** հագած չորս բղեշխներ, հազարապետ Փայլակ Մարգպետունին, արքայադուստր Նուանեն, զորապետ Մոմիկը, տակառապետ Գնունին (ն.տ., 526):

Բերված նախադասություններում պատմաբաները գործածվում են տվյալ պատմական ժամանակաշրջանին բնորոշ այլ բաների և բառակապակցությունների միջավայրում: Նրանք պատմականություն են հաղորդում, ստեղծում դարաշրջանի գեղարվեստական նկարագիրը միայն այլ բաների համատեղ գործածությամբ, ինչպես՝ դարանոց, մագաղաթյա, մահիճ, հելլեն, լեգեոնական, գահ, արքայից արքա,

տիկնանց տիկին, արքայազն Արտավազդ, բդեշխ, հազարապետ, արքայամայր, որդան կարմիր ևն:

Հայոց լեզուն դեռևս նախագրային շրջանից փոխառություններին զուգընթաց կերտել է հազարավոր նոր բառեր: Այդ գործընթացը լայն թափ է ստացել գրաբարում՝ գրերի գյուտից հետո, ինչպես նաև միջին հայերենում. գրաբարի և միջին հայերենի բառացանկը ամփոփված է «Նորբառգիրք Հայկազեան լեզուի» երկհատորյակում (1836-1837)՝ 51 հազար բառով: Հետագայում այդ բառացանկը համալրվել է 5000 նոր բառերով և հրատարակվել «Առձեռն բառարան» խորագրով: Գրաբարի և միջին հայերենի բառապաշարի զգալի մասը գրանցված և ստուգաբանված է Հր.Աճառյանի ՀԱԲ-ում: Նախորդ լեզվաբաններին դեռևս անձանոթ, անհայտ նոր բառեր են հանդիպում Ռ.Ղազարյանի և Հ.Ավետիսյանի կազմած «Միջին հայերենի բառարանում»:

Աշխարհաբարի նորաբանություններից 3000-ը գրանցվել են Ստ. Մալխայանցի «Հայերեն բացատրական բառարանում» (հհ. 1-4, Ե, 1944-1945):

Ի դեպ, աշխարհաբարի նորաբանություններին անդրադարձել է նաև Հր.Աճառյանը: ՀԱԲ-ում նա հիշատակում է մի շարք արմատներով կազմված նորաբանություններ: Հարյուրավոր նոր բառեր են արձանագրված ԺՀԲԲ-ում (հ. 1-4, Եր.: 1969-1980) և Էդ.Աղայանի ԱՀԲԲ-ում (մաս 1-2, Եր.: 1976):

Վերոհիշյալ բառարաններում գրանցված են հագուստի տարբեր տեսակները և դրանց բաղադրիչ մասերը անվանող բազմաթիվ նորաբանություններ, որոնց առաջացումը պայմանավորված է եղել հասարակական-քաղաքական, տնտեսական, առևտրական, առօրյա-կենցաղային կյանքում տեղի ունեցած փոփոխություններն անվանելու անհրաժեշտությամբ, ինչպես նաև բազմաթիվ օտար բառերի հայերեն համարժեքները ստեղծելու հրամայականով: Այդ բառերը իրենց կառուցվածքային կաղապարներով, կենսունակությամբ, բարեհնչությամբ, իմաստների տարողունակությամբ համապատասխանում են հասարակության պահանջներին, այդ պատճառով վերարտադրվել են, դարձել համագործածական բառեր, անցել համալեզվական բառերի շարքը և գրանցվել բառարաններում:

Այսօր դրանք այլևս նորաբանություններ չեն, ինչպես՝ եզրաժապավեն, կոշկաքիթ, **կոշկատակ, պսակաքող, քողազգեստ, գոտկատակ, գուլպաթել, օձիքածալ, ականջակալ, ուսաթել, կիսազգեստ, ուսածոպ, շրջազգեստ, շքատարազ, կիսաշապիկ, նավազաշապիկ, լողագոտի, կրկնակոշիկ, մարզահագուստ, մարզազգեստ, լողազգեստ, սուզահագուստ, ուսադիր, ենթաօձիք** ևն:

Էդ.Աղայանի ԱՀԲԲ-ի հրատարակումից անցել է մոտ 47 տարի: Այդ տարիների ընթացքում ստեղծվել են հազուստ անվանող նորանոր բառեր, բառակապակցություններ, որոնց մի մասը ընդգրկված է Ֆ.Խլղայանի «Նոր բառեր և իմաստներ բառարան-տեղեկատուում» (Ե.: 1982), մի մասը՝ Փ.Մեյթիխանյանի «Նոր բառերի բացատրական բառարանում» (Ե.: 1996), իսկ մի շարք բառեր էլ Ս.Էլոյանի «Արդի հայերենի նորաբանությունների բառարանում» (Ե.: 2001):

Փ.Մեյթիխանյանի բառարանում ամփոփված հազուստ անվանող նորաբանությունները հիմնականում վերաբերում են մարզական կյանքին: Այդ բառերը, բացի **մարզագգեստ, մարզահագուստ, լողագգեստ** բարդություններից, որոնք արդեն իսկ գրանցված էին Էդ.Աղայանի ԱՀԲԲ-ում, հետևյալներն են՝ **մարզակոշիկ, խաղակոշիկ, սեպակոշիկ, (վազքակոշիկ), լողագլխարկ, մարզաշապիկ, մարզահանդերձ, ինչպես նաև զսպաշապիկ:**

Ս.Էլոյանն այս ցանկին ավելացրել է հազուստի անվանումներով կազմված այլ դաշտի իմաստ արտահայտող բառաբաղադրություններ, ինչպես՝ **զգեստանկարիչ, զգեստատիպ, ժամագոտի, կապագիծ, կապաշար, պսակառատ** ևն:

Հազուստ անվանող նորակազմությունների գործածության հիմնական ոլորտը հատկապես գեղարվեստական խոսքն է և այն խոսքերը, որոնք հիմնականում սահմանափակվում են նորմայի շրջանակներում: Եթե բուն նորաբանությունների առաջացումը պայմանավորված է լեզվում զգացվող բառերի պակասը լրացնելու և նոր առարկաներն ու հասկացությունները անվանելու անհրաժեշտությամբ, ապա անհատական նորաբանությունների երևան գալը պայմանավորված է խոսքային իրադրությամբ: Անհատական նորակազմություններն իմաստ են արտահայտում խոսքային միջավայրում, խոսքից դուրս նրանց իմաստները հաճախ անհասկանալի են, որովհետև այդ բառերն իմաստավորվում են գրողի կողմից ստեղծած համատեքստում: Բացի դրանից՝ նրանց ճնշող մեծամասնությունն ունի փոխաբերական իմաստ, որը բացահայտվում է մյուս բառերի իմաստների փոխադարձ կապի միջոցով: Ունենալով ոճական արժեք՝ նրանք հակված չեն վերածվելու լեզվական իրողության, մնում են խոսքային միջավայրում և մեծ մասամբ հասարակական ճանաչման չեն արժանանում:

Այնուամենայնիվ, անհատական նորաբանությունները որոշակի խոսքաշարում մեծ դեր են խաղում համապատասխան մտքի ձևավորման գործում, և, որ ամենակարևորն է, նրանց միջոցով խոսքը դառնում է առավել պատկերավոր, թարմ, սեղմ ու ինքնատիպ:

Գեղարվեստական խոսքի գեղագիտական մակարդակը բարձրացնելու գործում մեծ դեր են խաղացել այդ ասպարեզի մեծ երախտավորներ Րաֆֆին, Հովհ. Թումանյանը, Ավ.Իսահակյանը, Վ.Տերյանը, Ե.Չարենցը, Հովհ.Շիրազը, Պ.Սևակը, Հ.Հովհաննիսյանը, Վ.Դավթյանը, Հ.Սահյանը, Ս.Կապուտիկյանը և այլք:

Ավ.Իսահակյանի երազած ազատ, ներդաշնակ հասարակությունը **լուսազգեստ** է, Վ.Տերյանը աշնան գեղարվեստական պատկերը վրձնում է **ոսկեհանդերձ** բարդությանը, Հ.Հովհաննիսյանի նկարագրած լեռները ծածկված են **աստղաքողով**, իսկ ըստ Ռ.Դավոյանի մարդու երջանկությունը արտահայտվում է **ծաղկազգեստ** նորաբանությամբ: Վ.Դավթյանի երազած գեղեցկուհին **կապտաշղարշ** է, , ճերմակազգեստ մաքուր ու անբիծ:

Հոգեկան բարձր լարվածությունն ու շիկացումները լեզվական սովորական միջոցներով արտահայտելը թուլացնում է գեղարվեստական խոսքի ուժը, ուստի Ե.Չարենցը դիմում է թարմ, ինքնատիպ նորաբանությունների, որոնք նպաստում են խոսքի արտահայտչականության ուժեղացմանը: Այսպես՝ **կարմրազգեստ** ածականը, որը ուղիղ իմաստով կարող է դրական հույզեր առաջացնել, անմիջապես իմաստային այլ որակ է ստանում Ե.Չարենցի հզոր գրչի տակ փոխաբերաբար գործածվելիս և խորհրդանշում է «**կարմրազգեստ ֆիլիստերին**»՝ մեծ պոետի մշտարթուն դահճին, որը իր թույնն է թորում հանճարի վրա:

Անհուն վիշտը կրծում է ընթերցողի հոգին, անսահման վիրավորանքը խեղդում է կոկորդը, արցունքներ են գլորվում նրա այտերի վրայով, երբ ըմբռնում է **կնատարազ** նորաբանության սևակյան իմաստը («Անլուելի զանգակատուն» պոեմից):

Այդ ե՛րբ էր հայ տղամարդը կորցրել իր դեմքն ու դիմագիծը, հագել կնոջ զգեստ: Եղեռնի սահմուկեցուցիչ պատկերները, մի ողջ ժողովրդի բնաջնջումը, տղամարդկանց սրածումը, մոր և մանկան մորթուովելը խուճապ ու շփոթ են առաջացնում, ծնկի բերում հայ տղամարդուն: Նրան սպառնում է ոչ միայն ֆիզիկական ոչնչացումը, այլև նա բարոյական կորուստներ է կրում: Ահա թե ինչու **մահախուճապ** և **կնատարազ** նա փախչում է յաթաղանից՝ ընդմիշտ թողնելով իր հայրենի բնօրրանը:

Եղեռնի քստմնելի տեսարանները գերլարվածությամբ և անհուն վշտով ներկայացնելիս Հովհ.Շիրազը ստեղծել է բազմաթիվ նորաբանություններ, բայց առավել սահմուկեցուցիչը, որով արտահայտվում է հայրենի հողի կորուստը և հնագույն ազգի երկու միլիոն զավակների կործանումը, **մահաշուրջառ** նորաբանությունն է.

Ո՞նց եք ողջ ազգիս պատանքը կարել

Անապատներով այն **մահաշուրջառ** (Հ.Դ: 1990, 111):

Հագուստ անվանող բառերի իմաստային դաշտում իրենց ուրույն տեղն ունեն նոր և նորագույն փոխառությունները, որոնք կապված են աշխարհաբարի կազմավորման, ձևավորման և հետագա կատարելագործման փուլերին: Այս փոխառությունների տարբերակման ճշգրիտ ժամանակաշրջանը որոշ դեպքերում դժվար է սահմանազատել, որովհետև չկան յուրաքանչյուր ենթաշրջանի համար համապատասխան բառարաններ և ոչ էլ մի շարք գրողների ստեղծագործությունների համաբարբառներ, որոնցով հնարավոր լինել էր որոշել տվյալ փոխառության ճշգրիտ ժամանակաշրջանը: Այնուամենայնիվ, մենք նպատակահարմար համարեցինք մինչև նոր տնտեսակարգը՝ (մինչև XX դարի 90-ական թվականները) կատարված փոխառությունները կոչել նոր, իսկ դրանից հետո կատարվածները՝ նորագույն: Եվրոպական, ռուսական փոխառությունների առկայությունը պայմանավորված է եղել Եվրոպայի և Ռուսաստանի հասարակական-քաղաքական, տնտեսական, գիտական, մշակութային կյանքին հայերի հաղորդակից լինելով:

Աշխարհաբարի բոլոր փուլերում շարունակվել և այսօր էլ շարունակվում են բազմաթիվ բառերի և տերմինների փոխառությունները, որոնք կատարվել և կատարվում են և՛ **անմիջաբար**, և **միջնորդավորված** կերպով (հատկապես ռուսերենի միջնորդությամբ):

Արևելահայերենի զարգացման և հատկապես **բառապաշարի** հարստացման գործում հսկայական դեր է խաղացել **ռուսաց լեզուն**:

Սկսած XVII-XVIII դարերից հայ-ռուսական հարաբերությունները աշխուժանում են, իսկ ռուս-պարսկական պատերազմից հետո և հատկապես Հայաստանի խորհրդայնացման շրջանում սերտանում. հայերը անմիջականորեն հաղորդակցվում են ռուսերենին և նրա միջոցով՝ համաշխարհային արժեքներին:

Հայ-ռուսական հարաբերությունների հետևանքով աշխարհաբարի տարբեր փուլերում հայերենին են անցել մի շարք հագուստների ռուսական անվանումները ,որոնց մի մասը գործածվել է ռուսերենի խոսակցական լեզվում, ինչպես՝ **բերեպ, դուբյունկա, զապինկա, կոֆտա, կուրտկա, կուպալնիկ, մայկա, շապկա, շյապա, պիլոտկա, պոդյաժկա, պրյաժկա, պլավկի, պլաշչ, սարաֆան, սապոգ, վալենկա, վադալազկա, փուֆլի, ուշանկա** ևն: Համեմատաբար նոր են ռուսական **վեպրովկա** (կարճ, բարակ բաճկոն), **դվոյկա, փրոյկա** փոխառությունները:

Նշված փոխառությունների մեծ մասը գործածական է ինչպես ռուսերենի խոսակցական լեզվում, այնպես էլ փոխառյալ լեզվում՝ հայերենում: Դրանց մեծ մասը չի անցել հայերեն գրական լեզվին:

Մի շարք հագուստի անվանումներ թեև իրենց հիմքում չունեն ռուսական արմատներ, սակայն դրանք՝ իբրև բառեր, ձևավորվել են ռուսերենի բառակազմությանը համապատասխան՝ **ka** ածանցով և անցել են հայերենին իբրև ռուսական փոխառություններ, այսպես՝ **կեպկա** (կեպի) (ֆր. kep)՝ տղամարդու հովարավոր գլխարկ, **կոմունարկա** (ֆր. commun)՝ զինվորականի սրածայր գլխարկ, որ կրում էին կարմիրբանակայիները, **տուժուրկա** (ֆր. toujours)՝ մշտապես, կնոջ կամ տղամարդու ամենօրյա կուրտկա, **ֆայկա** (ֆր. failie կտորի անունից)՝ մետաքսյա գործովի բարակ շապիկ, **ֆուֆայկա** (գործովի տաք շապիկ), **ֆուտբոլկա** (անգլ. football)՝ տրիկոտաժե մարզական շապիկ ևն:

Ռուսերենի միջնորդությամբ կատարվել են եվրոպական բազմաթիվ փոխառություններ, բայց համեմատաբար շատ են հայերենին անցած **ֆրանսիական փոխառությունները**, ինչպես՝ **բանտաժ, բլուզ, գալիֆե, ժարո, ժիլետ, լամպաս, լիվրեյ, կաշնե, կապիշոն, կապուր, կոմբինացիա (շապիկ), կոմբինեզոն, կոստյում, կորսաժ, կորսետ, մանթո, մանժետ, մունդիր, շարֆ, պալտո, պանամա, սերթուկ, փյուլ, փրիկո, ֆրակ** ևն:

Անգլիական փոխառություններ բրիջի, ժակետ, հոլիդեյ, մոկասի (անցել է ամերիկյան անգլերենից), **պիժամա** (ուրդու լեզվից անգլերենի միջոցով), **պիջակ, պլեդ, պուլովեր, ջեմպեր, սմոքինգ, ֆրենչ** ևն:

Գերմանական փոխառություններ՝ **բուշլապ, կիպել, շլեյֆ, շնուր, ցեպ, հունական** փոխառություններ՝ **պարիկ, սանդալ, սկաֆանդր:**

Լատինական փոխառություններ՝ **սոլ, ֆորմա:**

Հոլանդական փոխառություններ՝ **կարտուզ, մապրոսկա:**

Իտալական փոխառություններ՝ **պանչո, ֆիգարո:**

Վերջին ժամանակներս հայերենում աշխուժացել են ամերիկյան անգլերենով հնչվող փոխառությունները: Հայաստանում բացված անգլիական դպրոցները, անգլիական երաժշտությունը, կինոնկարները, հատկապես նորաձև հագուստների առքուվաճառքը թելադրում են հագուստ անվանող անգլիական բառերի մուտքը հայերենի բառապաշար, ինչպես՝ **գլխարկ-գլխանոցներ՝ բեսբոլ, կասկա** (սաղավարտ-գլխարկ, մետաղյա գլխարկ), **բանդանա** (գլխանոց՝ եռանկյունաձև, գլխի հետևում կապվող), **դոփինգ** (do pe'ng) (գլխանոց), վարտիքներ՝ **շորտիկ** (կարճ), **բրիջի** (միջին), **կապրի** (մինչև կոճերը), կիսաշրջազգեստներ՝ **մինի, միդի, մաքսի**, գուլպա՝ **գամաս** (մատներով կիսագուլպա), կոշիկ՝ **ուզգի** (երկարաճիտ) ևն:

Ինչպիսի՞ ճակատագիր ունեցան նոր փոխառությունները լեզվի հետագա զարգացման ընթացքում, ինչպիսի՞ն կլինեն դեռևս

չթարգմանված փոխառությունների և գրական համագործածական բառերի փոխհարաբերությունները:

Հայտնի է, որ դեռևս 1912 թվականին գրած «Հայ գրականության գալիք օրը» հոդվածում Վ.Տերյանը այն միտքն էր զարգացնում, որ 20-րդ դարի սկզբներին Եվրոպայում սկսվել էր մեծ հեղաշրջում տնտեսական ու մշակութային կյանքում, մարդկանց մտածողության ու զգացմունքի, ինչպես նաև արտաքին ձևերի՝ հագուստների մեջ: Որպեսզի հայ ժողովուրդը մտնի եվրոպական ընտանիք, նա պետք է յուրացնի եվրոպական արժեքները, մշակույթը, ընդունի նրանց լեզվական որոշ ձևեր, նոր օտար բառեր:

Այս կապակցությամբ բանաստեղծը քննադատում է Մխիթարյանների և արևմտահայերի լեզվաշինական գործունեությունը, ըստ որի՝ յուրաքանչյուր օտար բառ թարգմանվում էր հայերեն: Մի քանի օտար բառերի շարքում Վ.Տերյանը հիշատակում է **գալոշ** և **պալլոռ** բառերի հայերեն թարգմանությունները՝ **կրկնակոշիկ** և **վերարկու**: Ըստ նրա՝ օտար բառերը՝ **գալոշ** և **պալլոռ**, ավելի բարեհունչ են, ավելի դյուրըմբռնելի, քան հայերենի ձևերը, որոնք իբր թե անկենդան են, շինծու, անհասկանալի և մեր լեզուն դարձնում են դժվար յուրացվող, իսկ այն լեզուն է հաղթում, որն ավելի հեշտ է յուրացվում և ավելի պարզ է (Տերյան 1956: 523):

Վ.Տերյանի և նրա հետևորդների լեզվամշակման տեսությունը հետագայում ծայրահեղացվեց և իր բացասական ազդեցությունը թողեց լեզվի, մասնավորապես բառապաշարի զարգացման վրա: Ահա թե ինչու օտար բառերը է՛լ ավելի աշխուժացան XX դարի 20-ական թվականներից մինչև 50-ական թվականները:

Բանն այնտեղ հասավ, որ սկսեցին գործածվել անհարկի, ոչ տեղին փոխառություններ, որոնք ոչ թե նպաստեցին հայոց լեզվի զարգացմանը, այլ աղավաղեցին այն:

XX դարի 50-60-ական թվականներից՝ ազգային զարթոնքի ժամանակաշրջանում, սահմանափակվեց փոխառությունների մուտքը, ավելին՝ միտում առաջացավ օտար բառերը փոխարինել հայերեն համարժեքներով կամ դրանց զուգահեռ գործածել լեզվում արդեն իսկ առկա հայեցի ձևերը:

Հայոց լեզուն իր բառակազմական անսպառ հնարավորություններով՝ ածանցման և բառաբարդման ճանապարհով, լայն հնարավորություններ է տվել կազմելու հագուստի տարբեր տեսակների և նրանց առանձին բաղադրիչների անվանումներ, անհրաժեշտության դեպքում օտար բառերի համարժեքները վերցրել են գրաբարից կամ դիմել են արևմտահայերենի օգնությանը:

Ներկայացնենք հագուստ անվանող այն փոխառյալ բառերը, որոնք հայերենում ունեն իրենց համարժեքները. **բանտաժ-իրանակալ, բոսանոժկա-բոկոտիկ, բրյուկ-տաբատ, գալստուկ-փողկապ, էպոլետ-ուսադիր, լամպաս-ջրափոկ, լիֆ-կրծկալ, կալգոտկի-զուգագուլպա, կալոշ (գալոշ)-կրկնակոշիկ, կաշնե-վզարկու, կոմբինացիաներքնաշապիկ, կորսեթ-սեղմիրան, կորսաժ-իրանակալ, մանժետ-թեզանիք, մառյա-թանգիվ(\$), յուբկա-կիսաշրջազգեստ, նասկի-կիսագուլպա, շապկա-գլխարկ, շարֆ-վզնոց, վզկապ, շլեյֆ-քղանցքատուտ, շնուր-քուղ, պալտո-վերարկու, պետյա-մերակ (լամբակ), պիջակ-բաճկոն, պոդոյաժկա-գուլպայակալ, շավարակալ, պլավկի-լողազգեստ, պլաշ-թիկնոց, պոդվազկա-գուլպայակապ, պրյաժկա - զապոնկա - ճարմանդ, չափրաստ, պոդոյաժկա-շավարակապ, սկաֆանդր-ջրազգեստ, վալենկա - կաճյակ, վոդոլազկա - սուզազգեստ, տյուլ-շղարշ, տրուսիկ-ներքնավարտիք, ֆարտուկ-գոգնոց, ֆորմա-համա-զգեստ, ֆրակ-պոչազգեստ** ևն:

Ինչպես նկատելի է, հայերեն համարժեքները, թեև իրենց հնչյունակազմով երկար են, այնուամենայնիվ դյուրահունչ են, համապատասխանում են օտար բառերի իմաստին, ծավալով ծածկում են նրանց, հասարակության կողմից ընդունվել են և արձանագրված են բառարաններում: Ինչ խոսք, կան նաև անհաջող թարգմանություններ, ինչպես՝ պոչազգեստ (ֆրակ), նավագազգեստ (մատրոսկա) ևն:

Կան փոխառություններ էլ, որոնք, իրենց գործառույթով լինելով ազգային ձևերին հոմանիշ, նրանց մասնավոր տեսակն են անվանում՝ դրսևորելով հագուստի ձևի, որակի, երբեմն նաև կիրառական տարբերությունները: Այդ իսկ պատճառով այդ փոխառությունները ընդունվել են հասարակության կողմից, հայեցի ձևերին զուգահեռ գործածվում են: Այսպես՝ հայերենում կա **շապիկ** հնագույն փոխառությունը, բայց աշխարհաբարում կենցաղի մեջ մուտք գործեցին **մայկա, ֆայկա, ֆուֆայկա** հագուստի անվանումները: Շապիկ-ը իր իմաստի տարողունակությամբ, ծավալով չի համընկնում վերոհիշյալ փոխառությունների իմաստներին: Վերջիններս ինչ-որ չափով կատարում են շապիկ բառի գործառույթը, սակայն նրանից տարբերվում են ձևով, գործվածքի որակով և կիրառության ոլորտով: Այդ պատճառով էլ նշված օտար բառերը դեռևս թարգմանված չեն, բայց դասվել են համագործածական բառերի շարքը:

Նույն հիմունքով էլ հայոց լեզվում շարունակում են գործածվել **գլխարկ, կոշիկ** և ուրիշ շատ բառերի հոմանիշ փոխառությունները, որոնց իմաստները բառարանագիրները բացատրում են **նկարագրական**

եղանակով՝ նշելով դրանց ձևը, գործվածքը, գույնը, երբեմն նաև ազգային պատկանելությունը ևն:

Նախ ասենք, որ **գլխարկ** բառին համարժեք է ռուս. շապկան, որի տարբեր տեսակները հետևյալներն են՝ **բերեպ** (առանց հովարի փափուկ գլխարկ՝ մահուդից կամ կաշվից), **կարպուզ** (տղամարդու հովարավոր գլխարկ), **կեպի, կեպկա** (տղամարդու հովարավոր գլխարկ), **կոմունարկա** (տղամարդու զինվորական գլխարկ, որը կրում էին կարմիրբանակայինները), **շլապա** (կանանց կամ տղամարդու ծալովի գլխարկ՝ սովորաբար բարձր գագաթամասով), **պանամա** (ծղոտե լայնեզր գլխարկ), **պիլոտկա** (զինվորական, մասնավորապես օդաչուների ամառային գլխարկ), **ցիլինդր** (տղամարդու լայնեզր, գլանաձև գլխարկ), **ուշանկա** (ականջակալներով գլխարկ) ևն:

Ինչպես **գլխարկ**-ի առանձին տեսակները, որոնք չունեն իրենց հայեցի անվանումները, այնպես էլ մի շարք փոխառություններ հայերենում դեռևս չունեն իրենց համարժեքները, սակայն դարձել են հայոց լեզվի բաղադրիչը, գրանցված են բառարաններում, իսկ իմաստները բացատրված են նկարագրական եղանակով: Իհարկե, սա չի նշանակում, թե այդ բառերն անթարգմանելի են: Այսպես, **բալախոն** (հին ռուսական գյուղացիների լայն ու երկար վերնազգեստ), **բլուզկա** (տղամարդու կարճ և լայն վերնաշապիկ), **բուշլապ** (նավաստու մահուդե վերնազգեստ), **բրիջի** (կարճ տաբատ), **գրադ** (զինվորական վերարկու), **դուբլյոնկա** (կաշվից կարված վերարկու, վերնազգեստ), **ժաբո** (ժանեկազարդ ժանյակի զարդ տղամարդու շապկի օձիքին և կրծքին 18-րդ դարում, իսկ այժմ կանանց վերնաշապիկի կամ զգեստի վրա), **ժակեպ** (կանացի կարճ վերնազգեստ), **ժիլեպ** (տղամարդու կարճ հագուստ՝ առանց օձիքի և թևքերի, որը հագնում են պիջակի տակից), **լիվրեյ** (բարապանների՝ սպասյակների և կառապանների շքազգեստ) **կապիշոն** (հետ գցովի գլխարկ՝ միացած վերնազգեստին, կնգուդ), **կապուր** (կանացի տնային զգեստ), **կիպրել** (զինվորական կամ քաղաքացիական լանջերը բաց բաճկոն), **կոմբինեզոն** (օդաչուների, տանկիստների շապիկ ու վարտիքը միասին կարված), **կոսպյում** (տղամարդու պիջակ և տաբատ, կանանց ժակետ և շրջազգեստ. կոմպլեկտ), **կոֆրա** (կանացի կարճ, սովորաբար մինչև գոտկատեղը հասնող վերնազգեստ), **կուրտկա** (տղամարդու կարճ վերնազգեստ), **հոլիդեյ** (լայնացող փողքերով տաբատ), **մանթո** (կանացի լայն վերարկու, առավելաբար մորթուց), **մոկասի** (հյուսիսամերիկյան հնդկացիների կաշվի փափուկ ոտնաման), **մունդիր** (զինվորական կամ քաղաքացիական հատուկ ձևի համազգեստ), **շինել** (զինվորական տաք, երկար վերարկու), **պուլովեր** (տղամարդու անօձիք և անթև բամբակե ֆուֆայկա), **պանչո, պենուար**

(կանացի առավուտվա զգեստ), **ջեմպեր** (առանց օձիքի և առանց կոճակի հյուսված շապիկ), **սերթուկ** (տղամարդու երկար, նեղ իրանով երկլանջ եզրով վերնազգեստ), **սմոքինգ** (բառացի՝ ծխելու բաճկոն, սև բաճկոնի տեսակ հանդիսությունների համար), **փոպիկ** (կանանց կարճ կամ երկար թևքերով վերնազգեստ, գոտկատեղից բարձր), **փրիկո** (բեմական կամ սպորտային կոստյում, որ ամուր գրկում է մարմինը), **փուֆլի** (անճիտք կոշիկ), **ֆարփինգե** (կնոջ յուբկայի տակից դրվող կարկաս կազմվածքին փարթամ տեսք տալու համար), **ֆրակ** (տղամարդու սերթուկի մի տեսակ՝ առջևից կարճ ու երկլանջեզրով, իսկ հետևից երկար միջահատված տուտով. հագնում են հանդիսությունների ժամանակ, պոչազգեստ), **ֆրենչ** (զինվորական քառագրպան կարճ բաճկոն), **ֆուպրոկա** (տրիկոտաժի մարզական շապիկ), **ֆուֆայկա** (գործովի տաք շապիկ):

Անթարգմանելի են փաստորեն տարբեր ժողովուրդներին բնորոշ ազգային տարազների անունները, ինչպես՝ ամազոնկա (ամազոնուհիների), **սարի** (հինդի՝ կանանց հագուստի հատուկ տեսակ՝ 5-7 մ երկարությամբ գործվածք, որ փաթաթվում է մարմնին, իսկ ծայրը անցկացվում է ուսից այն կողմ կամ զցվում է գլխի վրա), կիմանո, յապոնկա (ճապոնացի կանանց), **պանամա** (Պանամայի Հանրապետության անունից):

Որոշ հագուստի անվանումներ կապված են լավ կամ վատ գործերով հայտնի անձանց անվան հետ, ինչպես՝ **բարձովկա** (ռուս. борец армяտից)՝ հաստ կտորից կամ կաշվից, ռետինե ներբանով կոշիկ, հիմնականում մարզական, **գալիֆե** (ֆրանսիացի հեծելազորային գեներալ Galliffette-ի անվամբ, որը հայտնի է իր դաժանությամբ փարիզյան կոմունարների նկատմամբ 1871թ.)՝ անդրավարտիք՝ մինչև ծնկները նեղ փողքերով և դեպի կողքերը լայնացող մասով, **մակինտ(թ)ոշ** (շոտլանդացի քիմիկոս Մակինտ(թ)ոշի անվամբ)՝ անջրաթափանցիկ վերարկու, **ֆիգարո** (իտ. գրական և օպերային («Ֆիգարոյի ամուսնությունը») ժանրի կերպար)՝ անթև, գոտկատեղից մի փոքր բարձրացող հագուստ, ժիլետ, **ֆրենչ** (անգլիացի ֆելդմարշալ Ֆրենչի անվամբ)՝ զինվորական քառագրպան կարճ բաճկոն:

Եթե փոխառությունը թարգմանվում է հայերեն, ապա օտար ձևի գործածությունը այլևս խրախուսելի չէ, այն դառնում է օտարաբանություն: Օտար բառերը իրենց հնչյունակազմով, տառակազմով, հատուկ վերջավորությամբ իրենց զգացնել են տալիս: Այդ են վկայում վերոհիշյալ բոլոր փոխառությունները, որոնք չունեն իրենց հոմանիշ համարժեքները հայերենում, սակայն դրանք ժամանակի ընթացքում կարող են ձուլվել ազգային ձևերին և դառնալ հայոց լեզվի բաղադրիչը:

Կյանքը զարգանում է, ստեղծվում են հագուստի նորանոր տեսակներ և, բնականաբար, դրանք անվանող բառեր, օտար լեզուներից կատարվում են բազմաթիվ փոխառություններ, իսկ հնաբառերը և պատմաբառերը հավերժ կապրեն մեր լեզվի ոչ գործուն բառապաշարում՝ կիրառություն ստանալով միայն գեղարվեստական գրականության մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր. 1976:
2. Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր. 1984:
3. Եզեկյան Լ., Ոճագիտություն, Եր., 2003:
4. Էլոյան Ս. Ժամանակակից հայերենի բառային ոճագիտություն, Եր., 1989:
5. Ղազարյան Ռ. Ս., Ավետիսյան Հ. Մ.. Միջին հայերենի բառարան. հ. I, Երևան, 1987, հ. II, 1992:
6. Ջահուկյան Գ., Աղայան Էդ., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, I մաս, Ա պրակ., Եր., 1980:
7. Սուքիասյան Ա., Ժամանակակից Հայոց լեզու, Եր., 1982:

REFERENCES

1. Aghayan Ed. Ardi hayeren bacatrakan bararan, Er., 1976:
2. Aghayan Ed., Yndhanur ev haykakan baragitutyun, Er. 1984:
3. Eezekyan S., Vochagitutyun, Yr. 2003:
4. Eloyan S. Jamanakacic hajereni barajin vochagitutyun, Er. 1989:
5. Ghazaryan R., Avetisyan H. Mijin hayereni bararan, h .I , Er.1987, h. II, Yr. 1992
6. Jahukyan G., Aghayan E., Arakelyan V., Qosyan V., Hayoc lezu, I, mas, A, prak., Er. 1980
7. Sukiasyan A. Jamanakacic hajoc lezu, Er, 1982:

РЕБЕКА МАРГАРЯН - АРХАИЗМЫ, НЕОЛОГИЗМЫ И ЗАИМСТВОВАНИЯ В СМЫСЛОВОМ ПОЛЕ СЛОВ, НАЗЫВАЮЩИХ ОДЕЖДУ

Ключевые слова: словарный запас, архаизмы, исторически образованные слова, одежда, неологизмы, авторские новообразования, заимствованные слова, культура одежды

Армянский язык имеет очень богатый словарный запас. Частью этого словарного запаса являются слова, называющие одежду. В этой статье мы представляем архаизмы, заимствованные слова и неологизмы смыслового поля слов, называющих одежду.

REBEKA MARGARYAN - ARCHAISMS, NEOLOGISMS, BORROWINGS IN THE SEMANTIC FIELD OF WORDS DENOTING CLOTHES

Keywords: *lexicon, archaisms, historical words, clothes, neologisms, author's new formation, loanwords/borrowing, clothes culture*

The Armenian language has rich lexicon. The part of that lexicon is comprised of words naming clothes. In this article we present archaisms, neologisms and loanwords/borrowing in the semantic field of words denoting clothes.

Ներկայացվել է՝ 20.01.2021
Գրախոսվել է՝ 20.01.2021

**ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ
ՁԱՅՆԱՀՆՉՅՈՒՆԱՅԻՆ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ**

**ՍՎԵՏԼԱՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ԱԼԻՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Հիմնաբառեր՝ բժշկագիտություն, փոխաբերություն, ձայնահնչյունային փոխաբերություն, հիվանդություն, կլինիկական հետազոտություն, բախում, խում, ախտորոշում

Սույն հոդվածում անդրադառնում ենք փոխաբերության հենքով ստեղծված այդպիսի միավորների քննությանը: Մասնավորապես, քննարկվում է ձայնահնչյունային բաղադրիչներով որոշարկված փոխաբերական միավորների մի խումբ, որոնք գործածվում են առավելապես ախտորոշումների կայացման գործընթացում:

Հետազոտության արդիականությունը և կարևորությունը պայմանավորված է բժշկագիտության անգլալեզու տեքստերում փոխաբերության գործածության վերաբերման և զարգացման միտումներով: Հոդվածի հիմնական նպատակն է վեր հանել ձայնահնչյունային բաղադրիչներով որոշարկված և ախտորոշումների կայացման գործընթացում կիրառվող փոխաբերական միավորները, որոնք ընտրվել են ներքին հիվանդությունների ոլորտի՝ «Harrison's Principles of Internal Medicine» մասնագիտական գրականությունից, Stedmans Online Medical Dictionary բժշկական շտեմարանից, ինչպես նաև բժշկագիտական հոդվածանյութերից և կլինիկական դեպքերի նկարագրություններից, որոնք հրապարակված են մասնագիտական՝ «National Library of Medicine», «National Center for Biotechnology Information», «Mayo Clinic» և մի շարք այլ հեղինակավոր բժշկագիտական աղանց կայքերում:

Բժշկագիտության ոլորտում և կլինիկական գործունեության շրջանակում, ի թիվս բազմաթիվ այլ հանգամանքների, էապես կարևոր է ժամանակի գործոնը: Ժամանակը կարող է բեկումնային լինել բժշկական տեղեկատվության տրամադրման, բժշկական բազմաբնույթ ծառայությունների մատուցման և կլինիկական հետազոտությունների կատարման տեսանկյունից: Մասնավորապես, բժշկական

տեղեկատվության փաստով պայմանավորված՝ բժիշկներն ու կլինիցիստները, ըստ անհրաժեշտության, շրջանցում են երկարաշունչ մասնագիտական սահմանումները՝ փորձելով խտացնել բժշկագիտական և կլինիկական տեղեկատվությունն այնպես, որ բովանդակային լիցքը կորուստ չկրի և տնտեսի այդ տեղեկույթի ըմբռնման համար տրամադրվող ժամանակահատվածը: Սա կատարվում է հատկապես հիվանդությունների ախտորոշման գործընթացում, երբ ժամանակային գործոնը խիստ կարևոր է հիվանդության կանխարգելման և համապատասխան բուժում և բուժական միջամտություններ պլանավորելու համատեքստում: Նման դեպքերում, հունալատինահիմք կամ այլ լեզվահիմքով տերմինների և տերմինակերպ միավորների գործածությանը զուգահեռ, օգտագործում են նաև փոխաբերական միավորներ, որոնք վերարտադրում են կլինիկական նշանների, հիվանդության նախանշանների կամ առողջական որևէ խնդրի հիմնական բնութագրիչները՝ թելադրված լեզվական խտացման և ժամանակի տնտեսման հրամայականով:

Նախքան փոխաբերական միավորներին անդրադարձ կատարելը՝ հարկ է նշել, որ փոխաբերության վերաբերյալ տեսագործական քննարկումները բազմիցս ուղեկցվել են բանավեճերով՝ մերթ որակելով այն որպես բանաստեղծական խոսքարվեստի հնար, մերթ՝ ճանաչողական գործառույթներով լեզվագործիք: 19-րդ դարից ի վեր փոխաբերությունը դիտարկվում է առավելապես աշխարհընկալման «արվեստի» և գիտությանը «սերտաճած» արտահայտչամիջոցների տիրույթում (Black 1962; Gibbs 1994; Kirby 1997; Kittay 1987; Lakoff, Johnson 2003; Richards 1936): Ավելին՝ հիմնավորվում է այն գաղափարը, որ փոխաբերությունն արմատացած է մարդու մտածողության մեջ և տեսաբանը կամ հետազոտող-գիտնականը, անձանոթ իրողության նկարագրության նպատակով, թերևս չի էլ մտորում փոխաբերություն գործածելու շուրջ, քանի որ *«մեզ տրված չէ ընտրություն կատարել այս գործընթացը գործարկելու կամ չգործարկելու մեջ...: այն ամրագրված է մտքերում և գործողություններում...»* (Snodgrass, Coyne 1991: 13): Փաստացի՝ փոխաբերությունը սոսկ խոսքի ձև չէ, այլ առավելապես մտածողության ձև՝ օժտված իմացաբանական գործառույթներով (Gibbs 1994): Գիտական մի շարք հետազոտություններ, որոշակի փորձարարական տվյալների և բանաձևերի միջոցով, հիմնավորում են այն գաղափարը, որ փոխաբերությունն անհրաժեշտ բաղադրատարր է գիտության երևույթներն ընկալելու գործում, քանի որ *«փոխաբերական մտածողության շնորհիվ հնարավոր է լինում առկայացնել վերացական գիտական տեսությունը»* (Lakoff, Johnson 2003: 128):

Գործնականում՝ գիտության պատմության մեջ արձանագրված են դեպքեր, երբ տեսաբանը լեզվականացնում է իր կողմից առաջադրվող գիտական թեզը, կանխավարկածը կամ հետազոտության վերջնարդյունքը՝ փոխաբերության միջոցով: Դրանցից մեկն, օրինակ, «*ping-pong transport cycle*» փոխաբերական միավորն է, որի միջոցով գիտնականների մի խումբ դեռևս 1985 թվականին առաջ է քաշել կենսաքիմիական գործընթացի մի կանխավարկած: Դրա էությունը հետևյալում է. բջջի շուրջը գոյություն ունի պատյան՝ բջջապատ, որը ծածկում է բջջաթաղանթը: Բջջապատի միջի սպիտակուցը ետ ու առաջ է մղում այդտեղ առկա քլորիդը բջջաթաղանթի ուղղությամբ: Այս ռեակցիան ընթանում է պինգ-պոնգ մեխանիզմով՝ երևակելով պինգ-պոնգ խաղում գնդակի հետադարձ և առաջընթաց դինամիկան (Falke et al., 1985, <https://authors.library.caltech.edu/13001/1/FALjbc85a.pdf>):

Մեկ այլ օրինակ ատոմի կառուցվածքի «արեգակնային» կամ «մոլորակային» մոդելն է, որն անվանում են «*the Bohr Model*» կամ «*“planetary model” of the atom*»: Մոդելը ներկայացրել է դանիացի ֆիզիկոս Նիլս Բորը՝ 1913 թվականին: Այս դեպքում ատոմի միջուկի շուրջը շրջանաձև ուղեծրով պտտվող էլեկտրոններն, ըստ էության, նմանեցվում են արեգակնային համակարգում արևի շուրջը պտտվող մոլորակներին (Bohr Model, <https://www.britannica.com/science/Bohr-model>): Գիտության մեջ վաղուց արմատացած այս զուգորդությունը հնարավորին չափով գաղափար է տալիս ատոմի կառուցվածքի տեսության մասին:

Բժշկագիտության բնագավառում նմանօրինակ փոխաբերությունների գործածությամբ մասնագետները լեզվականացնում են ախտորոշիչ հետազոտության արդյունքները: Միևնույն ժամանակ կլինիցիստը կամ հետազոտողը ձևավորում է ժամանակի տնտեսման հենքով գործող փոխաբերական այնպիսի միավոր, որը հնարավորինս բացառում է ներկայացվող գիտական իրողության մասին հնարավոր տարրնկալումները: Այդպիսի փոխաբերություններից են ձայնահնչյունային տարրերով որոշարկված միավորները, որոնք ներկայացնում են օրգանիզմի արտահայտված խանգարումների և ախտաբանական փոփոխությունների ախտորոշում, ինչպես օրինակ՝ *seagull murmur* (ծովաորորի արձակած ձայն), *crackling of snow / walk in the snow* (ձյան ճոճոց / քայլք ձյան միջով), *gallop rhythm* (քառատրոփ ռիթմ), *heart murmur* (կրծքային աղմուկ), *pericardial murmur* (պերիկարդիալ աղմուկ), *waterwheel sound / mill-wheel murmur* (ջրանիվի ձայն), *cat's cry syndrome* («կատվի ճիչ» համախտանիշ) և այլն: Այս բոլոր դեպքերում մասնագետի կենսափորձի, կլինիկական ճկուն

մտածողության և ստեղծագործ երևակայության համագումարը և որոշակի հնչյունային նրբերանգների հետ որակական և քանակական զուգորդումներ անելու ունակությունը ձևավորում են անհրաժեշտ փոխաբերական միավորները:

Կարևոր է նաև հասկանալ, թե հետազոտական որ գործողությունների արդյունքում են ձևավորվում այս միավորները: Այսպես, ֆիզիկալ հետազոտման ժամանակ, որի դեպքում բժիշկը գործի է դնում իր զգայարանները, կամ մարդու մարմնի արտաքին զննման ժամանակ լսելի են լինում տարբեր որակի կամ քանակի ձայներ կամ հնչյուններ, որոնք կարևոր տեղեկատվություն են հաղորդում ներքին օրգանների կենսագործունեության, օրինակ՝ սրտի աշխատանքի, արյան շրջանառության, շնչառական համակարգի և այլ օրգան-համակարգերի մասին (Սիսակյան, Այվազյան 2011): Ըստ այդմ, բժշկագիտության մեջ ընդունված է հիվանդությունների ախտորոշումն իրականացնել, ի թիվս այլ մեթոդների, *բախման* (պերկուսիա) և *լսման* (աուսկուլտացիա) մեթոդներով (Սիսակյան, Այվազյան 2011):

Համաձայն Սիսակյանի և Այվազյանի՝ *բախումը* ներքին օրգանների հետազոտության եղանակ է՝ հիմնված այն ձայների գնահատման վրա, որոնք առաջանում են հետազոտվող անձի մարմնի մակերևույթին բախելու ժամանակ (Սիսակյան, Այվազյան 2011: 22): Այս մեթոդի կիրառման արդյունքում «*բժիշկը լսում, գնահատում և համեմատում է հարվածի ժամանակ առաջացող ձայները, որի շնորհիվ կարելի է եզրակացություն անել տվյալ օրգանի վիճակի <...> մասին*» (Սիսակյան, Այվազյան 2011: 23): Հեղինակները նկարագրում են նաև *լսման* մեթոդը, որը, որպես ներքին օրգանների հետազոտության եղանակ, հիմնված է դրանց կենսագործունեության հետևանքով առաջացած ձայնային երևույթները լսելու վրա, ընդ որում՝ հետազոտության լսման մեթոդի կիրառման ժամանակ ավելորդ ձայների առաջացումը կարող է որոշիչ նշանակություն ունենալ հիվանդության ախտորոշման համար (Սիսակյան, Այվազյան 2011): Այլ խոսքով՝ օրգան-համակարգերից ստացվող ձայնահնչյունային տվյալները հիվանդի ընդհանուր առողջական վիճակի հիմնական ցուցիչներից են և ախտորոշման տեսանկյունից կարևոր տեղեկատվություն են պարունակում և փոխանցում իրական ժամանակում: Օրինակ, «*seagull murmur*» կոչվող կլինիկական նախանշանը կարող է հուշել միտրալ փականի պրոլապսի մասին (ախտաբանական վիճակ, որն արտահայտվում է նախասրտի և ձախ փորոքի միջև գտնվող փականի ֆունկցիայի խանգարմամբ, ավելի կոնկրետ՝ միտրալ պրոլապսն այն երևույթն է, երբ սրտի ձախ փորոքի կծկման ժամանակ նրա փեղկերը պարաշյուտի նմանությամբ

ճկվում/արտանկում են դեպի ձախ նախասրտի խոռոչ: <https://www.mayoclinic.org/diseases-conditions/mitral-valve-prolapse/symptoms-causes/syc-20355446> Այս պրոցեսի հետևանքով առաջացող ձայնային տոնը նմանվում է ծովաորորի արձակած հնչյուններին: Շատ հաճախ կլինիկական դեպքերի նկարագրություններում (clinical case reports) օգտագործվում են «**seagull murmur**», «**seagull musical murmur**» փոխաբերական միավորները՝ ընդգծելով համեմատությունը ծովաորորի արձակած հնչյունների հետ, ինչպես օրինակ՝ «*In this case report, a characteristic **seagull murmur** occurring in the aortic position was clearly audible, which was previously primarily described at the apex from mitral valve prolapse.*», «*A high-pitched, systolic **seagull musical murmur** was heard at the right second intercostal space.*» (Zhao et al. 2015: 286): Որոշ դեպքերում կատարվում է նաև ձայնային տոնի որակական գնահատում և տարբերակում, ինչպես օրինակ՝ «*In patients with ruptured chordae tendineae, the systolic **murmur may have a cooing or “seagull” quality, whereas a flail leaflet may produce a murmur with a musical quality.***» (Kasper 2015: 1544), «***Seagull cooing murmurs, with a single frequency musical tone, mostly occur in mitral valve prolapse...***» (Zhao et al. 2015:287):

Նշենք, որ ձայնահնչյունային փոխաբերությունները հատկապես գործածական են սրտի աշխատանքը գնահատող հետազոտություններում և սրտի հետ կապված խնդիրների ախտորոշումներում: Օրինակ՝ սրտի կծկումների ֆիզիոլոգիապես բնականոն հաջորդականության խանգարումը կարող է դրսևորվել որոշակի ձայնով, որի կլինիկական նկարագրությունը տրվում է «**gallop rhythm**» միավորով: Սրտի հետազոտության ժամանակ լսելի են լինում երեք կամ չորս հնչյուններ, որոնք նմանվում են ձիու քառատրոփ ընթացքի ձայնին: Առաջին անգամ «gallop» տերմինն օգտագործել է Ժան-Բապտիստ Բույուն 1847 թվականին, որպեսզի նկարագրի արագ հաջորդականությամբ հնչող սրտի երեք հնչյունների ռիթմը (<https://www.ncbi.nlm.nih.gov/books/NBK342/>): Փոխաբերական այս միավորը լայնորեն օգտագործվում է բժիշկ-տեսաբանների և գիտնականների աշխատանքներում, որոնցից առանձնացրել ենք հետևյալ օրինակները՝ «*...**gallop rhythm** is frequently the only positive physical finding in patients with heart disease and its presence often has important diagnostic and therapeutic implications.*», «***Gallop rhythm** is an auscultatory phenomenon in which a **tripling or quadrupling of heart sounds resembles the canter of a horse.***», (O'Rourke 1972), «***Gallop rhythm** is widely held to be a sign of prognostic value, and this opinion has been supported by follow-up studies of patients with **gallop rhythm** in groups of mixed etiology.*», «***Gallop rhythm** is here*

defined as the presence, in a patient with heart disease, of audible vibrations in diastole, homologous either with the physiological third or auricular sounds.» (Miles 1950), «**Gallop rhythm** is a mechanical event associated with a relatively rapid rate of ventricular filling and characterized by a ventricular bulge and a low-frequency sound.» (Grayzel 1960):

Գրականության ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ սրտի ֆունկցիոնալ վիճակի գնահատման հետազոտությունների ընթացքում ախտորոշվող խնդիրները հաճախ պարունակում են *murmur*, *sound*, *resonance* բաղադրիչները, օրինակ՝ «**heart murmur**» փոխաբերական միավորով նկարագրվում է կրծքային այն աղմուկը, որը լսելի է սրտի բաբախի ժամանակ, երբ կատարվում է կրծքավանդակի տատանման ուսումնասիրություն, օրինակ՝ «A **heart murmur** is an extra or unusual sound heard during a heartbeat. **Murmurs** range from very faint to very loud. Sometimes they sound like a whooshing or swishing noise.», «People who have **innocent (harmless) heart murmurs** don't have any signs or symptoms other than the **murmur** itself. This is because **innocent heart murmurs** aren't caused by heart problems.» (PubMed Health Glossary, <<https://www.ncbi.nlm.nih.gov/pubmedhealth/PMHT0023249/>>):

Կրծքավանդակի տատանման հետազոտություն անցնող հիվանդը նաև ցածր հաճախության հնչյուններ է արտաբերում, որոնք աղմուկի են նմանվում և նկարագրվում են «**pericardial murmur**» միավորով:

Այս շարքից է նաև «**waterwheel sound**» կամ «**mill-wheel murmur**» միավորը, որը նույնականացնում է սրտապարկի ներսում հեղուկի և օդի առկայության դեպքում արձակվող ձայնը ջրանիվի առաջացրած ճողվիյունների ձայնին, ինչը նկարագրված է հետևյալ պարբերություններում՝ «**The 'water-wheel' or 'mill-wheel' murmur** is classically associated with large intracardiac air emboli and described as a "characteristic splashing auscultatory sound due to the presence of gas in the cardiac chambers.» (Rubal 2009: 300), «...the temporal and spatial resolution of current generation CT scanners permitted us to capture previously unreported CT findings consistent with the classic descriptions of the direct visualization of large venous air emboli and the presence of **water-wheel or mill-wheel murmur.**» (Rubal 2009: 302), «**Splashing sounds** are heard when there are air and fluid in the pericardium. They may be bubbling or gurgling or resemble **the sound of a water-wheel.**» (Musser 1904: 630):

Ֆիզիկալ հետազոտության ժամանակ լսելի են լինում շնչառական, կամ այլ խոսքով՝ թոքային հնչյուններ, որոնցից մեկն անվանվում է «**walk in the snow**» փոխաբերական միավորով: Թարգմանաբար այն հնչում է որպես *ձյան ճոճոճ* կամ *քայլք ձյան միջով* և նկարագրում է թոքերի

զննման ժամանակ լսվող ախտաբանական հնչյուններ, որոնք արտաբերվում են ընդամիջումներով և նմանվում են թարմ ձյան վրայով քայլելու թրխկոցի կամ ճոճոցի, «*Significant “walk in the snow” sensation and a “crackling” sound were appreciated on palpation of his lower neck and on auscultation of his precordium, respectively.*» (Gurvits 2011):

Օրգանիզմում դիտվող ձայնահնչյունային բնույթի անոմալ դրսևորումներից է նաև ձայնի ախտաբանական փոփոխությունը, ինչպես օրինակ «**cat’s cry syndrome**» կամ «**cri-du-chat syndrome**» կոչվող խանգարման դեպքում, որում «cri-du-chat» միավորը ֆրանսերենից թարգմանվում է “cry of the cat” անգլերենում (<https://rarediseases.org/rare-diseases/cri-du-chat-syndrome/>): Այն մարդու օրգանիզմի քրոմոսոմային հավաքակազմում քրոմոսոմների քանակական կամ կառուցվածքային փոփոխություններով պայմանավորված խանգարում է, որի հետևանքով կլինիկական մի շարք նշանների (շլուփյուն, մտավոր և ֆիզիկական հետամնացություն) դրսևորմանը զուգահեռ հիվանդի ձայնը նմանվում է կատվին հատուկ միալար, սուր նվոցի, ինչը նկարագրված է հետևյալ օրինակներում. «*The typical **cat cry** present at birth in all patients was associated with subsequent language delay and difficulty in language acquisition.*» (Espirito Santo et al. 2016), «**Cri-du-chat (CDC ...)** is a chromosomal syndrome that results from partial deletions on the short arm of chromosome 5. The clinical features of **CDC** normally include high-pitched cat-like cry, mental retardation, The **cat-like cry** is the most prominent clinical characteristic in newborn children and is usually considered as diagnostic for the **CDC syndrome**. Using a strategy of 'phenotype dissection', the critical region for **cat-like cry** was mapped to the chromosomal segment...» (Wu et al. 2005), «**Cat cry syndrome** is an autosomal disease accompanying abnormal deletion of chromosome 5... . Scoliosis has been reported as a skeletal complication in **cat cry syndrome**.», «*We report on 11 cases (5 boys and 6 girls) of **cat cry syndrome**.*», «*Muscular hypertonia may play a key role in the progression of scoliosis in **cat cry syndrome**.*» (Takebayashi et al. 2006):

Որպես ամփոփում՝ նշենք, որ ներկայացված փոխաբերությունների կազմավորումը պայմանավորված է այնպիսի արտալեզվական գործոններով և իրողություններով, ինչպիսիք են՝ օրգանիզմի՝ ախտաբանորեն փոփոխված գոտիները ֆիզիկալ մեթոդներով հետազոտելու ընթացքում բժշկի զգայալսողական ընկալումները, հետազոտության արդյունքում ստացված ձայնային տվյալները ճգրիտ կերպով մտապահելը և դրանք օբյեկտիվ իրականության մեջ առկա ձայնանունների կամ հնչյունների հետ համադրելը: Այս պարագայում

զուգորդությունների արդյունքում բժիշկը փոխաբերության միջոցով «նյութականացնում» է սեփական վերացարկումները՝ մտահանգելով որևէ կոնկրետ ախտորոշում, ընդ որում՝ այդ փոխաբերական միավորը ստեղծվում է նպատակադիր մտածական գործունեության արդյունքում՝ թելադրված հիվանդության ախտորոշման և մարդու օրգանիզմում ախտաբանական փոփոխությունների մեկնաբանությանն ուղղված ժամանակի տնտեսումն ապահովելու գործոնով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Միսակյան Հ.Ս., Այվազյան Ա.Ա. խմբ., Ներքին հիվանդությունների պրոպեդևտիկա: Ուսումնական ձեռնարկ, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալս. հրատ., Եր., 2011, 300 էջ:
2. Black M. Models and Metaphors: Studies in Language and Philosophy, Ithaca: Cornell University Press, 1962, 278 p.
3. Espirito Santo L.D., Moreira L.M., Riegel M., Cri-Du-Chat Syndrome: Clinical Profile and Chromosomal Microarray Analysis in Six Patients. // *Biomed Res Int.* 2016;2016:5467083. <doi:10.1155/2016/5467083>
4. Falke J.J., Kanes K.J., Chan S.I., The kinetic equation for the chloride transport cycle of band 3. A ³⁵Cl and ³⁷Cl NMR study. // *J Biol Chem.* 1985;260(17):9545-9551.
5. Gibbs R.W. The poetics of mind: Figurative thought, language, and understanding. Cambridge: Cambridge University Press, 1994, 122 p.
6. Grayzel J., Gallop rhythm of the heart: I. Atrial gallop, ventricular gallop and systolic sounds. // *The American Journal of Medicine*, Volume 28, Issue 4, 1960;578-592. [https://doi.org/10.1016/0002-9343\(60\)90152-2](https://doi.org/10.1016/0002-9343(60)90152-2).
7. Gurvits GE. Education and imaging. Gastrointestinal: "Walk in the snow": Boerhaave syndrome. // *J Gastroenterol Hepatol.* 2011; 26(1):207. doi:10.1111/j.1440-1746.2010.06553.x
8. Kasper D.L., Fauci A.S., Hauser S.L., Longo D.L., Jameson J.L., Loscalzo J. Harrison's Principles of Internal Medicine, 19th edition. New York: McGraw Hill Education, 2015, 2770 p.
9. Kirby J.T. *Aristotle on Metaphor* // *Classics Articles and Papers*. Paper 2, 1997, Available online at: http://scholarlyrepository.miami.edu/classics_articles/2
10. Kittay E.F. *Metaphor: Its Cognitive Force and Linguistic Structure*. Oxford: Oxford University Press, 1987, 368 p.
11. Lakoff G., Johnson M. *Metaphors we live by*. London: The University of Chicago Press, 2003, 193 p. Available online at:

- <http://shu.bg/tadmin/upload/storage/161.pdf>
12. Miles B.E., The clinical significance of gallop rhythm in hypertension. // *Br Heart J*. 1951;13(3):327-333. <doi:10.1136/hrt.13.3.327>
 13. Musser J.H., *A practical treatise on medical diagnosis for students and physicians*. Philadelphia: Lea Bros. & Co. 1904.
 14. O'Rourke R.A., Gallop rhythm. // *Calif Med*. 1972;116(5), 85-86.
 15. Richards I.A., *The Philosophy of Rhetoric*. Oxford: Oxford University Press, 1936, 138 p.
 16. Rubal B.J., Leon A., Meyers B.L., Bell C.M.. The 'mill-wheel' murmur and computed tomography of intracardiac air emboli. // *J Am Assoc Lab Anim Sci*. 2009;48(3):300-302.
 17. Snodgrass A., Coyne R. *Models, metaphors and the hermeneutics of designing* // Working Paper, Faculty of Architecture, University of Sydney, 1991, pp. 7-13.
 18. Takebayashi T., Obata H., Minaki Y., et al. Scoliosis in cat cry syndrome. // *J Orthop Sci*. 2006;11(3): 259-263. doi:10.1007/s00776-006-1019-8
 19. Wu Q., Niebuhr E., Yang H., Hansen L., Determination of the 'critical region' for cat-like cry of Cri-du-chat syndrome and analysis of candidate genes by quantitative PCR. // *Eur J Hum Genet*. 2005;13(4):475-485. doi:10.1038/sj.ejhg.5201345
 20. Zhao J., Cheng Z., Quan X., Zhao Z. *Rare Seagull Cooing Murmur from Acute Aortic Dissection* // *The West Indian Medical Journal*. 64(3), 2015, pp. 286-287. <doi:10.7727/wimj.2014.244.>

ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

21. Stedmans Online Medical Dictionary, <http://stedmansonline.com/>

ՀԱՄԱՅԱՆՑԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

22. MayoClinic, <https://www.mayoclinic.org/diseases-conditions/mitral-valve-prolapse/symptoms-causes/syc-20355446>, Last retrieved 2020 January 22
23. PubMed Health Glossary, <https://www.ncbi.nlm.nih.gov/pubmedhealth/PMHT0023249/>, Last retrieved 2020 September 05
24. National Center for Biotechnology Information, <https://www.ncbi.nlm.nih.gov/books/NBK342/>, Last retrieved 2020 December 18

REFERENCES

1. H.S. Sisakyan, A.A. Ayvazyan. Khmb.– Nerkin hivandutyunneri propedevtika. Usumnakan dzernark./Yerevan: Yerevani M. Heratsu anvan petakan bzhshkakan hamalsarani hratarak., 2011, 300 ej.

СВЕТЛАНА МАРКАРЯН, АЛИНА ПЕТРОСЯН - ИСПОЛЬЗОВАНИЕ ЗВУКОВЫХ МЕТАФОР В ДИАГНОСТИКЕ ЗАБОЛЕВАНИЙ

Ключевые слова: медицина, метафора, звуковая метафора, заболевание, клиническое обследование, перкуссия, аускультация, диагностика.

В данной статье предпринята попытка рассмотреть специфику функционирования звуковой метафоры в контексте диагностики заболеваний. Перкуссия и аускультация являются важнейшими методами физикального обследования пациента с целью установления диагноза. Эти методы позволяют клиницистам и диагностам определять звуки различного качества в обследуемых органах пациента. Проводя параллели между этими звуками и явлениями окружающего мира, специалисты часто обозначают эти звуки с помощью метафорических наименований. В этом плане метафора функционирует как когнитивно-экономичный инструмент называния разных патологических процессов.

SVETLANA MARGARYAN, ALINA PETROSYAN - ON THE USAGE OF SOUND METAPHORS IN DISEASE DIAGNOSTICS

Keywords: medicine, metaphor, sound metaphor, disease, clinical examination, percussion, auscultation, diagnosis.

The present paper studies a number of sound metaphors which are used in the diagnostic process. When a physical assessment is performed, percussion and auscultation are two techniques/methods of clinical examination used. Both percussion and auscultation involve actions which identify internal sounds of the body, coupled with the extra or abnormal sounds of varying tonal quality. Drawing parallels between these abnormal sounds and real-world phenomena, specialists denominate these sounds via metaphoric constructs. In this case metaphors act as time-efficient tools in the diagnostic process and distinctive markers of the identified pathology.

Ներկայացվել է՝ 31.01.2021

Գրախոսվել է՝ 08.02.2021

**«ԶՈՒՐ» ԲԱՂԱԴՐԻՉՈՎ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԵՐԵՆՈՒՄ ԵՎ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

ՍԻՐԱՆՈՒՇ ՊԱՊՈՅԱՆ

Հիմնաբառեր՝ լեզվամշակույթ, դարձվածային միավոր, իմաստային դաշտ, հարանշանակային իմաստ

Անցյալ դարի 80-ական թվականներից սկսած աճել է լեզվաբանների հետաքրքրությունը դարձվածային միավորների և նրանց թարգմանական խնդիրների նկատմամբ: Կատարվել և կատարվում են բազմաթիվ զուգադրական աշխատանքներ, որոնք ևս մեկ անգամ հավաստում են այն փաստը, որ չնայած տարբեր լեզուներում դարձվածային միավորների շատ կամ քիչ նմանություններին, օտար լեզու սովորողները, որպես կանոն, դժվարությամբ են հասկանում դարձվածքները: Հատկապես այսօրվա գլոբալացման պայմաններում, բաց սահմաններով և մշակութային մեծ բազմազանություն ունեցող Եվրոպայում մարդիկ մեծ պահանջ ունեն՝ ճանաչելու և հասկանալու այլ մշակույթները և դրանց կրողներին: Զուգադրական ուսումնասիրությունները կարող են մեծապես նպաստել մշակութային երկխոսության զարգացմանը և թյուրմբեռնումների հաղթահարմանը: Անհրաժեշտ է նշել, որ գերմաներենի դարձվածային միավորները համեմատվել են բազմաթիվ թե՛ եվրոպական, թե՛ ոչ եվրոպական լեզուների դարձվածային միավորների հետ: Ավելի սակավ հանդիպում են եռալեզու համեմատություններ, ինչպես օրինակ՝ գերմաներենի, չեխերենի և սլովակերենի համեմատությունն է: Գերմաներենի և հայերենի դարձվածային միավորների նյութի հիման կատարված զուգադրական աշխատանքները ևս համեմատաբար սակավաթիվ են և կարիք կա նման հետազոտության: Սույն հոդվածը նվիրված է մասնավորապես «Wasser/ջուր» բաղադրիչով դարձվածքների զուգադրական ուսումնասիրությանը:

Քանի որ դարձվածքները մի տեսակ միջանկյալ դիրք են զբաղեցնում բառույթային և ստորոգական մակարդակների միջև, դրանց ուսումնասիրությունը լեզվական տեսանկյունից մեծ հետաքրքրություն է

ներկայացնում: Մյուս կողմից էլ դրանք հետաքրքիր են ոչ միայն որպես լեզվական միավորներ, այլև որպես գիտակցության միավորներ, քանզի դրանց ձևավորման համար ոչ այնքան լեզուն, որքան տվյալ մշակույթն է «պատասխանատու»: Ըստ հայ ականավոր փիլիսոփա-լեզվաբան Գ. Բրուտյանի՝ «Դարձվածաբանական միավորի մեջ դրված է աշխարհը լեզվի և ազգային մշակույթի պրիզմայի միջով ընկալելու յուրահատկությունը (Բրուտյան, 1968: 50): Դարձվածքները դիտարկվում են որպես կայուն, վերափոխմանակալից, պատրաստի վերարտադրելի կապակցություններ և ըստ Հ. Բուրգերի՝ «դրանք ինչպես բառերը պահպանվում են մեր հիշողության մեջ որպես մտային միավորներ և կիրառվում են որպես մեկ ամբողջություն» (Բուրգեր 1998: 17):

Նախ անդրադառնանք զուգադրվող լեզուներում «ջուր» հասկացության ծագումնաբանությանը: Ըստ Բլուգեի Ծագումնաբանական բառարանի՝ Wasser (ջուր) բառը բնիկ գերմանական արմատ է, որը միջին գերմաներենում ունեցել է wasser ձևը, հին գերմաներենում եղել է wazzar, գոթերենում՝ wato, անգլերենում՝ water, ռուսերենում՝ woda. Այս բառի ծագումնաբանությունը տանում է դեպի հնդեվրոպական uedor, uodor, այսինքն՝ Wasser:

Աճառյանի Հայերենի Ծագումնաբանական բառարանը «ջուր»-ը ներկայացնում է որպես բնիկ հայ բառ, որն առաջացել է yuro- ձևից: Այս արմատը հնում երկու ձև ուներ՝ wor և ur, և նախաձայնի ձայնադարձով դարձել է՝ yur և your (http://www.nayiri.com/imaged DictionaryBrowser.jsp?dictionaryId=7&dt=HY_HY&pageNumber=2163):

«Ջուր»-ը աշխարհը ստեղծող չորս բաղադրիչներից մեկն է: Լինելով ջրային մակերես այն կարող է «հակադրվել» ցամաքին: «Ջուր»-ը նախապայման է ցանկացած կենդանի օրգանիզմի գոյության համար, միաժամանակ այն բնորոշվում է որպես վտանգավոր, որովհետև ջրում կարելի է խեղդվել: Նշված հատկանիշների շնորհիվ է, որ տարբեր ժողովուրդների դիցաբանություններում և մասնավորապես դարձվածային միավորներում «ջուր»-ը շատ հաճախ է հանդիպում: Կյանքի համար անհրաժեշտ այս նյութն ունի տարբեր որակական, ֆիզիկական և գործառական հատկանիշներ, որոնք էլ արտահայտություն են գտել բազմաթիվ դարձվածքներում:

Տվյալ ուսումնասիրության համար գերմաներենի դարձվածքները դուրս են բերվել K. Duden-ի „Redewendungen. Wörterbuch der deutschen Idiomatik“ և դարձվածքների էլեկտրոնային բառարաններից, իսկ հայերենի դարձվածքները՝ Պ. Բեդիրյանի «Հայերեն դարձվածքների մեծ բացատրական բառարան»-ից և Ա. Ղանալանյանի «Առածանի» խորագիրը կրող հատորից: Նշված աղբյուրներից դուրս են գրվել 208

դարձվածք գերմաներենից և 235 դարձվածք հայերենից: Այդ դարձվածքները վերլուծության և իմաստային դասակարգման են ենթարկվել երկու զուգահրժվող լեզուներում:

Գերմաներենի „Wasser“ բաղադրիչով դարձվածքները դասակարգել ենք հետևյալ իմաստային խմբերում.

1. **բնավորության գիծ՝** *ein stilles Wasser sein* նշանակում է՝ իր արտահայտություններում և իր տեսակետներում զուսպ լինել
2. **հոգեկան վիճակ՝** *Blut und Wasser schwitzen-* մեծ վախի և հուզվածության մեջ լինել
3. **Ֆինանսական իրավիճակ՝** *das Wasser steht jmdm bis zum Hals* նշանակում է՝ պարտքերում թաղված լինել, ֆինանսական խնդիրներ ունենալ
4. **անունակություն՝** *j-m nicht das Wasser reichen können-* իր հնարավորություններով կամ իր աշխատանքով մեկին հասնել չկարողանալ, նրան զիջել
5. **ժամանակ՝** *bis dahin fließt noch viel Wasser den Berg/ den Rhein/ die Elbe hinunter* նշանակում է՝ դեռ շատ ջրեր կհոսեն, դեռ շատ բան կկատարվի
6. **ախորժակ՝** *jemandem läuft das Wasser im Munde zusammen (der Speichel)* նշանակում է՝ կերակուրի ախորժեղի տեսքից ախորժակը գրգռվել (թքարտադրություն)
7. **ջրի դրական ընկալում՝** *Wasser auf j-s Mühle sein* նշանակում է՝ մեկին սատարել
8. **ջրի բացասական ընկալում՝** *j-m Wasser in den Wein gießen* նշանակում է՝ մեկի ոգևորության վրա ջուր լցնել
9. **բարեկեցություն/ չքավորություն՝** *in tiefem Wasser schwimmen* նշանակում է՝ բարեկեցիկ կյանք ունենալ, դրան հակառակ՝ *in seichtem Wasser schwimmen* նշանակում է՝ աղքատության մեջ ապրել
10. **հակադրություն՝** *wie Wasser und Feuer sein* նշանակում է՝ անհամատեղելի հակադրություն ներկայացնել
11. **օծանելիք՝** *Kolnischwasser* նշանակում է՝ «լավ բուրոդ, հոտավետ ջուր»
12. **անբարո արարք՝** *sie geht ins Wasser bis über die Ohren-* ասվում է անբարո կանանց մասին
13. **տեղումներ՝** *die Sonne zieht Wasser* նշանակում է՝ անձրևելու է
14. **անհաջողություն/ ձախողում՝** *der Plan wurde zu Wasser* նշանակում է՝ գործը ձախողվել է
15. **զգուշություն՝** *man muss nicht zu tief ins Wasser gehen-* այս ասացվածքում խորհուրդ է տրվում զգուշ լինել ձեռնարկումներում

16. **վտանգ/ նախազգուշացում վտանգից** ` *das Wasser läuft ihm in die Schuhe*- նշանակում է՝ շփոթության, վտանգի մեջ գտնվել, Wasser hat keine/ keinen Balken (und Zacken zum anhalten) նշանակում է՝ ջուրը վտանգավոր է, քանի որ նրանում կարելի է խեղդվել
17. **զիջողականություն** ` *ein wenig Wasser kann ein grosses Feuer löschen*- այս ասացվածքում խոսք է գնում զիջելու մասին
18. **հիասթափություն** ` *wie mit kaltem Wasser übergossen*- ասացվածքը խորհրդանշում է մի բանից հիասթափված լինելը
19. **համառություն** ` *das Wasser, welches tropfenweise fällt, höhlt den Stein aus*- այս ասացվածքում խոսքը գնում է համառության մասին
20. **մի բան սերտելը/ վարժելը** ` *j-n schleifen, bis ihm das Wasser im Arsch kocht* նշանակում է՝ լավ սերտել, վարժել
21. **իր մահկանացուն կնքել** ` *ins Wasser gehen* դարձվածքն արտահայտում է իր կյանքին վերջ տալ/ խեղդվել իմաստը
22. **ջուրը որպես դեղորայք** ` *reines Wasser ist die beste Augensalbe (մաքուր ջուրը աչքի ամենալավ քուրքն է), wer Wasser trinkt am Morgen, braucht für Arzneien nicht zu sorgen (ով առավոտները ջուր է խմում, կարիք չունի դեղորայքի), das Wasser ist die beste Arznei (ջուրը լավագույն դեղորայքն է)*- բոլոր երեք դարձվածքներն էլ վկայում են ջրի բուժիչ ուժի մասին
23. **ապարդյուն աշխատանք** ` *Wasser ins Meer/ in den Rhein/ in die Elbe schütten* նշանակում է՝ ավելորդ աշխատանք կատարել
24. **անօգուտ խորհուրդ** ` *Wasser auf den Rücken einer Ente gießen* նշանակում է՝ մեկին անօգուտ խորհուրդ տալ
25. **փորձվածություն** ` *der ist mit allen Wassern gewaschen, mit allen Salben geschmiert und mit allen Hunden gehetzt* նշանակում է՝ փորձառու լինել
26. **անհուսալիություն** ` *du kannst das Wasser ausschütten*- ասվում է, երբ այլևս հույս չկա
27. **վստահություն** ` *trag du Wasser zu und lass Gott kochen* նշանակում է՝ Աստված գործը չի փչացնի, վստահի՛ր նրան
28. **զայրույթ** ` *er ist im heissen Wasser (mit den Leuten)* նշանակում է՝ մեկի վրա զայրացած լինել
29. **թշնամանք** ` *er möchte ihn in einem Löffel Wasser ersäufen* նշանակում է՝ թշնամական և վրիժառու կեցվածք ունենալ մեկի նկատմամբ
30. **անվճռականություն** ` *er schweift zwischen Wasser und Wind* նշանակում է՝ ոչ մի կողմին չպատկանել, անվճռական լինել
31. **օգնություն** ` *jemanden über Wasser halten* նշանակում է՝ մեկին օգնել

32. **օրգանիզմից արտազատվող հեղուկներ՝** *Wasser lassen/ sich das Wasser abschlagen* նշանակում է՝ միզել/*Wasser lief ihm von der Stirn* նշանակում է՝ քրտնել/*der Schmerz trieb ihr das Wasser in die Augen* նշանակում է՝ աչքերը արցունքներով լցվել
33. **խորհուրդ՝** *besser Wasser trinken in Ehren, als Wein in Schande* (ավելի լավ է պատվով ջուր խմել, քան՝ անպատիվ կերպով գինի), *bei Wasser und Brot wird man nicht tot* (հաց ու ջրով քաղցած չեն լինի/ մնա):
- Հայերենում «ջուր» բաղադրիչով դարձվածքներում առավելապես հանդիպում են հետևյալ իմաստները.
1. **բնավորության գիծ՝** *դարմանի/ հարդի/ բասմի տկի ջուր-* ծածկամիտ, խորամանկ, տակից գործող մարդ
 2. **արտաքին տեսք՝** *ջուր խմի՝ կոկորդից կշողա* նշանակում է՝ շատ գեղեցիկ է
 3. **չփոփոխվող իրավիճակ՝** *նույն ջուրը, նույն ջրաղացն ա* նշանակում է՝ ամեն ինչ նույնն է մնացել, ոչինչ չի փոխվել
 4. **նմանություն՝** *մեկ ջուր, մեկ տախտակ* նշանակում է՝ իրարու կնամանին/ *երկու կաթիլ ջրի պես/ նման* նշանակում է՝ վերին աստիճանի նման
 5. **ջրի դրական ընկալում՝** *բան մը ջուրի պես խմել* նշանակում է՝ հեշտությանը առանց աչքը թարթելու կատարել/*մեկի ջրի ճամբեն բաց լինել՝* մեկին լավ բախտ սպասել
 6. **ջրի բացասական ընկալում՝** *ջուր անել (խսկց.)* նշանակում է՝ վատնել, մսխել
 7. **մկրտություն՝** *ջուրը քաշվել* նշանակում է՝ մկրտվել
 8. **ժամանակ՝** *շապ ջրեր կպղտորվեն, կպարզեն/ շապ ջրեր կհոսեն* նշանակում է՝ շատ բաներ տեղի կունենան/ կփոխվեն
 9. **երկրնտրանք՝** *երկու ջրի արանքում* նշանակում է՝ երկրնտրանքի մեջ լինել
 10. **ախորժակ՝** *մեկուն բերնին ջուրերը վազցնել* նշանակում է՝ մեկի ախորժակը գրգռել (թքարտադրություն)
 11. **համերաշխություն՝** *մեկի ջուրը գտնել* նշանակում է՝ մեկի հետ լեզու գտնել
 12. **մտերմություն՝** *ջուրը արանքներեն չի անցնի* նշանակում է՝ շատ մոտ կպած են
 13. **շտապողականություն՝** *ջուրը չհասած բոբկանալ* նշանակում է՝ շտապել
 14. **դժվարություն/ հեշտություն՝** *ջուրը պատնիսի վեր հանել/ ջուրը վեր տանիլ/ ջուրը պատից վեր հանել-* այս երեք դարձվածքն էլ արտահայտում են դեպի դժվարը գնալ իմաստը, *մի բաժակ՝ մի*

- գավաթ ջուր/ գավաթ մը ջուր խմելու պես՝ նման արտահայտում է մի բան հեշտ ու հասարակ լինելու իմաստը
15. **փորձվածություն՝** *օխորը մաղե ջուր խմած* նշանակում է՝ ամեն փորձություն տեսած
 16. **վնաս կամ օգուտ՝** *ջուրի վրա նստեցնել* նշանակում է՝ լուրջ վնասներ պատճառել/ սնանկացնել, *մեկի ջրերն ընկնել* նշանակում է՝ մեկի առիթով օգտվել
 17. **ալկոհոլային խմիչք՝** *ամպակ ջուր* նշանակում է՝ ալկոհոլը նվազ խմիչք, *դառն ջուր/ ճերմակ ջուր՝* օղի
 18. **չքավորություն՝** *ճուրը փյուչիել խմել* նշանակում է՝ հետին ծայր չքավորության մատնվել
 19. **իր մահկանացուն կնքել՝** *ջուրն ընկնել/ ջրի փայ ընել* դարձվածքներն արտահայտում են իր կյանքին վերջ տալ իմաստը
 20. **գին/ արժեք՝** *ջրի գին/ գնով* նշանակում է՝ շատ էժան, *ջրի գին փալ* նշանակում է՝ շատ էժան առնել
 21. **արագ/ դանդաղ կատարվող գործ՝** *մի կաթիլ ջրի պես* նշանակում է՝ մի բան արագ ու աննկատ կատարել, *ջրի պես գնալ ավազի պես մնալ* ասում են դանդաղողի մասին
 22. **օրգանիզմից արտազատվող հեղուկներ (ջուր բաղադրիչով արտահայտված)՝** *ճուրը վրայեն էթալ/ ջուր կտրել* նշանակում է՝ սաստիկ քրտնել, *ջուր թափել* նշանակում է՝ միգել
 23. **օրինանքներ, մաղթանքներ, անեծքներ՝** *ջո՛ւրդ փաքցնիմ* անեծք է, *ջուրը փորիդ մեջ թող չթնդա* օրինանք է և նշանակում է՝ ցավ չտեսնես (Մուսա լեռ), *ջուրը էրթաս՝ ոսկի դառնա* նույնպես մաղթանք է և նշանակում է՝ հաջողություն գտնես:

Դարձվածքների իմաստային խմբերի դասակարգումից պարզ է դառնում, որ երկու լեզվամշակույթներին բնորոշ են հետևյալ իմաստները՝ **բնավորության գիծ, ժամանակ, չքավորություն, մահկանացուն կնքել, ախորժակ, փորձվածություն, ջուրը որպես օրգանիզմից արտազատվող հեղուկ, ինչպես նաև ջրի դրական և բացասական ընկալումները:** Դարձվածքների մեծ մասում ի հայտ են գալիս միայն կոնկրետ մեկ լեզվին բնորոշ իմաստներ (25 իմաստ գերմաներենում և 14 իմաստ հայերենում): Միայն գերմաներենում առավել հաճախ հանդիպող իմաստներն են՝ **Ֆինանսական իրավիճակ, հակադրություն, համառություն, անհաջողություն, զայրույթ, զգուշություն, դեղորայք, օգնություն:** Հայերենում առավելապես հանդիպում են **արտաքին տեսք, նմանություն, երկընտրանք, մտերմություն, համերաշխություն, դժվարություն, արագ/ դանդաղ կատարվող գործ, գին** իմաստները: Հատկանշական է, որ քննության ենթարկված դարձվածքների քանակը

հայերենում ավելի շատ է, սակայն իմաստային խմբերի քանակը գերակշռում է գերմաներենում:

«Ջուր» բաղադրիչով դարձվածքներում հաճախ հանդիպում են հականիշ իմաստներ, օրինակ, հայերենում *ջրերը պարզել* նշանակում է՝ պարզություն, հստակություն մտցնել, դրան հակառակ՝ *ջրերը պղտորվել* նշանակում է՝ խառնաշփոթություն մտցնել: Գերմաներենի *er ist unter Wasser* (դժվար իրավիճակում լինել), *er ist wieder über Wasser* (ավելի լավ վիճակում լինել, կազդուրված լինել) դարձվածքներում այդ հակադրությունն արտահայտվում է *unter* և *über* հակադիր կապերի միջոցով:

Հայերենում հանդիպում են նաև դարձվածքների բազմիմաստության դեպքեր, օրինակ, *ջուր կտրել* դարձվածքը հանդես է բերում յոթ տարբեր իմաստներ՝ *մինչև ոսկորները թրջվել, սառել, ջրահամ դառնալ, ծիծաղից թուլանալ, փշանալ, ահաբեկվել և սերտել*: Ավելի հաճախ միևնույն դարձվածքն արտահայտում է երկու իմաստ՝ *ջրին տալ* նշանակում է թե՛ վատնել, թե՛ ուրանալ, *ջուր անել* նշանակում է թե՛ վարժ սովորել, թե՛ վատնել/ մսխել (*խսկց.*):

Ուսումնասիրվող երկու լեզուներում էլ հանդիպում են նաև նույն դարձվածքի ներգործական և կրավորական ձևերը: Գերմաներենում *ins kalte Wasser werfen/ schmeißen* (ստիպված լինել իրեն դրսևորել նոր, անձանոթ առաջադրանքի կատարման ժամանակ) ներգործական է, *ins kalte Wasser geworfen werden* կրավորական է: Հայերենում *ջուրը մաղել* ներգործական է և նշանակում է՝ բնաջնջել, *ջուրը մաղվել* կրավորական է:

Ժողովրդական բանահյուսության մեջ, հատկապես դարձվածքներում, հաճախ հանդիպում է *ջուր* - գինի հակադրությունը, օրինակ, *besser ein Glas Wasser beim Freunde als Wein beim Feinde* (ավելի լավ է մի բաժակ ջուր խմել ընկերոջ մոտ, քան թե մի բաժակ գինի՝ թշնամու մոտ), *besser Wasser trinken in Ehren, als Wein in Schande* (ավելի լավ է պատվով ջուր խմել, քան՝ անպատիվ կերպով՝ գինի):

Երկու լեզուներում էլ «Wasser/ջուր» բաղադրիչը հանդես է գալիս որոշակի բառերի շրջապատում: Գերմաներենում „Wasser“ բաղադրիչը հաճախ օգտագործվում է *Tropfen* (կաթիլ), *Trunk* (կում, ումպ), *Flasche* (շիշ) բառերի հետ՝ *ein Tropfen Wasser verdirbt eine Flasche Wein nicht* (մի կաթիլ ջուրը մի շիշ գինին չի փչացնի), *ein Trunk Wasser ist so angenehm als ein Fass mit Wein* (մի ումպ ջուրը ավելի հաճելի է, քան՝ մի տակառ գինին):

„Wasser“ բաղադրիչը հաճախ հանդես է գալիս նաև *Brot* բաղադրիչի հետ՝ *es ist Wasser und Brot genug, des Menschen Leben zu erhalten* (ջուրը և հացը բավական են մարդու կյանքը պահպանելու համար), *mit Wasser und Brot kommt man durch alle Not* (հաց ու ջրով

ամեն դժվարություն կհաղթահարվի): Հայերենում *hag ni zrih ytsu* նշանակում է՝ չափազանց/ կենսականորեն կարևոր:

„Wasser“ բաղադրիչը գերմաներենի դարձվածքներում հաճախ միանում է նաև *Brand* (*խարույկ, կրակ*) և *löschen* (*մարել, հանգցնել*) բառերին՝ *entferntes Wasser löscht keinen nahen Brand* (հեռվում գտնվող ջուրը կրակը չի մարի), *Wasser bei der Hand löscht den Brand* (ձեռքի տակ եղած ջուրը կրակը կմարի): *Wie Wasser und Feuer* դարձվածքում արտահայտված է անհամատեղելի իրողությունների հակադրություն իմաստը:

Գերմաներենում „Wasser“ բաղադրիչով դարձվածքներում հաճախ արտահայտվում է ջրի համընդհանրական ունեցվածք լինելու գաղափարը, ինչպես օրինակ, *Wasser und Weide ist des Königs/ jedes fließende Wasser ist des Reichs Strasse* դարձվածքներում: Անհրաժեշտ է նշել, որ այս իմաստը հայերենում չի հանդիպում:

Հայերենի որոշ դարձվածքներում հանդիպում է նաև պաթետիկ հարց ջուր բաղադրիչով՝ *ո՞ր ջուրն ընկնեմ*՝ նշանակում է ի՞նչ անեմ, ճար չունեմ:

Հետաքրքիր իմաստներ են ի հայտ գալիս նաև հոսող ջուր և չհոսող (ճահճացած) ջուր հակադրության դեպքում: Որպես կանոն հոսող ջուրը միշտ մաքրության, առողջության ու կենսունակության հետ է նույնացվում (*fliessendes Wasser hält sich rein* (հոսող ջուրը մաքուր է լինում), իսկ ճահճացած ջուրը հոսում է և հիվանդությունների աղբյուր է հանդիսանում (*Wasser, das im Teiche stehen bleibt, fängt an zu faulen* (ջուրը, որ ջրափոսում մնում է, սկսում է հոտել):

„Wasser“ բաղադրիչը գերմաներենի դարձվածքներում հաճախ կապվում է հետևյալ բայերի հետ՝ *sehen* (*տեսնել*), *begießen* (*ջրել*), *trauen* (*վստահել*), *schmecken* (*համտեսել*), *bieten* (*առաջարկել*), *rinnen* (*հոսել*), *laufen* (*վազել*), *fallen* (*ընկնել*), *sich versorgen* (*հոգալ*), *verderben* (*փչանալ*), *stinken* (*վատ հոտ արձակել*), *schwitzen* (*քրտնել*), *schwimmen* (*լողալ*), *fischen* (*ծուկ որսալ*), *lassen* (*թողնել*), *abgraben* (*փորել*), *fragen* (*հարցնել*), *zerstören* (*ավերել*), *halten* (*բռնել*), *reißen* (*պոկել, պատռել*), *verderben* (*փչանալ*), *fließen* (*հոսել*), *löschen* (*մարել*) և այլն:

Հայերենում հաճախակի կիրառությամբ աչքի են ընկնում հետևյալ բայերը՝ *բերել, լցնել, փալ, սուզվել, ազատել, ընկնել, գողանալ, եռացնել, խմել, հոսել, գտնել, գցել, փանել, մաղել, պահել, պարզել, պղպորվել, երթալ, վեր ածել* և այլն:

Ամփոփելով կարելի է ասել, որ երկու լեզվամշակույթներում էլ «Wasser/ջուր» բաղադրիչով դարձվածքները մեծ թիվ են կազմում, որը պայմանավորված է ջուր նյութի կենսական կարևորությամբ մարդկանց

կյանքում: Հաճախ հանդիպում են միևնույն դարձվածքի մի քանի տարբերակներ և կարիք է լինում որոշել, թե դրանցից որն է ամենագործածականը: Հայերենում դրանք արևելահայերեն և արևմտահայերեն ձևերն են, ինչպես նաև բարբառային տարբերակները: Գերմաներենում ևս հանդիպում են դարձվածքների բարբառային կամ տարածքային ձևեր: «Wasser/ջուր» բաղադրիչով դարձվածքների իմաստային դաշտի վերլուծությունից պարզ է դառնում, որ «ջուր»-ը երկու լեզուներում խորհրդանշում է թե՛ դրական, թե՛ բացասական հատկանիշներ: Ակնհայտ է, որ առավել հաճախ հանդիպող իմաստները երկու լեզուներում առկա են, սակայն դարձվածքների գերակշռող մեծամասնությունը հանդես է բերում միայն տվյալ լեզվին բնորոշ իմաստներ: Երկու լեզուների համընդհանուր իմաստները կապված են հիմնականում ջրի ֆիզիկական, որակական, գործառական հատկանիշների, մարդու արտաքին տեսքի և բնավորության գծերի, ջրի կենսաբարության և վտանգավորության հետ: Տարբերություններից հետաքրքրական է ջրի համընդհանրական ունեցվածք լինելու գաղափարը գերմաներենում, իսկ հայերենում ջուր բաղադրիչի առկայությունը՝ անեծքներում, օրհնանքներում, որպես արհամարանք կամ պաթետիկ հարց հնչող արտահայտություններում: Տարբերությունները կոչված են մեկ անգամ ևս հավաստելու, որ դարձվածքները պարզապես լեզվական միավորներ չեն, դրանք ունեն խիստ ընդգծված մշակութային հիմք: Այդ մշակութային բաղադրիչ պարունակող իմաստները միշտ չի, որ ակնհայտ (էքսպլիցիտ) են, դրանք ավելի հաճախ ներակա (իմպլիցիտ) են:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աճառյան Հ., Հայերենի արմատական բառարան, Երևանի պետ. համալսարան, 1926-1935թթ., էջ 134:
2. Բեդիրյան Պ., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Եր., ԵՊՀ հրատ. 2011, էջ 418-419:
3. Ղանալանյան Ա., Առաձանի, ՀՍՍՀ Գիտությունների Ակադեմիա, Երևան, 1960, էջ 48:
4. Burger, H.: Phraseologie. Eine Einführung am Beispiel des Deutschen. Erich Schmidt Verlag. 1998, s. 17.
5. Duden, Deutsches Universal Wörterbuch-Mannheim-Leipzig-Wien- Zürich- 1996, s. 680.

6. Duden. Redewendungen. Wörterbuch der deutschen Idiomatik 3., überarbeitete und aktualisierte Auflage. B.II / Dudenverlag, Mannheim, Zurich., 2008, s. 541.
7. Kluge, Etymologisches Wörterbuch der deutschen Sprache, de Gruyter, Erweiterte 23. Auflage, s. 876.
8. Брутян Г., Гипотеза Сепира-Уорфа: лекция, прочитанная в Лондонском университете в 1967 году, Луйс, Ереван, 1968, стр. 70.

ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=7&dt=H_Y_HY&pageNumber=2163
2. http://woerterbuchnetz.de/cgibin/WBNetz/wbgui_py?sigle=Wander&mode=Vernetzung&lemid=WH00659#XWH00659

REFERENCES

1. Atwar'yan H., Hayereni armatakan bar'aran, Er&ani pet. hamalsaran, 1926-1935t't', e'j 134
2. Bediryan P., Hayeren dard'vac'qneri y'ndard'ak bacatrakan bar'aran, Er&an EPH hrat. 2011, e'j 418-419
3. Ghanalanyan A., Ar'ac'ani, HSSH Gitowt'yowneri Akademia, Er&an, 1960, e'j 48
4. Brutjan G., Gipoteza Sepira-Uorfa : lekcija, prochitannaja v Londonskom universitete v 1967 godu, Lujs, Erevan, 1968, str. 70

ՏԻՐԱՆՍԻՍՊՈՐՏԱԿԱՆ ՍԵՄԱՆՏԻԿԱԿԱՆ ՖՐԱԶԵՕԼՈԳԻԶՄՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԱԿՈՒՄԸ ԵՎ ԳՐԱԿԱՆԱԿՈՒՄԸ ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԿԱՆԱԿՈՒՄԸ

Ключевые слова: лингвокультура, концепт, семантическое поле, фразеологизм, коннотативное значение

Настоящая статья посвящается изучению фразеологизмов с компонентом “вода” в немецком и армянском языках. Сравнение показывает, что компонент “вода” во фразеологизмах обоих языков выявляет многие коннотативные значения, как имплицитно, так и эксплицитно. В обоих языках значения фразеологизмов в основном не совпадают, и это обусловлено разным менталитетом и языковым мышлением, разным восприятием мира этими народами.

**SIRANUSH PAPOYAN - SEMANTIC FEATURES OF LINGUOCULTURAL
CONCEPT “WATER” IN GERMAN AND ARMENIAN**

Keywords: concept, linguo-culture, semantic field, phrase, connotative meaning

This article is devoted to the study of the features of the linguistic and cultural concept “water” in the German and Armenian languages. The examples have been chosen from idiomatic dictionaries and electronic sites. The usage of the concept in the idioms is related to the lingual thinking, psychological and cultural peculiarities of the native speakers, and the study allows to complete the very important linguo-cultural reflection of **the** concept “**water**” in the idiomatic level of the two languages.

Ներկայացվել է՝ 02.03.2021
Գրախոսվել է՝ 04. 03. 2021

**ТЕОРЕТИЧЕСКИЕ ОСНОВЫ ИССЛЕДОВАНИЯ АКСИОЛОГИЧЕСКОЙ
ПРОБЛЕМАТИКИ****ЛУСИНЕ САРКИСЯН**

***Ключевые слова:** ценность, аксиология, аксиологическая проблематика, философия*

В данной статье рассматриваются вопросы становления и развития аксиологии, сущность ценностного фактора в природно-социальном развитии. Следует отметить, что в настоящее время в связи с глобальным духовно-ценностным кризисом, который испытывает человечество на рубеже эпох, аксиологические исследования становятся особенно актуальными.

Целью данной статьи является изучение понятия «ценность» и анализ проблематики аксиологии от древних времен до наших дней на основе теоретических материалов различных философов и социологов.

Для достижения цели нами поставлены следующие задачи:

- определить понятие ценности и рассмотреть проблему ценностей;
- проанализировать историю становления аксиологии и выявить современные особенности ее развития;
- исследовать теоретические вопросы аксиологической проблематики на протяжении ее развития.

Проблематика ценностей имеет глубокую историко-философскую традицию и на протяжении существования человеческого общества привлекала мыслителей различных эпох. Представления об этом феномене менялись с древнейших времён до наших дней, постепенно усложнялись и совершенствовались, принося собственные оттенки в изучение ценностной проблематики. Как специфическая область философского знания, аксиология берет свое начало в середине XIX века у Р. Лотце, в дальнейшем у представителей Баденской школы неокантианства, а в конце столетия в творчестве Ф. Ницше.

Каждая историческая эпоха характеризуется специфическим набором и иерархией ценностей, система которых выступает в качестве наиболее высокого уровня социальной регуляции. Ценностные системы формируются и трансформируются в историческом развитии общества, в

особенности, в глубинных процессах, происходящих в обществе под воздействием экономических и политических преобразований.

Центральный момент всякого рассуждения о ценностях – это определение самого понятия ценности. Понятие «ценность» употребляется в языке весьма многозначно: как стоимость предмета, как его значимость для субъекта, как некоторое свойство предмета наряду с другими его свойствами и как сам предмет, имеющий определенную значимость для человека. Определение ценности в таком понимании предполагает решение вопросов о соотношении ценностей и предметов, о природе ценностей, их источнике, способе существования (Подлесный и Шубин 2019: 17).

Ценности – это предметы и явления, с которыми имеет дело человек в своей практике в аспекте их значимости. Понятие ценности употребляется для обозначения некоторых высших принципов жизни, поведения, норм и идеалов, к которым стремится общество. Это означает, что ценности объединяют в себе и материальную и духовную составляющие, и это первое, что следует учитывать при определении понятия ценности

(<https://iphlib.ru/library/collection/newphilenc/document/HASH01018e6b4d1aefc3392301>).

Доктор филологических наук, профессор Егиазарян Г.В. в своей монографии «Аксиологическая парадигма произведений английских и американских писателей» рассматривает и изучает понятие ценности. Рассмотрим некоторые из определений, которые автор дает данному понятию.

- Ценность – это философское понятие, которое представляет углубленные слои бытия и внутреннего мира человека.
- Ценность – это выражение чувств, то, что ценное для человека, людей и всего общества.
- Ценность – это факт универсального значения, определенного специфического и исторического значения, показатель социальной и культурной значимости, который указывает на определенные явления, объекты и социальные отношения, которые ценятся в контексте добра и зла, истины и лжи, красоты и уродства, справедливости и несправедливости. (Егиазарян 2020: 7-8)

Античное мировосприятие оценивало ценность как прекрасное, благое и истинное во всем многообразии его форм. Сократ впервые обосновал идею о том, что прекрасное, благое исключительно требует особой оценки. Начиная с Протагора, Сократа и Платона в европейскую

философию проникает идея антропологической оценки всего сущего, как соизмеримого с человеческим императивом. В классической греческой философии, в частности у Платона, происходит разграничение реального и идеального бытия, где ценность, как высшее воплощение идей блага, истины, красоты является объективной реальностью. В диалоге «Филеб» Платон создает первую классификацию ценностей, составляющих «высшее благо» – «что драгоценное у людей и у богов» (Баева 2004: 10). По сути, ценностные категории у Платона выступают воплощениями нравственного и эстетического идеала, которые проявляются в материальном мире копии, далекие от совершенства.

Аристотель, давая классификацию благ, оперирует понятием «ценность» и связанным с ним «ценимое», «ценное»: «из благ одни относятся к ценимым, другие – к хвалимым вещам, третьи – к возможностям. Ценимым я называю благо божественное, самое лучшее, например, душу, ум, то, что изначально, первопринцип и тому подобное. При чем ценимое – это почитаемое, и именно такого рода вещи у всех в чести» (Баева 2004: 12). Таким образом, ценности в философии Аристотеля получают онтологическое основание.

Проблема ценностей была одной из центральных в учении стоиков. Диоген Лаэртский писал, что «ценность есть, во-первых, свойственное всякому благу содействие согласованной жизни, во-вторых, некоторое посредничество или польза, содействующая жизни, согласной с природой, в-третьих, меновая цена товара... Предпочтительное – это то, что имеет ценность, например, такие душевные свойства как дарование, искусство, совершенствование и тому подобное, или такие телесные свойства как жизнь, здоровье, сила, благосостояние, безущербность, богатство, слава, знатность и прочее» (Баева 2004: 13). Ценность в стоицизме тесно связана с объективностью и общезначимостью.

Ценность как феномен культуры является предметом исследования особой науки – аксиологии. В философских учениях древности и средневековья происходит формирование этико-эстетических основ ценностного мировоззрения, которое неизбежно связано с выявлением и утверждением духовных ориентиров личной и собственной жизни. Аксиология здесь еще не является самостоятельной дисциплиной, само понятие «ценность» анализируется не логически и теоретически, а скорее «эмпирически», описательно на уровне феномена. И если изучение теоретических проблем аксиологии начинается только с XIX века, то исследование содержательного, практического наполнения ценности происходит уже в древней философии. Следует понять, что аксиология

как особый раздел философского знания связана с понятием бытия, которое расщепляется на два элемента: реальность и ценность. В этом случае, задача аксиологии заключается в том, чтобы показать возможности практического разума в общей структуре бытия (Баева 2004: 7).

Аксиология за философскими словарями (греч. *axia* - ценность, *logos* – слово, учение) определяется как философское исследование природы ценностей (Фролова 1987: 11), как философская дисциплина, которая занимается исследованием ценностей смылосозидательных основ человеческого бытия, которые задают направленность и мотивацию человеческой жизни, деятельности и конкретным действиям и поступкам (Грицанов 2001: 26).

С философской точки зрения аксиологической проблематика основана на трех теориях:

1. Объективно-идеалистическая теория, где ценность есть потусторонняя сущность вне времени и пространства.

2. Субъективно-идеалистическая теория, где ценность - явление сознания, проявление психологического настроения субъективного отношения человека к рассматриваемому предмету.

3. Натурареалистическая теория, где ценность рассматривается как выражение естественных потребностей человека или законов природы в целом. (<https://studfile.net/preview/3547343/page:2/>)

Возникновение и развитие аксиологической проблематики обнаруживаются в древнекитайских философских учениях. В книге «Шу цзин» («Книга истории» или «Книга документов»), составленной и обработанной Конфуцием, отмечаются пять способностей человека: внешний облик, речь, зрение, слух, мышление, пять проявлений счастья: долголетие, богатство, здоровье тела, спокойствие духа, «любовь к целомудрию», «спокойная кончина» и пять несчастий: «сокращенная бедствиями жизнь», болезнь, горе, нищета, уродство тела, слабость ума (Древнекитайская философия 1972: 111).

Основой развития аксиологической или ценностной проблематики стали философские изучения Сократа о формулировке подлинности смысла слова с точки зрения аксиологии. Он зафиксировал важнейшую черту морального поведения человека: разницу между тем, чем человек является на самом деле и тем, что он думает о себе, т.е. между реальными мотивами и сознательным мотивированием, между действительными ценностными установками личности и вербально сформулированными целями, оценками своего поведения. Для морального сознания вытекает,

что человек может быть лучше, и поэтому путь к счастью состоит в самосознании, познании того лучшего, что есть в каждом.

Античная философия уже обнаруживает тенденцию к осмыслению ценностных отношений и отчасти задает логику последующего развития аксиологии от синкретического, ценностно-нерасчлененного миропредставления к осознанию этических, эстетических, познавательных, утилитарно-практических и других ориентаций.

Средние века оказались для аксиологии в собственном смысле «темными веками». Схоластическая мысль подробно и казуистически исследовала теологическую проблематику, онтологию блага, иерархическую субординацию благ, различение благ условных и блага безусловного, но внутренний мир личности и конституирующих его ценностей был для нее еще закрыт.

В современных условиях аксиология рассматривается как теория ценностей и характеризуется существенным перемещением внимания на общечеловеческие ценности, которые определяются в сознании людей современными реалиями бытия. Следовательно, центральным понятием в аксиологии является понятие ценности, которое характеризует социокультурное значение явлений действительности, включенных в ценностные отношения (Философский словарь 1987).

В центре внимания современной аксиологии находятся постоянства мировой динамики, изменения научного дискурса, меняющиеся ценности в меняющемся мире, процесс возникновения, бытия, утраты, исчезновения и возможного возрождения ценностей в социокультурном пространстве, в сознании отдельного человека, народов, человечества в целом.

Аксиология сегодня - наука междисциплинарная, и способна задавать философско-аксиологические основания другим научным дисциплинам. Она активно вступает в диалогические отношения со множеством других научных дисциплин. Особенно показательным сейчас взаимодействие аксиологии и лингвистики, на основе которого стало возможным появление и развитие такой междисциплинарной научной области как лингвоаксиология (Ярошенко 2004: 32). Ведь процесс понимания, усвоения, наследования и передачи ценностных смыслов в истории человеческой культуры осуществляется в языке, посредством языка выражается ценностное отношение человека к миру.

Аксиология в широком смысле - философская наука о ценностях. Изначально она состояла как дисциплина, определившая само понятие «ценность», важнейшей из категорий духовного мира, и обозначившая приоритет духовных ценностей для человека как существа, созидającego

мир культуры и творчески реализующего себя в нём как личность. Прежде аксиология основывалась преимущественно на применении статического подхода, она утвердила свою позицию, занимаясь прояснением природы ценностей, их выявлением, систематизацией и анализом их разновидностей, утверждением «вечных» ценностей и ценностных абсолютов (Ткачова 2006: 21).

В заключение можно сказать, что каждой исторической эпохе присущ определённый спектр проблематики ценностных ориентиров, который в процессе развития общества подвергается трансформациям под влиянием разного рода факторов. И тем не менее существуют непоколебимые ценности, которые входят в аксиологическую парадигму современности.

СПИСОК ЛИТЕРАТУРЫ

1. Баева Л.В., Ценности изменяющегося мира: экзистенциальная аксиология истории, Изд-во АГУ, 2004, 277 с.
2. Грицанов А.А. Всемирная энциклопедия: Философия М., АСТ, Мн.: Харвест, Современный литератор, 2001, 590 с.
3. Древнекитайская философия, Собрание текстов, Т. 1, М., Мысль, 1972, 363 с.
4. Подлесный М.Н., Шубин В.И. Аксиология. Избранные этюды: монография. Днепр: ЛИРА, 2019, 204 с.
5. Ткачова Н.О. Аксиологічний підхід до організації педагогічного процесу в загальноосвітньому навчальному закладі: [монографія] // Ткачова Н.О. - Луганськ: ЛНПУ імені Т.Г. Шевченка; Х.: Видавництво "Каравелла", 2006, 300 с.
6. Фролова И.Т. Философский словарь, М., Политиздат, 1987, 590 с.
7. Եղիազարյան Գ.Վ., Անգլիացի և ամերիկացի գրողների արժեքանախան հարացույցը: Մենագրություն. Եր., Հեղ. Հրատ., 2020, 356 էջ:

ССЫЛКИ

8. <https://iphlib.ru/library/collection/newphilenc/document/HASH01018ece6b4d1aefc3392301>
9. <https://studfile.net/preview/3547343/page:2/>

REFERENCES

1. Baeva L.V., Cennosti izmenjashegosja mira: ekzistencial'naja aksiologija istorii, monografija, izd.-vo AGU, 2004, 277 s.
2. Gricanov A.A., Vsemirnaja enkciklopedija: Filosofija M.: AST, Mn.: Kharvest, Sovremennyj literator, 2001, 590 s.

3. Drevnekitajskaja filosofijs, Sobranie tekstov, V 2-kh t., t. 1. - M.: Mysl', 1972, 363 s.
4. Podlesnyj M.N., Schubin V.I., Aksiologija, Izbrannye etjudy: monografija, Dnepr: LIRA, 2019, 204 s.
5. Tkachova N.O., Aksiologichnyj pidkhid do organizacii pedagogichnogo processu v zag. - u navchal'nomu zakladi: [monografija] // Tkachova N.O., Lugans'k: LNPU imeni T.G. Shevchenka; Kh.: Vidavnictvo "Karavella", 2006, 300 s.
6. Frolova I.T., Filosofskij slovar', M.: Politizdat, 1987, 590 s.
7. Yeghiazaryan G.V., Angliaci ev amerikaci kin groghneri erkeri arjheqabanakan haracujcy, menagrutyun, Erevan 2020, 356 edj

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ - ԱՐԺԵՐԱՆԱԿԱՆ ԽՆԴՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Հիմնաբաներ՝ արժեք, արժեքանություն, արժեքանական խնդրաբանություն, փիլիսոփայություն

Հոդվածում ներկայացվում են արժեքանության ծագման և զարգացման խնդիրները: Ժամանակակից աշխարհում, կապված հոգևոր արժեքների գլոբալ ճգնաժամի հետ, որը մարդկությունն ապրում է դարերի սահմանգծում, արժեքանական հետազոտությունները դառնում են առավել արդիական:

Այս հոդվածի նպատակն է ուսումնասիրել “արժեք” հասկացությունը և ներկայացնել արժեքանության վերլուծությունը հին ժամանակներից մինչև մեր օրերը՝ հիմնվելով տարբեր փիլիսոփաների և սոցիոլոգների տեսական ուսումնասիրությունների վրա:

LUSINE SARKISIAN - THEORETICAL BACKGROUND OF AXIOLOGICAL PROBLEMATICS

Keywords: *value, axiology, axiological problematics, philosophy*

The article deals with the problem of the formation and development of axiology, the essence of the 'value' in natural-social development. It should be noted that at present, in connection with the global spiritual and value crisis that humanity is experiencing at the turn of the epochs, axiological studies are becoming relevant.

The purpose of this article is to study the concept “value” and analyze the problems of axiology from ancient times to the present day on the basis of theoretical materials of various philosophers and sociologists.

Ներկայացվել է՝ 24.02.2021

Գրախոսվել է՝ 24.02.2021

Երաշխավորվել է ԲՊՀ Անգլերենի ամբիոնի կողմից՝ 24.02.2021

**ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԻ ՄԵՂՄԱՍՈՒԹԱՅԻՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ**

ՍՅՈՒՋԱՆՆԱ ԱՏԵՓԱՆՅԱՆ

Հիմնաբառեր՝ կրավորական սեր, մեղմասության գործառույթ, քաղաքական խոսույթ, տեղեկության աղավաղման լեզվական գործիք

Ժամանակակից անգլալեզու քաղաքական խոսույթը լի է մեղմասութենով: Տվյալ ուսումնասիրության մեջ մենք կփորձենք վերլուծել ամերիկյան քաղաքական գործիչների կողմից կրավորական կառույցների օգտագործման դերը քաղաքական խոսույթում՝ կենտրոնանալով կրավորական կառույցների մեղմասության կիրառման առանձնահատկությունների վրա:

Մեղմասույթը առավելապես հանդես է գալիս բառային մակարդակում՝ փոխաբերության, փոխանության, թերագնահատման, չափազանցության և այլ ոճական հնարների միջոցով: Այնուամենայնիվ, մեղմասութի կիրառությունը չի սահմանափակվում բառային մակարդակով. հաճախ կարելի է նկատել մեղմասութի բնորոշ գործառույթների իրականացումը բառակապակցության կամ անգամ՝ նախադասության միջոցով: Պատահական չէ, որ նախադասության քերականական կառույցի ոճական ուսումնասիրությունը կարող է վերհանել մեղմասության որոշակի ռազմավարության կիրառում:

Ուսումնասիրության շրջանակներում մենք կփորձենք դիտարկել և վերլուծել անգլախոս քաղաքական գործիչների կողմից կրավորական սերի մեղմասության կիրառման օրինակներ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կրավորական սերի կիրառումը չափազանց տարածված է անգլերեն լեզվում:

Յուրաքանչյուր բառ, նախադասություն, որ մենք ընտրում ենք օգտագործել, յուրաքանչյուր խոսույթ, որի հետ մենք մեզ նույնացնում ենք, սահմանում է մեր էությունը, ձևավորում մեր գիտակցությունն ու իրականությունը: Բառերի ընտրությունը արտացոլում է տվյալ անձի որոշակի մտածելակերպը, համոզմունքները, հավատամքը, գաղափարախոսությունը, նրա հարումը այս կամ այն տեսակետին, հասարակական, քաղաքական կամ էթնիկ խմբին:

Հասկացությունները մեղմասույթի միջոցով բնորոշելիս մենք ասես դիտարկում ենք դրանք օբյեկտի խցիկի միջոցով: Արդյունքում, ինչպես պատկերն է արտացոլվում գլխիվայր, այնպես՝ հասկացությունը աղավաղվում ու ներկայանում է որպես բոլորովին այլ բան:

Գաղտնիք չէ, որ քաղաքականության մեջ լեզուն կարևորագույն և չափազանց հզոր գործիք է: Որոշակի լսարանին դիմելու նպատակով համապատասխան լեզվական հնարքների և միջոցների ընտրությունը կարող է ապահովել ոչ միայն քաղաքական գործչի, այլև՝ նրա ներկայացրած քաղաքական կուսակցության դրական պատկերը՝ իմիջը: Չպետք է մոռանալ, որ քաղաքական լեզուն «նպատակաուղղված լեզու է»․ քաղաքական գործիչները լեզվական միջոցների կիրառման միջոցով հասնում են փոխհամաձայնության, ապահովում են աջակցություն, ազդում են մարդկանց կարծիքի վրա, ինչպես նաև՝ գրավում են պոտենցիալ ընտրողների:

Իրականում, քաղաքական գործիչները երբեք պատահական խոսքային ձևակերպումներ չեն կիրառում, անգամ եթե դա առաջին հայացքից այդպես թվա: Համապատասխան թվացող արտահայտությունը, ակնարկը ևս որոշակի թաքնված նպատակ է հաճախ հետապնդում՝ հնչելով անկեղծ ու առօրեական և այդպիսով որոշ մտերմության տպավորություն առաջացնելով ունկնդրողների շրջանում: Քաղաքական գործիչների ելույթների ու ակնարկների բառապաշարն ու լեզվական կառույցները կոնկրետ նպատակ են հետապնդում և գիտակցված, զգուշավոր ընտրության արդյունք են:

Ժամանակակից քաղաքական գործիչները հաճախ են դիմում քաղաքական պատշաճության կիրառմանը՝ միաժամանակ թե՛ հանրության խնդիրների հանդեպ նրբանկատ մոտեցում ցուցաբերելու, թե՛ հանրության աջակցությունը ապահովելու և քաղաքական հակառակորդին քննադատելու նպատակով:

Քաղաքական գործիչները հաճախ խուսափում են այն բառերից կամ արտահայտություններից, որոնք կարող են տհաճ զուգորդումներ առաջացնել և բացասական տպավորություն գործել իրենց լսարանի վրա: Հենց այս դեպքում է, որ նրանք դիմում են մեղմասույթ կոչվող լեզվական հնարքին, որի միջոցով հնարավոր է դառնում «մաքրել» անհարմար, տհաճ հասկացությունը անտեղի և վիրավորական երանգներից՝ այսպիսով ապահովելով որոշակի անհարմար թեմաների անդրադառնալու անվտանգ եղանակ՝ առանց քաղաքական պատշաճության և հասարակական նորմերը խախտելու:

Հաշվի առնելով այն, որ քաղաքական լեզուն և, առհասարակ, քաղաքական խոսույթը առավելապես հանրային լսարանին են ուղղված,

խուսափողական բառապաշարն ու մեղմասության լեզվական ռազմավարությունը երբեմն կարող են արտացոլել քաղաքական գործիչների՝ հանրության խնդիրների հանդեպ նրբանկատությունը:

Մեղմասությոն իր բնույթով բավական բազմանշանակ և բազմաշերտ լեզվական միջոց է, որը կարող է իրականացնել բազմաթիվ գործառույթներ: Մենք հակիրճ անդրադառնալով մեղմասության հիմնական գործառույթներին՝ կկենտրոնանանք այն գործառույթների վրա, որոնք կապված են մեղմասության միջոցով տեղեկատվության մտադրված խեղաթյուրման ու լսարանի ապակողմնորոշման դեպքերի հետ: Մասնավորապես մեր ուշադրության կենտրոնում է կրավորական սեռի մեղմասության կիրառումը, որը քաղաքական խոսույթում հաճախ հակասական թեմաներից խուսափելու կամ դրանց անդրադառնալը անհետևանք ու անխոչընդոտ դարձնելու նպատակ է հետապնդում:

Նախ և առաջ անդրառադնալով «մեղմասությո» ռճական հնարի բնույթին՝ նշենք այդ երևույթը խորապես ուսումնասիրած մի քանի հեղինակների սահմանումները: Այն դեպքերում, երբ մեղմասությոն դիտավորյալ կիրառվում է մարդկանցից իրական փաստերը քողարկելու կամ մտադրված կերպով ապակողմնորոշելու և խաբելու նպատակով, մեղմասությոն վերածվում է հաղորդակցության վնասակար միջոցի, որը Վ. Լուցի բնորոշմամբ՝ երկիմաստ խոսքի (doublespeak) դրսևորում է (Lutz: 1987, 1999), իսկ Ա. Քեյսի և Ք. Բրիջի բնորոշմամբ վերոհիշյալ դեպքերը ապակողմնորոշող մեղմասության դրսևորումներ են (Allan, BurrIDGE 1991: 13): Այս տեսակի մեղմասությունները քաղաքական խոսույթում իրականացնում են երկու սկզբունքորեն տարբեր գործառույթներ, մասնավորապես՝ մեղմացնել սեփական պատվի հանդեպ սպառնալիքը (միջանձնային գործառույթ) և ներկայացնել իրականության՝ սեփական շահերից բխող պատկեր (գաղափարական գործառույթ), որոնք Ս. Լյուխտենբերգը համապատասխանաբար սահմանում է որպես՝ շղարշող գործառույթ և քողարկող գործառույթ (Luchtenberg 1985):

Բրիտանացի գրող Ջորջ Օրվելը իր «Քաղաքականությունը և անգլերեն լեզուն» աշխատության մեջ կոչ է անում՝ «երբեք մի օգտագործեք կրավորական սեռ այն դեպքում, երբ հնարավոր է օգտագործել ներգործական սեռ» (Orwell 1946: 8): Եվ սա պատահական չէ: Քաղաքականության մեջ ընդգրկված մարդիկ հաճախ խոսում են թափանցիկության մասին՝ մոռանալով, որ թափանցիկությունը ոչ այնինչ է, քան՝ պարզություն: Յուրաքանչյուր անգամ, երբ մենք պարզ ենք արտահայտում մեր միտքը, մենք նաև ապահովում ենք դրա թափանցիկությունը: Միևնույն ժամանակ, երբ քաղաքական գործչի

խոսքը կորցնում է իր թափանցիկությունը, նա կորցնում է ժողովրդի վստահությունը:

Ամերիկացի նշանավոր գրող Սթիվեն Քինգը գրավոր խոսքին նվիրված իր՝ «On Writing: A Memoir of the Craft» ստեղծագործության մեջ իր հերթին նշում է, որ կրավորական սեռի կիրառումը անվճռական և թույլ մարդկանց ընտրությունն է, ովքեր, դիմելով կրավորական սեռին, գերադասում են իրենց մտքերն արտահայտել ամենից անվտանգ ձևով (King 2002):

Հարց է առաջանում. այդ դեպքում՝ ինչու՞ է կրավորական սեռը «այդքան մեծ համբավ վայելում» քաղաքական խոսույթում: Հենց այդ հարցին է, որ մենք կփորձենք պատասխանել տվյալ հակիրճ ուսումնասիրության շրջանակներում:

Չնայած կրավորական սեռի կիրառումը քաղաքական խոսույթում կարող է վեհ նպատակների ծառայել, այն կարող է նաև նենգ դրդապատճառների հետևանք լինել: Տվյալ ուսումնասիրություն մեջ մեզ ավելի հետաքրքրում են կրավորական սեռի ապակողմնորոշող, տեղեկությունը քողարկող առանձնահատկությունները, որոնք իրենց հերթին բնորոշ են մեղմասույթ ոճական հնարին: Գաղտնիք չէ, որ կրավորական սեռի կիրառումը քաղաքական խոսույթում հաճախ ծառայում է իբրև ընդունված լեզվական գործիք տեղեկության աղավաղման և քողարկման հարցում: Հետևաբար, մենք դիտարկելու ենք կրավորական սեռի նման կիրառումը որպես մեղմասութային, ընդ որում՝ մեղմասութի ոչ բառային, այլ՝ շարահյուսական մակարդակում իրացվող որոշակի գործառույթների իրականացման միջոց:

Կրավորական սեռի մեղմասութային կիրառումը որոշ մասնագետներ կոչում են «խորամանկ կրավորական» (sneaky passive), «անցյալը արդարացնող կրավորական» (past exonerative), կամ՝ «ներողություն չարտահայտող ներողություն» (non-apology apology) (Tavris, Aronson 2007): Չնայած կրավորական սեռի մեղմասութային կիրառումն իր բնույթով նախ և առաջ լեզվական երևույթ է, դրա՝ քաղաքական խոսույթում օգտագործման դրդապատճառներն ու հետևանքները կարող են այնքան բազմանշանակ լինել, որ դրանց խորը վերլուծությունը կարող է ընդգրկել հոգեբանության, սոցիոլոգիայի, քաղաքագիտության և այլ ոլորտներ: Ամերիկացի հոգեբաններ Քերոլ Թավրիսն ու Էլիոտ Արոնսոնը 2013 թ-ին «սխալներ արվել են» հասկացության ուսումնասիրությանը անգամ համատեղ աշխատություն են նվիրել՝ «Սխալներ արվել են, (բայց ոչ իմ կողմից). ինչու ենք մենք արդարացնում անմիտ համոզմունքները, վատ որոշումները և վնասակար գործողությունները» վերնագրով (Mistakes Were Made (but Not by Me): Why We Justify Foolish Beliefs, Bad

Decisions and Hurtful Acts) (Tavris, Aronson 2007): Ոսումնասիրության հեղինակները պնդում են, որ մենք ինքներս մեր գիտակցության հետ խաղեր ենք խաղում՝ մեղադրանքներից խուսափելու նպատակով: Նրանք առանձնացնում են գիտակցության հետևյալ խաղերը՝ իմացական աններդաշնակություն (cognitive dissonance), որը ժխտման յուրօրինակ մեթոդ է, իմացական կողմնակալություն (cognitive biases). մտավոր խաղեր, որ մենք մեզ վրա ենք իրականացնում, հաստատման կողմնակալություն (confirmation bias) , որի դեպքում մենք, ըստ մեր հարմարության, խմբագրում ու ու հեռացնում ենք այն փաստերը, որոնք հակասում են մեր նախապաշարումներին, և վերջապես՝ «Իմ խնդիրը չէ» համախտանիշ (Somebody Else's Problem Syndrome), որն ապահովում է մեր անտարբերությունը մեզ հետ ուղղակիորեն չառնչվող խնդիրների հանդեպ (Tavris, Aronson 2007):

Բավական հետաքրքրական է այն փաստը, որ կրավորական սեռը քաղաքական խոսքում ակտիվ գործածության մեջ է եղել դեռ վաղուց: Քաղաքականության մեջ դրա կիրառման ամենահայտնի օրինակներից է Միացյալ Նահանգների Անկախության Հռչակագրում Թոմաս Ջեֆերսոնի՝ հետագայում աֆորիզմ դարձած բառակապակցությունը, այն է՝ «բոլոր մարդիկ ստեղծված են հավասար»: Միացյալ Նահանգների հիմնադիրները կարող էին այս բառակապակցությունը նաև հետևյալ կերպ ձևակերպել՝ «Աստված բոլոր մարդկանց հավասար է ստեղծել»: Այնուամենայնիվ, նրանք գերադասել են չօգտագործել վերոհիշյալ ձևակերպումը: Դիմելով այդ քայլին՝ նրանք խուսափել են փաստաթղթում «Աստված» բառի կիրառումից, միևնույն ժամանակ՝ խուսափելով քաղաքական հռչակագիրը կրոնականի վերածելուց: Արդյունքում, նրանց հաջողվել է պահպանել հռչակագրի աշխարհիկ ձևակերպումը:

Ինչևէ, եթե Անկախության Հռչակագրի հեղինակները, կիրառելով կրավորական սեռ, ձգտում էին պահպանել կրոնական տեսանկյունից փաստաթղթի չեզոքությունը, ապա՝ ժամանակակից քաղաքական գործիչները հաճախ զգալիորեն պակաս բարոյական շարժառիթներ են հետապնդում:

Այս լեզվական «գործիքը» իրականում որոշակի գործողությունների համար պատասխանատվությունից խուսափելու կատարյալ միջոց է: Միաժամանակ, այն խոսողին հնարավորություն է տալիս կիրառել անորոշ ձևակերպումներ առանց մանրամասնությունների, որը մեղմաստությամբ բնորոշ գործառույթներից մեկն է. արդյունքում՝ հնարավոր է դառնում ազդել կոնկրետ լսարանի գիտակցության վրա և նույնիսկ՝ աղավաղել իրականության նրանց պատկերացումը: Երբ հաղորդակցության աղբյուր հանդիսացողը օգտագործում է կրավորական

սեռ, նա հնարավորություն է ստանում ասել, որ ինչ-որ բան տեղի է ունեցել՝ առանց տրամադրելու տեղեկություն, թե ով է դա արել և ինչպես: Այն դեպքում, երբ կրավորական սեռի կիրառումը դիտավորյալ բնույթ է կրում, այն բացահատ մեղմասութային գործելաոճ է՝ հաշվի առնելով մեղմասութիւն բնորոշ՝ իրականությունը քողարկելու կամ անորոշ տեղեկություն տրամադրելու գործառնությունները:

Ժամանակակից անգլալեզու քաղաքական խոսույթը բավական հարուստ է կրավորական սեռի նման կիրառումներով: Կրավորական սեռի կիրառման ամենահայտնի օրինակներից է թերևս «սխալներ արվել են» հայտնի արտահայտությունը, որը հաճախ է օգտագործվում ամերիկյան քաղաքական գործիչների կողմից: Հարկ է նշել, որ այն առաջին անգամ օգտագործել է Ամերիկայի նախագահ Ռոնալդ Ռեյգանը «Իրան- Կոնտրա» կամ «Իրանգեյթ» կոչված գործողության առնչությամբ: («Իրանգեյթ»՝ ԱՄՆ-ում տեղի ունեցած մեծ քաղաքական սկանդալ, որը առաջացել էր 1987 թ-ին այն բանից հետո, երբ ամերիկյան վարչակազմի անդամները կազմակերպել էին զենքի գաղտնի ներկրում Իրան՝ դրանով իսկ խախտելով այդ երկրի հանդեպ գործող ամերիկյան զենքի մատակարարման արգելքը: Հետաքննության արդյունքում հետագայում պարզ դարձավ, որ զենքի վաճառքից ստացված գումարները ուղղվում էին Նիկարագուայի Կոնտրաս կոչվող ապստամբների ֆինանսավորման վրա, չնայած նրան, որ կոնգրեսը արգելք էր սահմանել նրանց ֆինանսավորման վրա): <https://www.britannica.com/event/Iran-Contra-Affair> “We did not achieve what we wished, and serious mistakes were made in trying to do so”. (R. Reagen) <https://www.cbsnews.com> «Մենք չհասանք մեր նպատակին, և լուրջ սխալներ են արվել այդ ընթացքում»:

Անկասկած նշված սխալները կատարվել էին առաջին հերթին նախագահի կողմից, սակայն վերոհիշյալ ձևակերպումը հնարավորություն է տվել Ռեյգանին այդ սխալները ներկայացնել որպես իր հետ կապ չունեցող իրողություններ՝ դրանով իսկ խուսափելով պատասխանատվությունից:

Կատարված սխալների մասին նման վերացական կերպով խոսելը՝ առանց մասնավորեցնելու կատարողի ինքնությունը, բավական ընդունված գործելաոճ է ԱՄՆ նախագահների համար: Իրականում վերջին տասնամյակների ընթացքում ԱՄՆ-ի գրեթե բոլոր ղեկավարները կիրառել են նման լեզվական ձևակերպում՝ բնորոշելու իրենց աշխատակազմի կատարած թերացումները: Նախագահ Ջորջ Բուշը 2007 թ-ին անդրադառնալով Իրաքի հանդեպ նոր ռազմավարության անհրաժեշտությանը տվել է հետևյալ ձևակերպումը՝

“Where mistakes have been made, the responsibility rests with me.” (J. Bush)
<https://www.cbsnews.com>
«Այն հարցերում, որոնցում սխալներ են արվել, պատասխանատվությունը ընկնում է ինձ վրա»:

Հետաքրքրական է, որ վերոհիշյալ պնդմամբ Բուշը չի նշում, որ ինքն է սխալներ գործողը և անգամ, որ սխալները միանշանակ կատարվել են:

Չշեշտելով գործողությունը կատարողին՝ Ջ. Բուշը փաստորեն կիրառում է մեղմասության ռճական հնար՝ անուղղակի և անորոշ ձևակերպում արտահայտելով:

ԱՄՆ-ի նախագահ Բիլ Բլինթոնն իր հերթին գերծ չի մնացել «սխալներ են արվել» սիրված արտահայտությունից: 1999 թ-ին Բելգրադում Չինաստանի դեսպանատան սխալմամբ ոմբակոծման կապակցությամբ Բլինթոնը հետևյալ արտահայտությունով է հանդես եկել՝

“A series of very bad mistakes have been made, and a tragic accident occurred”. (B. Clinton) <https://www.cbsnews.com>

«Մի շարք շատ վատ սխալներ են արվել, և դժբախտ պատահար է տեղի ունեցել»:

Ակնհայտ է, որ վերոհիշյալ արտահայտությունը ԱՄՆ-ի նախագահները պատահական չեն կիրառել: Կրավորական սեռի ընտրությունը այս դեպքում կարող է բազմաթիվ դրդապատճառներ ունենալ, որոնցից ամենաակներևը՝ պատասխանատվությունից խուսափելու կամ պատասխանատվությունը իրենից շեղելու փորձն է:

ԱՄՆ-ի երբեմնի նախագահական թեկնածուներից Հիլարի Բլինթոնի՝ կրավորական կառույցի կիրառման ամենահայտնի օրինակներից է 2016 թ-ի թվիթերյան իր էջում նրա տեղադրած հետևյալ արտահայտությունը՝

“Another unarmed Black man was shot in a police incident.” (H. Clinton)
<https://www.washingtonpost.com>

«Եվս մեկ սևամորթ անզեն մարդ է հրազենային կրակից սպանվել ոստիկանական միջադեպում»:

Հարկ է նշել, որ Հիլարի Բլինթոնի այս ակնարկն արվել է Օկլահոմա նահանգում անզեն սևամորթի սպանության կապակցությամբ: Բլինթոնը, գերադասելով կիրառել կրավորական կառույց և չնշելով, որ ոստիկանությունն է կրակել և սպանել անզեն մարդուն, փաստորեն աննկատ ձևով քողարկում է գործողության կատարողին: Կարելի է պնդել, որ այս դեպքում Բլինթոնը կիրառում է նաև «պաշտպանողական»

նազմավարություն (defensive strategy)՝ ոչ բացահայտ կերպով պաշտպանելով ուստիկանությանը:

Ն. Ֆեյրքլոփի ուսումնասիրությունները մատնանշում են խոսույթային կառույցների գաղափարական ազդեցությունը (Fairclough:1989, 2003): Ընդհանրապես գործողության կատարողի ինքնության քողարկումը իրականացվում է տարբեր միջոցներով, այդ թվում՝ կրավորական սեռի օգնությամբ: Կրավորական սեռը խոսողին կամ գրողին հնարավորություն է ընձեռում գործողության կատարողին ընդհանրապես հեռացնել խոսույթից (Simpson 1993):

Կրավորական կառույցներում գործողության կատարողը, փաստորեն, վերածվում է հանգամանքի, որը հեշտությամբ կարելի է բաց թողնել անհրաժեշտության դեպքում: Այն դեպքերում, երբ կրավորական սեռը մտադրված է կիրառվում՝ գործողության կատարողի բաց թողմամբ, գործողության հեղինակը դիտավորյալ կերպով քողարկվում է՝ ներակա (implicit) է դարձվում: Ստրև դիտարկենք ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբամայի կողմից կրավորական սեռի օգտագործման որոշ օրինակներ՝ *“On the same day our civilians were killed in Benghazi, a Turkish police officer was murdered in Istanbul ...; more than 10 Yemenis were killed in...”*. (B. Obama) <http://www.academypublication.com>

«Նույն օրը մեր քաղաքացիներն են սպանվել Բենգազիում, թուրք ոստիկան է սպանվել Ստամբուլում..., ավելի քան 10 Յեմենի քաղաքացի է սպանվել ...»:

Օբամայի կողմից կրավորական կառույցների մեղմասութային այս կիրառումը կարող է մեկնաբանվել այն հանգամանքով, որ գործողությունների ազդեցությունն ու հետևանքը այս կամ այն պատճառով շատ ավելի կարևոր են, քան՝ գործողության կատարողը: Ինչպես նշում է Վան Դիյքը նման կառույցներում ուշադրության կենտրոնը մտադրված շեղվում է գործողության կատարողից (Dijk 2000): Միևնույն ժամանակ այս լեզվական հնարի կիրառումը ենթադրում է գաղափարական որոշակի քողարկված կողմնակալություն: Ստացվում է, որ գործողության համար պատասխանատու անձիք հեռացվում են կիզակետից և գործընթացի մակերևութային պատկերումից. հետևաբար, ուղղակի կատարողները թաքցվում են այն լսարանից կամ հանրությունից, որին այդ պնդումներն ուղղված են (Renkema 2009): Ստորև ներկայացված են Օբամայի կիրառած կրավորական կառույցների երեք այլ օրինակ.

a. Over the next few years, big decisions will be made in Washington....

b. Terrorist plots must be disrupted. Europe's crisis must be contained...(B. Obama) <http://www.academypublication.com/>

ա. Հեղափոխ մի քանի տարիների ընթացքում մեծ որոշումներ կընդունվեն Վաշինգտոնում...

բ. Ահաբեկիչների ծրագրերը պետք է խափանվեն: Եվրոպայի ճգնաժամը պետք է զսպվի...

ԱՄՆ-ի նախկին նախագահ Դոնալդ Թրամփի կողմից կրավորական սեռի նպատակաուղղված կիրառումը ևս բազմաթիվ մեկնաբանությունների առիթ է դարձել: Թրամփը տարբեր առիթներով բազմաթիվ անգամ կիրառել է «to rig» (տվյալ համատեքստում՝ կեղծել) բայը կրավորական կառույցներում: Մասնավորապես, 2020 թ.-ի նախագահական ընտրություններում իր պարտությունից հետո, Ջորջիա նահանգում ելույթի ժամանակ դիմելով իր աջակիցներին՝ Թրամփը հանդես է եկել հետևյալ պնդմամբ՝

"There's no way we lost Georgia. There's no way. That was a rigged election." (D. Trump) <https://www.nbcnews.com>

«Հնարավոր չէ, որ մենք պարտված լինենք Ջորջիայում: Դա անհնար է: Ընտրությունները կեղծվել են»:

Այս օրինակում մենք դիտարկում ենք «to rig» կեղծել բայի Participle 2 ձևի որոշչային կիրառմամբ: Արդյունքը ամեն դեպքում նույնն է գործողության կատարողի ինքնությունը չի շոշափվում:

Վերը նշված օրինակը միայն մեկն է այն բազմաթիվ դեպքերից, երբ Թրամփը կիրառել է «rigged» (կեղծված) բայը: Դեռ 2020թ-ի օգոստոսի 17-ին Վիսկոնսին նահանգում իր նախընտրական արշավի ելույթի ժամանակ Թրամփը արել է հետևյալ կանխատեսումը՝

"The only way we're going to lose this election is if the election is rigged." (D. Trump) <https://abcnews.go.com>

«Միակ հնարավոր տարբերակը, որ մենք պարտություն կրենք այս ընտրություններում, այն կլինի, որ ընտրությունները կեղծվեն»:

Կարելի է պնդել, որ վերը նշված դեպքում կրավորական սեռի օգտագործումը Թրամփի կողմից պարզապես հանրության մեջ ընտրական համակարգի հանդեպ անվստահություն առաջացնելու միջոց չէր և ոչ էլ, առավել ևս՝ պատահականություն: Թրամփը շատ անգամներ ընդհանրացված մեղադրանքներ է հնչեցրել իր քաղաքական հակառակորդների հանդեպ: Սակայն, ամենայն հավանականությամբ, անկարող լինելով հստակ ձևակերպել իր պնդումը թե՛ ուլքեր և ինչպես կարող էին կեղծել ընտրությունները՝ նա դիմել է գործողության կատարողին շրջանցող կրավորական արտահայտությունների: Հավանաբար, այստեղ առկա է նաև մեղմաստությամբ այն գործառույթը, որը ելնում է սեփական պատիվը պահելու, դեմքը փրկելու դրդապատճառներից: Օգտագործելով կրավորական սեռ՝ Թրամփը,

փաստորեն, ուղղակիորեն որևէ մեկի չի մեղադրում. հետևաբար, նա խուսափում էր պոտենցիալ պատասխանատվությունից, որ կարող է առաջ գալ, եթե մեղադրվող անձը փորձեր պահանջել վարկաբեկման համար հիմքեր և դատական ատյաններ դիմեր:

Նախագահական արշավում իր մասնակցության մասին պաշտոնապես հայտարարելուց մեկ օր անց ներկայիս ԱՄՆ-ի նախագահ Ջո Բայդենը ստիպված էր առերեսվել իր անցյալի հակասական պահերից մեկին, այն է՝ թե ինչպես է նա հանգուցալուծել Անիտա Հիլի դատական գործը: Երեսուն տարի առաջ Հիլը վկայություն էր տվել՝ Գերագույն Դատարանի թեկնածու Քլերենս Թոմասին մեղադրելով աշխատավայրում իր հանդեպ սեռական ոտնձգության մեջ: Այդ ժամանակ Բայդենն էր նախագահում ԱՄՆ-ի սենատի արդարադատության հանձնաժողովում: Բայդենի հանձնաժողովը շտապ կերպով փակում է գործը՝ չթույլատրելով այլ կանանց վկայություններ: Քլերենս Թոմասն արդյունքում արդարացվեց: Բայդենը նախագահի իր թեկնածությունը հայտարարելուց հետո առաջին իսկ հարցազրույցում անդրադառնալով վերոհիշյալ դեպքին՝ ասել է հետևյալը.

“I am sorry she was treated the way she was treated, I wish we could have figured out a better way to get this thing done.” (J. Biden)
<https://www.washingtonpost.com>

«Ես ափսոսում եմ, որ նրա հետք այդպես են վարվել. կցանկանայի, որ մենք այդ հարցը լուծելու ավելի լավ տարբերակ գտնեինք»:

Բայդենի կողմից կրավորական սեռով այս ներողության արտահայտումը բնականաբար քննադատության ալիք բարձրացրեց: Նրա քննադատները պնդում էին, որ փոխարենը Բայդենը ասեր՝ «ես ներողություն եմ խնդրում իմ արարքի համար», նա գերադասեց կրավորական կառույցի միջոցով ասես արդարանալ՝ պատասխանատվությունն իրենից շեղելով:

Ամփոփելով մեր հակիրճ ուսումնասիրությունը կարելի է եզրակացնել, որ կրավորական սեռը քաղաքական խոսույթում լայնորեն կիրառվում է որպես մեղմասութային միջոց հետևյալ նպատակներով՝

- պահպանել սեփական անձի պատիվը, դրական «իմիջը» (face-saving strategy)
- դյուրին դարձնել անդրադարձը հակասական թեմաներին
- քողարկել գործողության անմիջական կատարողի ինքնությունը և այդ կերպ հեռացնել և սահմանազատել կատարողին գործողությունից
- նվազեցնել կատարված գործողությունների կամ ընդունված որոշումների հանդեպ պատասխանատվությունը կամ խուսափել ուղղակի

պատասխանատվությունից, ինչպես նաև՝ խուսափել հնարավոր դատական պատասխանատվությունից

- շրջանցելով իրադարձության մանրամասները՝ մեղմ ձևով ներկայացնել գործողությունը կատարողին

- ոչ բացահայտ կերպով արդարացնել գործողությունը կատարողին

Հաշվի առնելով տեղեկության տարածման ժամանակակից արագությունն ու հասանելիությունը՝ ապակողմնորոշող և իրականությունը խեղաթյուրող ոճական հնարների ներուժն էլ ավելի հզոր է դառնում, քանզի այն ունակ է ազդել ոչ միայն կոնկրետ երկրի, այլև՝ գլոբալ հանրության գիտակցության վրա և ձևավորել ցանկալի, սակայն իրականությունից վերացարկված ընկալում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Lutz, William (1987). “Doublespeak at large”. English Today 12, 21–24.
2. Lutz, William (1999). Doublespeak Defined: Cut through the Bull*** and Get the Point! New York: Harper Collins.
3. Allan, Keith and Kate Burridge (1991). Euphemism and Dysphemism. Language Used as Shield and Weapon. Oxford and New York: Oxford University Press.
4. Luchtenberg, Sigrid (1985). Euphemismen im Heutigen Deutsch. Frankfurt-am-Main: Peter Lang.
5. Orwell, George (1946). Politics and the English Language, <http://www.public-library.uk/ebooks/72/30.pdf>
6. King, Steven (2002). On Writing: A Memoir of the Craft, Pocket Books
7. Carol Tavris, Elliot Aronson (2007). Mistakes, Were Made (but Not by Me): Why We Justify Foolish Beliefs, Bad Decisions and Hurtful Acts, Houghton Mifflin Harcourt
8. <https://www.britannica.com/event/Iran-Contra-Affair>
9. <https://www.cbsnews.com/news/mistakes-were-made-a-short-history>
10. <https://www.washingtonpost.com/blogs/post-partisan/wp/2016/09/28/the-system-is-rigged-how-politicians-use-the-passive-voice-as-a-rhetorical-cheat>
11. Fairclough, N. (1989). Language and power. London: Longman.
12. Fairclough, N. (2003). Analyzing discourse: Textual analysis for social research. London & New York: Routledge. Fairclough, N. (2006). Language and Globalization. London and New York: Routledge.
13. Simpson, P. (1993). Language, ideology and point of view. London & New York: Routledge.

14. <http://www.academypublication.com/issues/past/tpIs/vol04/06/11.pdf>
15. Van Dijk, T. A. (2000). Ideology and discourse: A multidisciplinary introduction. Barcelona: Pompeu Fabra University.
16. Renkema, J. (2009). Discourse, of course. An overview of Research in discourse studies. Amsterdam/Philadelphia: Benjamins Publishing.
17. <https://www.nbcnews.com/video/trump-continues-false-claim-of-rigged-election-at-georgia-campaign-rally-98798149643>
18. <https://abcnews.go.com/Politics/trump-longstanding-history-calling-elections-rigged-doesnt-results/story?id=74126926>
19. <https://www.washingtonpost.com/politics/2019/05/01/some-women-joe-bidens-delayed-apology-anita-hill-is-just-start>

СЮЗАННА СТЕПАНЯН - ЭВФЕМИСТИЧЕСКОЕ УПОТРЕБЛЕНИЕ ПАССИВНОГО ЗАЛОГА В ПОЛИТИЧЕСКОМ ДИСКУРСЕ

Ключевые слова: пассивный залог, эвфемистическая функция, политический дискурс, лингвистические средства искажения информации

Современный политический дискурс изобилует политкорректными лингвистическими терминами, употребление которых часто “осуществляется” с помощью пассивного залога. В данной статье исследуются эвфемистические функции пассивного залога, употребляемого в политическом дискурсе. Эвфемистическое употребление пассивного залога присуще американскому политическому дискурсу. Следовательно, большинство примеров, проанализированных в статье, были извлечены из американских новостных статей, содержащих цитаты американских политиков. В статье были исследованы основные эвфемистические функции пассивного залога, с помощью которых, например, можно вводить в заблуждение, исказить информацию, создавать и продвигать желаемый общественный имидж.

SYUZANNA STEPANYAN - EUPHEMISTIC USE OF PASSIVE VOICE IN POLITICAL DISCOURSE

Keywords: passive voice, euphemistic function, political discourse, information distorting linguistic tool

Modern political discourse is abundant in politically correct language which is often actualized through the subtle use of passive voice. The given article analyses the euphemistic functions the passive voice performs in political discourse. The euphemistic use of passive voice is relatively common

in the discourse of American politicians. Hence, most of the examples analysed in the study were extracted from American news articles involving quotes by American politicians. Basic euphemistic functions of passive voice such as the misleading and obfuscating, information distorting, self-promoting and desirable public image shaping functions were outlined in the article.

Ներկայացվել է՝ 24.02.2021

Գրախոսվել է՝ 24.02.2021

Երաշխավորվել է ԲՊՀ Անգլերենի ամբիոնի կողմից՝ 24.02.2021

**ԱՆՋԵԼԱ ՔԱՐԹԵՐԻ «ԳԻՇԵՐՆԵՐԸ ԿՐԿԵՍՈՒՄ» ՎԵՊԻ
ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԱՆԻ ԱՍԼԱՆՅԱՆ

Հիմնաբառեր՝ մոզական ռեալիզմ, 20-րդ դարի անգլիական գրականություն, ֆեմինիստական գրականություն, Անջելա Քարթեր, «Գիշերները կրկեսում» վեպ

Հոդվածում ուսումնասիրվում է Անջելա Քարթերի «Գիշերները կրկեսում» վեպը՝ «մոզական ռեալիզմի» մեթոդաբանության համատեքստում: Վերլուծված և ներկայացված են վեպի գեղարվեստական առանձնահատկությունները և գաղափարական ուղղվածությունը:

Անջելա Քարթերը անգլիական գրական կյանք է մտել անցյալ դարի վաթսուներկու թվականներին: Նրա առաջին պատմվածքը լույս է տեսել 1965 թվականին և միանգամից գրավել է գրաքննադատների ուշադրությունը: Այսօր նա յոթ վեպերի, բազմաթիվ պատմվածքների և էսսեների հեղինակ է և համարվում է 20-րդ դարի երկրորդ կեսի անգլիական գրականության բեղմնավոր և ինքնատիպ գրողներից մեկը: Օժտված լինելով վառ երևակայությամբ և գեղարվեստական պատկերներ ստեղծելու յուրահատուկ ձիրքով՝ նա իր պատումները կառուցում է պատմական, առասպելաբանական, ինչպես նաև գրական հարուստ ժառանգության հենքի վրա:

Իր ստեղծագործություններում նա կարողացել է համադրել իրականության արտացոլման երկու, թվում է, անհամատեղելի բնագավառները՝ արվեստը և գաղափարախոսությունը: Ինչ վերբերում է նրա ֆեմինիստական հայացքներին, ապա պետք է նկատել, որ կանանց իրավունքների հիմնախնդրին նա անդրադարձել է բավականին լայն և խոր ընդգրկմամբ՝ իր ստեղծագործություններում դիտարկելով այդ խնդիրը մարդկային բազմակողմանի և բազմաբնույթ հարաբերությունների համատեքստում: Այդտեղ նույնպես Քարթեր-արվեստագետը, հատելով իրականի և անիրականի, գիտակցականի և անգիտակցականի սահմանը, փորձում է բացահայտել մարդկային հոգեբանության խորքային շերտերը՝ միևնույն ժամանակ ներազդելով ընթերցողի մտածողության վրա:

Այս հոդվածի նպատակն է Անջելա Քարթերի հայտնի ստեղծագործություններից մեկի՝ «Գիշերները կրկեսում» վեպի ուսումնասիրության միջոցով բացահայտել և վերլուծել վեպի հենց այդ երկու միմյանց շաղկապված կողմերը. առաջինը վերաբերում է մեթոդաբանական, գեղարվեստական առանձնահատկություններին, երկրորդը՝ վեպի հայեցակարգային, գաղափարախոսական ուղղվածությանը: Քարթերն ինքը հարցազրույցներից մեկում խոստովանում է, որ «Գիշերները կրկեսում» վեպը գրելիս իր գլխավոր նպատակը եղել է ընթերցողներին հաճույք պատճառելը և ուսանելը (Haffenden 1985: 76-96): Հաճույք պատճառելը արվեստի իրավասությունն է, իսկ «ուսանել» ասելով Քարթերն ի նկատի ունի մարդկանց որոշակի գաղափարներ և մտքեր հաղորդելը:

Գրականագետ Ջոան Ակոկելան «Անջելա Քարթերի ֆեմինիստական առասպելաբանությունը» հոդվածում, անդրադառնալով Քարթերի կենսագրությանը և կյանքի դրվագներին, նշում է, որ դրանք ճիշտ դասավորելու դեպքում կարելի է տեսնել այն ճանապարհը, որը Քարթերին մոտեցրել է ֆեմինիզմի փիլիսոփայությանը. «Նա դառնում է վառ, բայց ոչ ծայրահեղ ֆեմինիստ: Նրա բողոքը արդարության և հավասարության համար չէր, այլ ամեն տեսակի հարկադրանքի դեմ էր: Նրա համար պարզապես ատելի էր հարկադրանքի յուրաքանչյուր դրսևորում, ինչպես նաև ատելի էր կանանց թուլակամությունը, որը նրանց դարձնում էր տառապող էակներ: Նա ուզում էր, որպեսզի կանայք կարողանան ձեռք բերել այն ամենը, ինչին ձգտում են՝ իշխանություն, ազատություն, սեր: Քարթերը չէր տեսնում սեռերի միջև այնպիսի տարբերություն, որը կարող էր խանգարել նրանց այդ ամենին հասնելու» (Acocela 2017):

Նույն հոդվածում կարդում ենք, Քարթերի՝ իր ընկերներից մեկին՝ Քերոլ Ռոֆֆին գրած նամակից մի հատված, որտեղ երևում է Քարթերի ֆեմինիստական կարծրատիպերից ազատ մտածողությունը: Նա գրում է. «Մի քանի օր առաջ ինձ մեկը հարցրեց, թե ովքեր են իմ սիրելի կին գրողները, կարծում եմ նկատի ունենալով այն գրողներին, որոնք հատկապես լավ են ներկայացնում կանանց հոգեբանությունը: Ես ասացի Էմիլի Բրոնտե և անմիջապես անիծեցի ինձ, որովհետև, իմ համոզմամբ, բոլոր ժամանակների կանացի լավագույն կերպարներ կերտած գրողը Դոստոևսկին է» (Acocela 2017):

Չուգահեռ անցկանցնելով Անջելա Քարթերի կյանքի և ստեղծագործության միջև՝ տեսնում ենք, որ գրականությունը, կարծես, նրա կյանքի հայելային արտացոլումը լինի: Քարթերի ստեղծագործական կյանքի և կանանց կերպարների վերաբերյալ գրականագետ Գայանե

Եղիազարյանն իր «Անգլիացի և ամերիկացի կին գրողների երկերի արժեքաբանական հարացույցը» գրքում գրել է. «Անջելա Քարթերի ստեղծագործությունը կարելի է բաժանել երեք հիմնական փուլի՝ ըստ գլխավոր հերոսուհիների տեսակի: Վաղ փուլը 60-ականներն են, երբ նրա հերոսուհիները ներկայանում են որպես զոհեր: 1970-ականները կարելի է համարել անցումային շրջան գրողի ստեղծագործության մեջ, երբ նրա հերոսուհիները սկսում են իրենց ինքնության և կանացիության փնտրտուքները: Իսկ 80-կանների սկզբից նրա հերոսուհիներն ձեռք են բերում առաջնորդի և դիկտատորի հատկանիշներ» (Եղիազարյան 2020: 161):

Հենց այդպիսի առաջնորդ կնոջ կերպար է մարմնավորել Քարթերը «Գիշերները կրկեսում» վեպում, որը լույս է տեսել 1984-ին՝ նույն թվականին արժանանալով «Ջեյմս Թեյթ Բլեք Մեմորիալ» /James Tait Black Memorial Prize/ մրցանակին (Flood 2012): Վեպը Քարթերին ապահովեց ամուր դիրք անգլիական գրականության մոզական ռեալիստների շարքում՝ համարվելով այդ ուղղության բոլոր սկզբունքներն ամփոփող ստեղծագործություն:

Ընդհանրապես, Քարթերի վեպերը հնարավոր չէ հասկանալ և վերլուծել պատմական և սոցիալ-մշակութային համատեքստից դուրս: Նրա ստեղծագործությունը կրում է ինչպես անցյալի գրականության որոշակի ազդեցությունը, այդպես էլ քսաներորդ դարի երկրորդ կեսի գրական և փիլիսոփայական ուղղությունների կնիքը: Եվ դա վառ է արտահայտված «Գիշերները կրկեսում» վեպում, որտեղ առկա է մոդեռնիզմի՝ մասնավորապես սյուրռեալիզմի ազդեցությունը, երբ Քարթերը փորձում է ներթափանցել իր հերոսների ենթագիտակցական աշխարհի խորքերը: Ինչպես նաև, նրան հոգեհարազատ են ետարդիականության /փոստմոդեռնիզմի/ արվեստին բնորոշ քառասյին իրավիճակները, անկումային տրամադրությունները և տոնահանդեսային, կառնավալային միջավայրը: Վերոնշյալ բոլոր դեպքերում վերանում են հաստատված կանոնակարգերը և ջնջվում երևակայության թռիչքին խանգարող պատնեշներն ու սահմանները: Եվ այդ ամենն արտահայտելու համար Քարթերը հմտորեն օգտագործել է «մոզական ռեալիզմ» գեղարվեստական մեթոդի հնարավորությունները:

Անշուշտ, մեթոդաբանական, գեղարվեստական տեսանկյունից «Գիշերները կրկեսում» վեպը մոզական ռեալիզմի վառ դրսևորում է, սակայն հարկ է նշել, որ այն համապատասխանում է հոգեբանական վեպի չափանիշներին նույնպես, ինչպես նաև ունի պատմական վեպին բնորոշ տարրեր: Խոսքը վերբերում է վեպում ժամանակի և տարածության որոշակիությանը: Ժամանակաշրջանի ընտրությունը՝ 19-

րդ դարի վերջը, պատահական չէ. դա Եվրոպայում ֆեմինիստական շարժման սկզբնավորման տարիներն են, ինչպես նաև այն եղել է բոլոր բնագավառներում մեծ փոփոխությունների և նոր հարաբերությունների հաստատման դարաշրջան: Պատահական չէ նաև վայրերի՝ Լոնդոն, Սանկտ Պետերբուրգ, Սիբիր ընտրությունը:

«Մոզական ռեալիզմը» ինքնուրույն գրական ուղղություն համարվեց, երբ 20-րդ դարի երկրորդ կեսին գրականագիտության մեջ հստակեցվեցին նրա առանձնահատկությունները: Նախևառաջ՝ «մոզական ռեալիզմում» նույնանում են իրականությունը և երազը, շոշափելին և անիրականը, սառը դատողությունը և պատրանքները: Գրական այդ մեթոդը ընթերցողին ներշնչում է հավատ առ այլընտրանքային իրականության գոյությունը: Չնայած իր որոշ նմանությանը գիտական ֆանտաստիկային և սյուրռեալիզմին, մոզական ռեալիզմի առանձնահատկություններից մեկն այն է, որ հեղինակները օգտվում են այնպիսի հնարներից, որոնց շնորհիվ մոզականը դադարում է այլևս լինել անիրական: Մոզականության հանդեպ անվերապահ հավատ ներշնչելը «մոզական ռեալիզմի» կարևոր հատկանիշներից է:

Հենց այդպես «Գիշերները կրկեսում» վեպում Քարթերը մոզական և միևնույն ժամանակ հոգեբանական կերպարների միջոցով խաբկանքը մատուցում է որպես ճշմարտություն, իսկ իրականությունը որպես հեքիաթ:

Վեպը սկսվում է տեսարանով, երբ գլխավոր հերոսը՝ Սոֆի Ֆեվերսը, թռչնի թևերով խոշորամարմին կինը, իր հանդերձարանում հարցազրույց է տալիս Նյու Յորքից Լոնդոն ժամանած քսանհինգամյա լրագրող Ջեք Ուոլսերին: Նա եկել էր սենսացիոն հոդված գրելու նպատակով, հոդված, որը բացահայտելու էր իր համոզմամբ աշխարհի մեծագույն խաբեություններից մեկը: Վեպի երկու հիմնական կերպարների՝ Ֆեվերսի և Ուոլսերի համեմատության և հակադրության միջոցով Քարթերը ցույց է տալիս մոզականի և իրականի միջև գոյություն ունեցող տարբերությունը, դրանց հատման կետերը, միմյանց միաձուլվելու և միևնույն ժամանակ միմյանց հակասելու հավանականությունը: Այստեղ պետք է նշել, որ անհամատեղելի երևույթների միավորման հնարավորությունը վեպի գլխավոր գաղափարներից մեկն է, որն աստիճանաբար զարգանալով իր բարձրակետին է հասնում վեպի ավարտին: «Գիշերները կրկեսում» վեպի սյուժեի զարգացման ամբողջ ընթացքում Քարթերին հաջողվել է անիրական պատմությունը վերածել համոզիչ իրականության: Թեև բանական միտքը Ջեք Ուոլսերին երբեք չէր լքում, բայց նույնիսկ այն ժամանակ, երբ նա փորձում էր վերլուծել Ֆեվերսի ասածները դարձյալ

շարունակում էր հավատալ այդ անհրապական պատմություններին: Հատուկ քնքնշանքով է Ֆեվերսը հիշում այն տունը, որտեղ նա հայտվել էր՝ դառնալով միանգամից վեց մայրերի դուստր: Այստեղ թեթևաբարո վեց կանայք են, որոնք հոգատարությամբ և սիրով շրջապատել էին փոքրիկ Ֆեվերսին և որոնցից մեկի՝ Լիզիի հետ Ֆեվերսը ապրելու էր իր հետագա կյանքը: Ֆեվերսի և Լիզիի հարաբերությունները անշահախնդիր սիրո և նվիրումի բացառիկ օրինակ են: Լիզին այն կինն է, որ ընդունել էր Ֆեվերսին այնպիսին, ինչպիսին նա կար և օգնել նրան պահպանել իր արտասովոր ինքնությունը, որքան էլ դա արտառոց լիներ շրջապատի համար: Ֆեվերսը Ջեք Ուոլսերին պատմում է իր կյանքը բոլոր մանրամասներով, անգամ վստահելով նրան իր իբր միակ գաղտնիքը՝ որն է իր թևերի փետուրները ներկելու փաստը: Հոգեբանական այդպիսի հնարով և այլ խորամանկություններով Ֆեվերսը մոլորեցնում է Ջեքին և այդպիսով ձեռք բերում նրա, ինչպես նաև ընթերցողի, վստահությունը: Քանի որ, երբ միակ գաղտնիքը իր թևերի փետուրները ներկելն է, այլևս չես կասկածում այդ թևերի գոյությանը: Իսկ թռչունի թևեր ունենալու փաստը և թռչելու ունակությունը, որոնց շնորհիվ Ֆեվերսը դարձել էր հայտնի կրկեսային մարմնամարզուհի՝ անշուշտ այլաբանական իմաստ ունի: Թռիչքը ազատության, իսկ գունավոր փետուրներով թևերը՝ ինքնատիպության, անհատականության խորհրդանիշ են: Ուշագրավ է վեպում այն պահը, երբ Լիզին առաջին անգամ տեսնում է Ֆեվերսի թևիկները: Նա ցնծության մեջ կանչում է ընկերուհուն՝ Մա Նելսոնին, գոչելով, որ իրենց թռչնակը պատրաստվում է թռչել. «Բարի կինը վազեց վերև աստիճանները երկուական թռչելով, իսկ երբ տեսավ թե ինչի է վերածվել իրենց ճուտիկը, ուրախությունից ծիծաղեց և ասաց,- պատկերացնում եք, փաստորեն, մենք հրեշտակ ենք պահել: Իմ անմեղ փոքրիկ, գուցե, հենց դու ես այս դարի այն երեխան, որ հենց հիմա իր թևերով սպասում է Նոր դարաշրջանին, որտեղ ոչ մի կին չդթայված չի լինի գետնին» (Carter 2006: 25): Քարթերն այստեղ անդրադառնալով կնոջ հոգևոր անազատության հիմնախնդրին՝ նկարագրում է նաև այն դժվար ճանապարհը, որը թեև՝ ցավոտ և քարքարոտ, բայց նրա համոզմամբ հաղթահարելի է:

Ուշագրավ է վեպում անունների ընտրությունը: Գլխավոր հերոսուհու՝ Ֆեվերսի անունն իր մեջ որոշ առեղծված է պարփակում: Հերոսուհու ընկերուհին, կամ մայրը, ինչպես ինքը համարում էր Լիզիին, անվան ընտրությունը բացատրում է «փետուրներ» «feathers» բառի նմանությամբ, սակայն Քարթերը իր հերոսուհու անունը գրում է Fevers, որն ավելի նման է անգլերեն «fevers» բառի գրությանը, որն էլ նշանակում է տենդ: Հնարավոր է, Քարթերն այդ երկու բառերի իմաստային

զուգորդումով ստեղծել է իր հերոսուհու «Ֆեվերս» անունը, որն արտահայտում է մի կողմից թեթևություն, առանց հստակ նախազգծված ճանապարհի անհոգ թռիչք, իսկ մյուս կողմից՝ տենդ, անվերջ լարվածություն և բազմաթիվ խոչընդոտների հաղթահարումներ:

Վեպի իրադարձությունները զարգանում են կրկեսի բազմերանգ կյանքի շուրջ և ուղղորդվում են Ֆեվերսի իրական և անիրական, մոգական և պարզ մարդկային ապրումներով լի կյանքի պատմությունով: Վեպի առաջին գլխում Ֆեվերսի կերպարը պարուրված է առեղծվածային և միաժամանակ իրական հատկանիշներով, և ընթերցողը տեսնում է ինքնավստահ մի կնոջ, որն իր հեքիաթային և անհավանական կյանքի պատմությամբ ապրում է կրկեսի վառ լույսերի հրավառության ներքո: Մյուս կողմից ներկայացված է հողածին, պրագմատիկ և կասկածամիտ ամերիկացի լրագրողի կերպարը, որի կյանքի իմաստը նախազգծված ծրագրերի իրագործումն է՝ ըստ հստակ ժամանակացույցի:

Վեպի առաջին գլուխը բարդ է ոչ միայն բովանդակությամբ, այլև իր կառուցվածքով: Այն անկանոն է, և դա կարելի համարել գեղարվեստական հնար, որով Ֆեվերսի կերպարն ավելի առեղծվածային է դառնում: Հաճախ հեղինակի խոսքը նրա հերոսուհին՝ Ֆեվերսը, «խլում է» իրենից և հանդես է գալիս որպես հեղինակ: Քարթերը նաև այդ եղանակով բացահայտում է Ֆեվերսի բնույթը. իշխելու և գործողության ընթացքը կառավարելու նրա ձգտումը, ինչպես նաև շրջապատին մոլորեցնելու, հիմարացնելու նրա կարողությունները:

Երկրորդ գլխում ամեն ինչ փոխվում է, երբ մոգականը՝ ի դեմս Ֆեվերսի, սկսում է կապվել իրական կյանքին, իսկ պրագմատիզմը՝ որը մարմնավորված է Ջեք Ուոլսերի կերպարում, հակառակը՝ կտրվում է առօրեականից և հայտնվում է մոգական, բայց և իրական Ֆեվերսի հեքիաթային աշխարհում:

Վեպի երրորդ գլուխը, որը կոչվում է «Սիբիր», ուշագրավ է հերոսների ժամանակի զգացողության բացակայությամբ: Այդտեղ «ժամանակ»-ը ներկայացված է որպես տիեզերական և մարդկային ուղեղին անհասու մի երևույթ: Վեպը լի է տարբեր խորհրդանշաններով, որոնցից մեկը ժամացույցն է: Ռուսաստանի՝ որպես գործողության վայրի, ընտրությունը նույնպես պատահական լինել էր կարող: Ընդհանրապես, Քարթերի ուղերձները տարբեր նպատակաուղղվածություն ունեն և արտահայտում են նրա ոչ միայն խոհա-փիլիսոփայական, այլև հասարակական և քաղաքական հայացքները: Քարթերը ժամանակի խորհրդանշական իմաստին անդրադարձել է նաև վեպի առաջին՝ «Լոնդոն» գլխում: Երբ Ֆեվերսի հանդերձասրահում Ուոլսերը Ֆեվերսի հետ զրուցելիս նկատում է ժամացույցը, որի սլաքները կանգնած են:

Սակայն ոչ միայն սլաքները այլև ժամանակն էր սենյակում, ասես, կանգ առած: Եվ միայն Բիգ Բենի ժամացույցի ձայնն էր, որ պարբերաբար նրանց հիշեցնում էր ժամանակի գոյության մասին:

Երրորդ գլխում ընթերցողը ստանում է նախորդ երկու գլուխներում բարձրացված հարցերի պատասխանները: Քարթերը ցույց է տալիս, թե ինչ է տեղի ունենում իրականի և անիրականի մի կողմից կործանարար, մյուս կողմից ստեղծարար միավորումից:

Հատկանշական է, որ Քարթերը հրաշքներով լի կրկեսը բերում է կյանք և միաձուլում է երևակայական աշխարհն ու անուրջները իրական կյանքի բնականոն դիմին, այդպիսով, հեքիաթային և մոգական շղարշ իջեցնելով մնացած ամեն ինչի վրա: Ընթերցողը կտրվում է իրականությունից և հերոսուհու ուժեղ և միևնույն ժամանակ կանացի և փխրուն թևերի օգնությամբ թռչում է դեպի քարթերյան «կրկեսի» աշխարհ, որտեղ ամեն ինչ հնարավոր է և ամեն մտացածին բան՝ իրական: «Կրկեսը» որպես երևույթ և հասկացություն իր խորհրդանշական բովանդակությամբ շատ մոտ է «կառնավալ», «տոնահանդես», «դիմակահանդես» հասկացություններին: Եվ պատահական չէ, որ Քարթերը հենց կրկեսն է ընտրել որպես իր գաղափարների արտահայտման վայր և մարդկային թաքնված տենչանքների դրսևորման ամենահարմար միջավայր: Կյանքի իմաստի և ունայնության, մարդկային հարաբերությունների անկայունության, կնոջ և տղամարդու բարդ փախհարաբերությունների, ինչպես նաև ազատության, սիրո, իրականի և անիրականի, գիտակցականի և անգիտակցականի մասին իր մտորումներն ու գաղափարները Քարթերն արտահայտում է կրկեսի հերոսների և աշխարհի հետ նրանց փոխհարաբերությունների միջոցով: Այս աշխարհայացքն անշուշտ, ունի իր սկզբնաղբյուրը, որը գալիս է միջնադարյան ժողովրդական տոների փիլիսոփայությունից և որն ավելի ընթռնելի է դառնում, երբ այն դիտարկում ենք նշանավոր գրականագետ և փիլիսոփա Միխայիլ Բախտինի «կառնավալի» տեսության համատեքստում: Ֆրանսուա Ռաբլեի ստեղծագործությանը նվիրված իր ուսումնասիրության մեջ Բախտինը գրում է.- «Կառնավալը ժողովրդի երկրորդ կյանքն է, որի սկզբնաղբյուրը ծիծաղն է: Դա նրա տոնական կյանքն է»: Ինչպես տեսնում ենք Քարթերի կրկեսային կյանքը նույն այն սկզբունքների վրա է կառուցված, ինչը նկարագրում է Բախտինն իր ուսումնասիրության մեջ: Նա գրում է.- «Կառնավալը չեն հորինում, նրանում բոլորը ապրում են, որովհետև, ըստ էության, այն համաժողովրդական է: Քանի դեռ այն կա, ոչ մեկի համար չի կարող դրանից դուրս մեկ այլ կյանք գոյություն ունենալ» (Бахтин 1990: 12):

Բախտինը նշում է, որ կառնավալի ժամանակ կարող ես ապրել միայն նրա օրենքներով, այսինքն միայն կառնավալային ազատության օրենքներով: Սա, իհարկե, ամբողջովին համապատասխանում է Քարթերի աշխարհայեցողությանը և հիմնավորում է կրկեսի, որպես վեպի գործողության վայրի ընտրությունը: «Բախտինյան կառնավալ»-ում արտահայտված իրականության փոփոխականության, մարդկային հարաբերությունների և հասարակության դասակարգերի անկայունության, երևակայական և իրական աշխարհների մեկը մյուսով փոփոխության, ազատության որպես անհատականության դրսևորման միակ հնարավորության և, վերջապես, ծիծաղի՝ որպես հաղորդակցության եղանակի, գաղափարները գրեթե ամբողջությամբ արտահայտված են «Գիշերները կրկեսում» վեպի գաղափարաբանության մեջ:

Գրաքննադատ Մարինա Ուորների կարծիքով Քարթերը 20-րդ դարի ամենավառ երևակայություն ունեցող գրողների շարքում է: Նա գրում է.- «Ի շնորհիվ իր խիզախ, վայրի երևակայությամբ ստեղծված գլխապտույտ սյուժեների, վատ և լավ աղջիկների հավաքածուի, հրեշների, սրիկաների և բոլոր մնացած արարածների, նա կարողանում է ստիպել մեզ կարդալ գիրքը ընթերցանության ողջ ընթացքում շունչներս պահած» (Warner 1992: 25):

Քարթերի «Գիշերները կրկեսում» վեպը արժեքավոր է մոգական ռեալիզմի մեթոդաբանական հնարավորությունների կիրառման տեսանկյունից: Քարթերին հաջողվել է մոգականը դարձնել այնքան ռեալիստական, որ ավարտին մոտ ընթերցողը կասկածում է նույնիսկ սեփական բանականությանը, բայց ոչ այն հեքիաթին, որն իրեն մատուցել են:

Հելեն Սթոդարտը «Գիշերները կրկեսում» վեպի վերլուծության մեջ նկատել է. «Քարթերը հակառեալիստ է. չնայած նրա ստեղծագործությունը քաղաքական և սոցիալական ուղղվածություն ունի, հեղինակը հանդերձավորում է իր խնդիրները անուղղակիորեն՝ դիմելով այլաբանությանը, երևակայականին և առասպելին՝ ամրապնդելով այն համոզմունքը, որ օբյեկտիվ իրականություն գոյություն չունի» (Stoddart 2007: 13):

Վեպի ավարտին, երբ ընթերցողն արդեն իրապես հավատում է հերոսուհու պատմությանը, Ուոլսերը Ֆեվերսին հարցնում է, թե արդյոք այդ ամենը ճշմարիտ է և Ֆեվերսը պատասխանում է, որ ոչ, և որ նա հիմարեցրել է նրան: Եվ այնուհետև սկսում է բարձր ծիծաղել: Նրա ծիծաղը տարածվում է սենյակում, տանը, ապա դուրս է գալիս և մտնում շրջակա բոլոր տները, դուրս է գալիս քաղաքից և փոթորկի նման

պատվելով երկրից երկիր անցնում: Ֆեվերսի ծիծաղն ուղղված է Ուոլսերին, ընթերցողին և մարդկությանը: «Ֆեվերսի ծիծաղի պարուրածն տորնադոն սկսեց պատվել և ցնցել ամբողջ Երկիր մոլորակը, մինչև ամեն ապրող և շնչող արարած, ամենուրեք սկսեց ծիծաղել: Կամ, մի գուցե, այդպես թվում էր միայն մոլորեցված ամուսնուն, որն ինքն էլ սկսել էր ծիծաղել, թեև վստահ չէր, որ հենց ինքը չէր ծիծաղի առարկան»: Պետք է համաձայնել Սթոդարթի այն դիտարկմանը, որ «Քարթերի ստեղծագործությունը քաղաքական և սոցիալական ուղղվածություն ունի» և, որ նա «հանդերձավորում է իր խնդիրները անուղղակիորեն՝ դիմելով այլաբանությանը»: Այսօր, վեպի հրատարակումից տասնամյակներ անց այդ այլաբանորեն արտահայտված ուղերձն էլ ավելի արդիական հնչեղություն ունի: Ֆեվերսի ծիծաղը, որի առիթն այն է, որ նրան հաջողվել է հիմարացնել Ուոլսերին, երբ տարածվում է ողջ Երկիր մոլորակի վրա, ձեռք է բերում այլաբանական և ընդհանրական իմաստ: Այդ ծիծաղի առարկան, այլևս միայն Ուոլսերը չէ:

Քարթերին բնորոշ է, որ հարցերի պատասխանների ընտրությունը, ի վերջո, նա թողնում է ընթերցողին: Նկարագրությունները՝ մերթ պատրանքային, մերթ ռեալիստական, վեպի մինչև վերջին պահը ընթերցողին մոգական իրականության հանդեպ հավատ են ներշնչում և միայն վերջում ապտակի պես սթափեցնում են նրան: «Պատկերացրու միայն, ես քեզ հիմարեցրել եմ: Դա նշանակում է, որ ոչնչի պետք չէ հավատալ» ասում է Ֆեվերսը Ուոլսերին (Carter 2006: 350): Նրա ծիծաղը բարձրանալով Երկրից էլ վեր, վերափոխվում է վերերկրային ծիծաղի՝ օդում կախված թողնելով նաև ճշմարտության հարաբերական լինելու գաղափարը: Վեպի անսպասելի ավարտը օրինաչափ է մոգական ռեալիզմի փիլիսոփայության տեսանկյունից: Դա ավարտ է, որը կարող է լինել նաև սկիզբ միմյանց արդեն հարազատ դարձած երկու հակադիր երևույթների՝ Ֆեվերսի և Ուոլսերի համար: Բայց կարող է լինել և հակառակը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Եղիազարյան Գ., Անգլիացի և ամերիկացի կին գրողների երկերի արժեքաբանական հարացույցը, Եր., 2020:
2. Бахтин, М.М. Творчество Франсуа Рабле и народная культура средневековья и Ренессанса. М., Художественная литература, 1990.
3. Alison Flood (6 December 2012). "Angela Carter named best ever winner of James Tait Black award". *The Guardian*. Retrieved 6 December 2012.
4. Carter A. *Nights at the Circus*, Vintage Classics U.K Random House. 2006.

5. Haffenden J. Novelists in Interview / J. Haffenden. London and New York, Methuen, 1985.
6. Stoddart H. Angela Carter's Nights at the Circus. A Routledge study guide. London and N.Y.: 2007.
7. The New Yorker, Angela Carter's Feminist Mythology by Joan Acocela, Books. March 13, 2017.
Issue <https://www.newyorker.com/magazine/2017/03/13/angela-carters-feminist-mythology>
8. Warner, Marina. Angela Carter / Marina Warner // The Independent. - 1992.-February 18.

REFERENCES

1. Gayane Eghiazaryan, Angliaci & amerikaci kin groghneri erkeri arjheqabanakan haracowycy', 2020
2. Bahtin, M.M. Tvorchestvo Fransua Rable i narodnaja kul'tura srednevekov'ja i Renessansa. M.: Hudozhestvennaja literatura, 1990.

АНИ АСЛАНЯН - МЕТОДОЛОГИЧЕСКИЕ И ИДЕОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ РОМАНА АНДЖЕЛЫ КАРТЕР “НОЧИ В ЦИРКЕ”

Ключевые слова: Анджела Картер, английская литература 20-го века, магический реализм, роман “Ночи в цирке”, феминистская литература

В статье изучены идеологические и методологические особенности романа английской писательницы второй половины 20-го века Анджелы Картер “Ночи в цирке”. В романе выявлены элементы магического реализма как художественного метода. Рассмотрены символы и символические образы романа, с помощью которых раскрыто главное послание Анджелы Картер читателям.

ANI ASLANYAN - THE METHODOLOGICAL AND IDEOLOGICAL FEATURES OF THE NOVEL “NIGHTS AT THE CIRCUS” BY ANGELA CARTER

Keywords: Magical realism, 20th century English literature, Angela Carter, the novel “Nights at the circus”, feminist literature

The article introduces the novel “Nights at the circus” by the late 20th century English novelist, short story writer Angela Carter. The article analyses the narrative style, metamorphoses and the issues of feminism in the novel, by emphasizing traditional elements of Magical Realism. It attempts to show the methodological and ideological features of the novel.

Ներկայացվել է՝ 24.02.2021

Գրախոսվել է՝ 24.02.2021

Երաշխավորվել է ԲՊՀ Անգլերենի ամբիոնի կողմից՝ 24.02.2021

**ԱՆՁՆԱՅԻՆԻ ԵՎ ՎԵՐԱՆՁՆԱՅԻՆԻ ԵՐԿՎՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ԷԹՆՈԿՐՈԳԲԱՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐՈՒՄ**

ՄՈՎԱՍԵՍ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Հիմնաբառեր՝ անհատ, անձնային, վերանձնային, սոցիալ-մշակութային մոդել, աշխարհայացք, գաղափարախոսություն, կրթություն, ապաստանատեղի

«Մշակույթը երբեք չի եղել և չի լինելու վերացական մարդկային, այն միշտ կոնկրետ մարդկային է, այսինքն՝ ազգային, անհատական-ժողովրդական»:

(Бердяев 1990: 94)

Հայտնի է, որ ժամանակակից սոցիալական գիտություններում ընդունված հասարակությունների բաժանումը ավանդական և քաղաքացիական (քաղաքական) տեսակների հիմնված է ոչ թե ժամանակային գործոնի, այլ այն հանգամանքի վրա, որ դրանցից առաջինում կյանքի կազմակերպման և բոլոր մակարդակի հարաբերություններում գլխավոր դերը պատկանում է **ավանդույթին**, իսկ երկրորդում՝ **իրավունքին**: Կարելի է դրանց համապատասխանող սոցիալ-մշակութային մոդելները բնութագրել իբրև **ազգային-ավանդական** և **քաղաքացիական**, քանի որ հասարակությունը ոչ թե պարզապես մարդկանց և սոցիալական ինստիտուտների խումբն է, այլ դրանց միջև հարաբերությունների ամբողջությունը: Կախված նրանից, թե ինչն է ընկած այդ հարաբերությունների հիմքում՝ ավանդույթը, թե իրավունքը, կարելի է բնութագրել հասարակությունները և դրանցում տարածված կյանքի կազմակերպման սոցիոմշակութային մոդելները: Վերջիններիս ձևավորման վրա ամենամեծ ազդեցությունն ունեն պատմական և սոցիալական պայմանները, որոնք էլ, ի վերջո, ստեղծում են տվյալ հասարակությունում տարածված սոցիոմշակութային մոդելի յուրահատուկ դիմագիծը:

Հայաստանում պետականության երկարատև բացակայությունը փոխհատուցվել է մշակութային գործոններով (ավանդույթներ, վարքի բարոյական նորմեր և այլն): Դրանք որոշիչ դեր են խաղացել հարաբերությունների բոլոր մակարդակներում՝ սկսած միջանձնային շփումներից և հանրային կյանքի կազմակերպումից,

վերջացրած ժողովրդի ֆիզիկական և հոգեբանական պաշտպանվածության ապահովմամբ: Դրանով է, թերևս, պայմանավորված հայի գիտակցությունում մշակույթի՝ որպես **էթնոպաշտպանիչ** համակարգի մասին պատկերացումը: Եվ պատահական չէ, որ Հայաստանում և Սփյուռքում հենց մշակույթի վերարտադրությունն է դիտվել և դիտվում որպես հայկական էթնոսի և ինքնության շարունակականության ապահովման գրավական:

Հայկական էթնոհոգեբանության մեջ մշակույթի նման ուռճացված¹ ընկալումը պայմանավորված է նաև «հայոց պատմության մեջ տեղահանման և ոչնչացման հաստատուն վտանգով» (Ռեզոս 1999: 338), որն առավել ցայտուն դրսևորվեց 20-րդ դարում: Այդ մշտական վտանգի յուրահատուկ դրսևորումներից մեկը վերաբերում է մշակութաբան Ս. Լուրյեի կողմից նկարագրված երևույթին. «Աշխարհի հայկական պատկերում չափազանց կարևոր է դաշնակցի կերպարը: Անդրկովկաս Ռուսական կայսրության մուտքով լրացվեց հայերի գիտակցության այդ հարացույցը, որը, լայն իմաստով, կանխորոշեց գործելու, ակտիվ լինելու հնարավորությունը» (Մյրբե 1999: 110): Որոշ իմաստով այս մտքի ճշմարտացիությունը հաստատվեց անկախացումից հետո, երբ հայ հասարակության զանգվածային գիտակցությունում դժվար էր արմատավորվում այն միտքը, որ Ռուսաստանն այլևս օտար պետություն է: (ըստ՝ Մյրբե 1994)

Պետականության բացակայության բացասական հետևանքներից մեկը «պետական մտածողության և կառավարման փորձի բացակայությունն է ինչպես անհատական, այնպես էլ ազգային մակարդակներում» (Մելիկ-Շախնազարյան 1999: 32): Քաղաքական և քաղաքացիական գիտակցության ձևավորման պայմանների բացակայությունը նպաստեց, որպեսզի հայ հասարակությունում առաջնային դառնան ոչ թե անհատների միջև իրավական փոխհարաբերությունները, այլ կլանային շփումներն ու կապերը: Դա բացահայտեց հայկական էթնոհոգեբանության մեջ սոցիալական կյանքի բոլոր մակարդակներում՝ անհատականից մինչև պետական, կլանային շահերի գերակայության հանգամանքը: «Դարեր շարունակ ազգային պետականության կեցույթային գործոնից զուրկ հայն ապավինել է իր

¹«Ուռճացված» ասելով՝ հողվածում մատնանշվում է կյանքի կազմակերպման քաղաքական-քաղաքացիական մոդելի նկատմամբ ազգային-ավանդական մշակույթին գերակա նշանակությունը, ինչի հետևանքով ավանդական մշակույթը, պատկերավոր ասած, զբաղեցնում է հասարակական կյանքում նաև քաղաքացիական՝ իրավաքաղաքական հարաբերությունների տեղը:

առօրեական-կեցութային հարաբերություններին՝ ընտանիքին, բարեկամներին, ընկերներում ու հարևաններին: Այդպես ձևավորվել է հայկական ես-ի ամենատիպական դրսևորումը՝ ես-ի կլանային տարատեսակը, որն այսօր էլ շարունակում է ամենազորեղ արգելակը համարվել հայկական համագգային ես-ի կազմավորման և առավել ևս ազգային մտածելակերպը պետականին հանգեցնելու հրամայականներում»: (Շաքարյան 2002: 70)

Հայտնի է, որ քաղաքական հարաբերությունների ձևավորման համար առավել նպաստավոր են քաղաքային կյանքի պայմանները, որոնք արմատապես փոխեցին մինչ այդ գոյություն ունեցող հանրային կապերի բնույթը: Քաղաքային տարածությունը ստեղծում է սոցիալական հարաբերությունների նոր ձև, որում սոցիալական կյանքի «ատոմը» ոչ թե ընտանիքն է կամ տոհմը, այլ իրավաքաղաքական նորմերի ամբողջությամբ օժտված անհատը: Իրավունքը, որպես մարդկանց միջև շփումները կարգավորող գլխավոր գործոն, ստեղծում է այսպիսի սոցիալական միջավայր, որը սկզբունքորեն տարբերվում է ավանդույթով պայմանավորված հարաբերությունների արդյունք հանդիսացող միջավայրից: Այս երկու միջավայրերի վերարտադրությունն ապահովում է տվյալ հասարակության հանրային կյանքի կազմակերպման սոցիոմշակութային մոդելի յուրակերպությունը կամ, ավելի ճիշտ, այն բազմամշակութային իրավիճակը, որում ապրում են ժամանակակից քաղաքակիրթ հասարակությունները:

Մշակութային մոդելի վերարտադրությունը սերտ կապված է մարդու **սոցիալականացման** հետ: Կախված նրանից, թե որ միջավայրում է տեղի ունենում մարդու սոցիալականացումը՝ ավանդական-մշակութային, թե իրավաքաղաքական-քաղաքացիական,² ձևավորվում է տվյալ հասարակությունում կյանքի կազմակերպման գերակայող մշակութային մոդելը՝ ավանդական, կամ քաղաքացիական, և դրան համապատասխան մարդու տիպը:

Սոցիալականացման հետ կապված մյուս առանձնահատկությունն այն է, որ հայ ժողովրդի պարագայում պետականության երկարատև բացակայությունն արտահայտվել է նաև նրանում, որ վարքի համընդհանուր և պարտադիր **իրավական** նորմերի փոխարեն մարդկանց

²Բանն այն է, որ ավանդական մշակույթը, ինչպես ցանկացած մշակույթ, սոցիալական է: Այս իմաստով սխալ կլինի մշակույթների բաժանումն ավանդականի և սոցիալականի, այդ պատճառով հարաբերությունների այն համակարգը, որի հիմքում ընկած է ոչ թե ավանդույթը, այլ իրավունքը, հողվածում անվանվում է իրավաքաղաքական-քաղաքացիական:

կյանքը և հարաբերությունները կառուցվել են **ավանույթի, բարոյականության**, լայն իմաստով՝ **մշակութային** նորմերի հիման վրա: Դրանք ժամանակի ընթացքում ձևավորել են սոցիոմշակութային միջավայր, որում էլ իրականացել է մարդկանց սոցիալականացումը: Հետևաբար, մշակութային սոցիալականացումը հանդես է գալիս որպես «սոցիալական նորմերի, մշակութային արժեքների և վարքի մոդելների յուրացում, որը թույլ է տալիս անհատին գործունեություն իրականացնել տվյալ հասարակությունում» (Kovalova 2004: 139): Ակնհայտ է, որ սոցիալականացման ընթացքում մարդուն փոխանցվող նորմերը վերաբերում են առավելապես նրա **վարքին** և ավանդական-մշակութային մոդելի դեպքում տրվում են առավելապես **դաստիարակության**, իսկ քաղաքացիական մոդելի պարագայում՝ **կրթության** միջոցով: Դա է արձանագրված նաև Է.Դյուրկհեյմի այն պնդման մեջ, որ «սոցիալականացումը սոցիալական միջավայրի ճնշումն է, որը փորձում է մարդուն ձևավորել իր կերպարով և որպես ներկայացուցիչ և միջնորդ հանդես է բերում ծնողներին և ուսուցիչներին» (Дюркгейм 1995: 154):

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ երբ սոցիալականացման միջավայրն առավելապես ավանդական-մշակութային է, հասարակությունում գերակշռում է դրան համապատասխան մարդու տիպը, իսկ երբ գործ ունենք հասարակական-քաղաքական միջավայրի հետ, տարածված է դառնում քաղաքական-քաղաքացիական մարդու մոդելը: Ուստի կարելի է եզրակացնել, որ հայ հասարակությունում տարածված կյանքի կազմակերպման ավանդական սոցիոմշակութային մոդելը, համապատասխան միջավայրով հանդերձ, ստեղծում է պայմաններ սոցիալականացման հետևանքով ոչ թե քաղաքական-քաղաքացիական, այլ **մշակութային** մարդու վերարտադրության համար:

Հայ հասարակությունում ազգայինի ուռճացված ընկալումների և դրսևորումների հետ առնչվող երկրորդ օրինաչափությունը վերաբերում է մարդու հոգեկան համակարգում անձնայինի («ես»-ի) և վերանձնայինի (հասարակականի, ազգայինի, լայն իմաստով՝ «մենք»-ի) հարաբերությանը: Մարդկայինի այս երկու մակարդակները մշտապես առկա են անհատականում, սակայն հարաբերության յուրահատուկ ձև են ստանում՝ կախված տվյալ մշակույթի զարգացման պատմական առանձնահատկություններից: Այդպես, հայի էթնոհոգեբանության մեջ շեշտված արտահայտություն ունի անձնայինը, ինչը պայմանավորված է պետականության բացակայության ընթացքում վերանձնային՝ մասնագիտական և հասարակական գործունեություն իրականացնելու պայմանների սակավությամբ: Դա, իր հերթին, «ստիպել» է հային սահմանափակվել առօրեականությամբ, իսկ վերջինս, ինչպես հայտնի է,

հենց անձնայինի կեցութային հիմքն է (ըստ՝ **Շաքարյան** 2002: 73): Որքանով հայի ամենօրյա պրակտիկայում առօրյան արմատավորվում էր, այնքան անձնայինն ավելի մեծ տեղ էր զբաղեցնում նրա «մտքում և հոգում»: Այսօր կարող ենք փաստել, որ մեր պարագայում անձնայինն է դարձել նաև վերանձնայինի չափման յուրահատուկ միջոց, երբ մասնագիտական և հասարակական գործունեությունն արժևորվում է՝ կապված մարդու անձնային (առօրյա) կյանքում ունեցած ազդեցությունից: Մինչդեռ որքանով մարդ անհատականի և սոցիալականի միասնություն է, այնքանով նրանում անձնայինը և վերանձնայինն ունեն սեփական դետերմինացիաները: Եթե անձնայինի կեցութային հիմքը առօրյան է, ապա վերանձնայինի դետերմինանտներն ընկած են հոգևոր ոլորտում՝ գիտություն, գաղափարախոսություն, կրոն և այլն:

Հնարավոր չէ պատկերացնել անհատի ամբողջականությունը միայն անձնայինով կամ միայն վերանձնայինով, թեպետ այդպիսի փորձեր պատմության ընթացքում արվել են: Օրինակ, կոմունիզմը և ֆաշիզմը գաղափարական համակարգեր են, որոնք փորձում են ստեղծել սոցիալական կյանքի վերանձնային-կոլեկտիվ ձևեր՝ առանց անհատական հիմքի, որովհետև անհատը տվյալ դեպքում դիտարկվում է միայն որպես վերանձնային արժեքների կրող: «Փիլիսոփայական-մարդաբանական տեսակետից տոտալիտարիզմ ենթադրող բոլոր կարգի գաղափարական համակարգերին, լինի դա դավանաբանական, սոցիալ-քաղաքական, ռասայական թե ազգային էթնիկական, միավորում է մեկ սկզբունք՝ մարդակործան զոհասեղանին հանձնել անձնայինը հանուն նույնքան խեղված և, ի վերջո, դժբախտ կացության մեջ հայտնված վերանձնայինի» (Շաքարյան 2002: 74): Արձանագրենք, որ նշված օրինաչափությունը, թեև վերաբերում է ամբողջատիրական հավակնություններ ունեցող գաղափարական համակարգերին, կարող է նաև ավելի առօրեական դրսևորումներ ունենալ, օրինակ, դաստիարակության մեջ: Եթե դաստիարակության ընթացքում գերակշռում են ոչ թե երեխայի ես-ի ձևավորման, այլ դեռևս այդ չձևավորված ես-ը վերանձնային տարբեր՝ ազգային, պետական, կրոնական կամ այլ համակարգերում «տեղավորելու», «հարմարեցնելու» միտումները, ապա կարելի է ասել, որ գործ ունենք անձնայինը վերանձնայինին «հանձնելու», արհեստականորեն ստորադասելու գործընթացի հետ:

Քանի որ մարդ ոչ միայն և ոչ այնքան ինտելեկտուալ-տրամաբանական, որքան սոցիալ-բարոյական էակ է, ապա նրա հոգեկանի բնականոն զարգացումը ենթադրում է, որ նրանում վերանձնայինը ձևավորվում է որպես անձնայինի **պահանջ, զարգացման հեռանկար**: Բոլոր այն դեպքերում, երբ վերանձնայինը բնականոն

կերպով չի բխում անձնայինից և իր գոյությամբ չի հանդիսանում անձնայինի զարգացման արդյունք, այն, փաստորեն, արհեստականորեն «ներմուծվում» է դրսից՝ դաստիարակության, կրթության կամ սոցիալականացման այլ ձևերի միջոցով:

Կարելի է պատկերացնել, թե որքան ողբերգական և կործանարար կարող է լինել ես-ից (անհատականությունից, սեփական դիմագծից, ոճից) զուրկ մարդը հենց այդ վերանձնային երևույթների՝ ազգի, պետության կամկրոնական համայնքի համար, եթե հաշվի առնենք, որ այդ դեպքում գործ ունենք հիմնականում չհասկացված ազգասիրության և հայրենասիրության կամ թյուրմբռնված կրոնականի հետ: Ազգայինի կամ կրոնականի մոլորության մակարդակում ընկալումն այս դեպքում գրեթե անխուսափելի է, քանի որ այդ վերանձնային երևույթների իմացությունը հիմնված է, փաստորեն, ոչ թե անձնական մոտիվացիայի կամ հետաքրքրության, այլ, այսպես ասած, արտաքին սոցիալ-մշակութային պարտադրանքի վրա: Կարելի է նկատել դրա տարբեր դրսևորումներ հայ հասարակությունում տարածված դաստիարակչական ավանդույթներում և կրթական համակարգում: Վերջիններս, ինչպես հայ իրականության մեջ գրեթե ամեն ինչ, կրում են հայերի էթնոհոգեբանության գլխավոր առանձնահատկություններից մեկի՝ ազգային-էթնիկականի **ուռճացված (չափազանցված)** ընկալման, ազդեցությունը:

Հայ հասարակության մեջ տարածված դաստիարակչական համակարգը խարսխված է հիմնականում ավանդական մոտեցումների վրա, որոնք, ինչպես հայտնի է, շարունակվում են պատմության մեջ **իներցիայի** ուժով: Հարկ է նկատի ունենալ, որ եթե դաստիարակչական համակարգը բնութագրվում է որպես ավանդական, դա չի նշանակում, որ այն հին է կամ ժամանակավրեպ: Խոսքն այն մասին է, որ այդ համակարգը հիմնված է ոչ թե երեխաների իրավունքների կամ մանկավարժության տեսությունների վերլուծությունների, այլսերնդե սերունդ փոխանցվող մեթոդների և սկզբունքների վրա: Վերջիններս կարող են լինել ռացիոնալ և իռացիոնալ, անհատակենտրոն կամ գիտելիքահետ, բայց բոլոր դեպքերում ժամանակակից են այն իմաստով, որ շարունակվում են լայնորեն կիրառվել:

Եթե հաշվի առնենք, որ մարդն առաջին հերթին սոցիալ-բարոյական էակ է, ապա խիստ բնական և տրամաբանական պետք է համարել այն, որ սոցիալականացման բոլոր փուլերում նրա մոտ սերմանվում է մարդկանց մեծ խմբերի մասլինելու գիտակցությունը: Դա հենց այն վերանձնայինն է, որի շրջանակներում մարդ առաջնորդվում է ոչ թե անհատական, այլ կոլեկտիվ (համայնքային, ազգային և այլ) շահերով և նպատակներով: Որքան դա բնական է «հասարակական

կենդանի» համարվող մարդու համար, նույնքան բնական է, որ վերանծնայինը գոյանում է անծնայինի հիման վրա: Սակայն դժվար չէ նկատել, որ **բոլոր այն դեպքերում, երբ վերանծնայինը՝ «մենք»-ը, տրվում է մարդուն դաստիարակության ընթացքում, այն դեռևս չունի անհրաժեշտ ձևավորված հիմք անծնային՝ «ես»-ի մակարդակում:** Ասվածը նշանակում է, որ վերանծնայինն այս դեպքում ընդունվում է որպես **անփոփոխ տրվածություն** և ընկալվում **դոգմատիկ** մակարդակում՝ համապատասխան բացասական հետևանքներով ինչպես անհատի, այնպես էլ այդ վերանծնայինի համար: Խնդիր այն է, որ դաստիարակության ընթացքում առաջնային նշանակություն ունի ոչ թե վերանծնայինի, այլ անծնայինի՝ «ես»-ի, ձևավորումը այն պատճառով, որ միայն նախապես ձևավորվելու ընթացքում է «ես»-ը զբաղեցնում իր բնականոն տեղը մարդու հոգեկան համակարգում և այդպիսով հասնում նաև իր սահմաններին, որոնցից այնկողմ «գեր-ես»-ն է՝ վերանծնայինը: Հակառակ դեպքում, երբ դեռևս չձևավորված անծնայինի պայմաններում երեխային տրվում են **վերանծնային գոյության իմաստներ**, դրանք ուղղակիորեն խոչընդոտում, զսպում են անծնայինի ազատ և բնականոն զարգացումը: Ասվածը հիմնավորելու համար բավարար է, թերևս, վկայակոչել այն, որ անձը բնութագրող անպիսի հատկանիշներ, ինչպիսիք են ազատությունը, կամքը, բանականությունը, հուզականությունը, պատասխանատվությունը և այլն, վերանծնային մակարդակում ունենում են միանգամայն այլ դրսևորումներ: Չնայած նշված երևույթներն անհատականության ձևավորման հիմքերից են, բայց վերանծնային մակարդակում կարող են կատարել ուղիղ հակառակ «առաքելություն»՝ մարդուն դարձնելով կոլեկտիվ գիտակցության, բանականության և կամքի լոկ կրող: Դժվար չէ նկատել, որ այս դեպքում մարդը նպատակից վերածվում է միջոցի: Հետևաբար, հակամանկավարժական և հակահումանիստական է դեռևս չձևավորված անծնայինի պայմաններում երեխային տալ, առավել ևս՝ պարտադրել վերանծնային գոյության իմաստներ, ինչպիսիք պարունակում են, օրինակ, կրոնական կամ ազգային գաղափարախոսությունները:

Նույն խնդիրը հանդիպում է նաև կրթության ոլորտում, մասնավորապես հանրակրթության պարագայում, որտեղ կրկին գործ ունենք երեխաների դեռևս չձևավորված, բայց արդեն առարկաներում և ուսուցիչների կողմից «քարոզվող» վերանծնայինի թիրախում հայտնված անծնայինի հետ: Ե՛վ առարկաների ընտրությունն ու բովանդակությունը, և՛ դասավանդման մեթոդիկան, և՛ նույնիսկ ուսուցիչների վերաբերմունքը ժողովրդի պատմության, պետության,

կրոնի և հասարակության նկատմամբ երեխաների մոտ կարող են ձևավորվել վերանձնայինի թյուր և կարծրատիպային ընկալումներ, մինչդեռ վերանձնայինի կարևոր առաքելություններից մեկն է, պատկերավոր ասած, բնականոն կերպով ձևավորվելով անձնայինի հիման վրա, բացահայտել մարդու սոցիալական էությունը: Անձնայինի և վերանձնայինի նման «հանդիպումը» սահմանին կարող է ստանալ երկխոսության ձև, ինչի շնորհիվ կբացառվի անձնայինի կամ վերանձնայինի մենախոսությունը և դրանով՝ մարդու միակողմանիությունը:

Այն, որ սոցիալականացմանը զուգահեռ անձնային հատկանիշների ձևավորման հիման վրա բնականոն կերպով ստեղծվող վերանձնային, խմբային պատկերացումները վերաբերում են աշխարհին և մարդու կյանքին, նշանակում է, որ գործ ունենք **աշխարհայացքի** հետ (ըստ՝ Շաքարյան 2002): Ի տարբերություն **գաղափարախոսության**, որը միշտ տեղային նշանակություն ունի և որում մարդբախվում է իմպերատիվ բնույթի նարատիվների (պատումների) հետ, աշխարհայացքը ենթադրում է վերանձնայինի կողմից անձնայինի յուրահատուկ հաղթահարում, բայց ոչ թե բացասում, այլ ավելի շուտ՝ ստեղծագործական վերաիմաստավորում: «Ձուտ մարդկային, սուբյեկտային տեսակետից նման նպատակը ենթադրում է վերանձնայինի հաղթանակը անձնայինի նկատմամբ, վերանձնականը ոչ միայն անհատականի մակարդակում, այլև վերկուսակցական, վերքաղաքական, վերոեգիոնալ՝ թե՛ վերդասակարգային, վերազգային, թե՛ վերմշակութային իմաստներով վերանձնական, որը միտում ունի հանգելու համամարդկային կեցության արժեքներին, որտեղ ամենամեծ արժեքն ինքը՝ ամբողջական մարդն է և ոչ թե նրա միակողմանի սոցիալականացված, քաղաքականացված, նատուրալիզացված կամ ազգայնացված խրտվիլակը» (Շաքարյան 2005: 107):

Անձնայինի և վերանձնայինի հարաբերությունը յուրահատուկ դրսևորում է ստանում՝ կախված տվյալ հասարակության մեջ տարածված կյանքի կազմակերպման սոցիալ-մշակութային մոդելից: Մասնավորապես, հայ մշակույթի պատմական ընթացքի վրա մեծ ազդեցություն է ունեցել պետության երկարատև բացակայությունը, ինչի պատճառով չի ստեղծվել ազգային մշակույթի բնականոն գործառնության համար անհրաժեշտ սոցիալական միջավայրը: Դրա հետևանքով մշակույթն, այսպես ասած, արտամղվել է դեպի կենցաղ և սահմանափակվել ընտանեկան և համայնքային շրջանակներով, ինչն էլ պայմանավորել է հայկական էթնոհոգեբանության մեջ կենցաղային-առօրեական հարաբերությունների գերակա նշանակությունը: Մասամբ

դրանով է բացատրվում նաև հայի էթնոհոգեբանության մեջ եսականության ընդգծված դրսևորումը:

Բայց այդ, անձնայինի տարերքը առօրեականն է՝ «առաջնային կենսաբանական պահանջների ու հոգսերի հետ կապվող աշխարհը, սոցիալականի ու ստեղծագործականի համար ամենաաղքատիկ կեցության հիմքը» (Շաքարյան 2005: 130): Միանգամայն բնական է, որ անձնայինի ծայրահեղացված պայմաններում գործառնող մշակութային համակարգում պետք է ձևավորվեին նաև վերանձնայինի նույնքան ծայրահեղացված, հետևաբար նաև՝ թյուր ըմբռնումներ: Եվ որքանավելի մեծ տեղ են զբաղեցնում կենցաղային և առօրեական հարաբերություններն ու երևույթները կյանքի կազմակերպման այդ սոցիալ-մշակութային մոդելում, որոնք ամենաաղքատն են վերանձնայինի ձևավորման ներուժի առումով, այնքան ավելի խիստ է **սահմանափակվում** վերանձնայինը այդ հասարակությունում տարածված գաղափարախոսություններով՝ ազգային-էթնիկական, սոցիալ-քաղաքական, կրոնական և այլն:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ անհատի մտածելակերպի և գործունեության մեջ հստակ տարբերակվում են երկու մակարդակներ՝ անձնայինը և վերանձնայինը: Առաջինի ձևավորման և պահպանման առավել նպաստավոր պայմաններ կան առօրեական-կենցաղային մակարդակում, և որքան խորն է վերջինս արմատավորված տվյալ հասարակության կյանքի կազմակերպման մշակութային մոդելում, այնքան ավելի շատ է ազդում հասարակական կյանքի այլ ոլորտների և հարաբերությունների վրա՝ տնտեսության, քաղաքականության, դաստիարակության, կրթության և այլն:

Վերանձնայինն անհատի հոգեկան համակարգում ձևավորվում է անձնայինի հիման վրա որպես վերջինիս զարգացման **պահանջ**: Սակայն, երբ վերանձնայինը բնականոն կերպով չի բխում անձնայինից և չի հանդիսանում անձնայինի զարգացման արդյունք, այն, փաստորեն, արհեստականորեն «ներմուծվում» է դրսից, օրինակ, դաստիարակության, կրթության կամ գաղափարախոսության միջոցով: Այս դեպքում անհատի հոգեկան համակարգում անձնայինը, այսպես ասած, ճնշվում, սահմանափակվում է վերանձնայինով (ազգային, կրոնական, բարոյական կամ այլ գաղափարներով), ինչը հեռանկարում կարող է հանգեցնել ապաստանախախտման: Ֆ. Նիցշեի «Աստված մեռավ» արտահայտությունն այս համատեքստում կարող է մեկնաբանվել իբրև այնպիսի մի վերանձնայինի «չեղարկում», որը սահմանափակում է անձնայինը և որիցազատվելու դեպքում կարելի է խոսել անհատի անձնային բնականոն զարգացման մասին:

МОВСЕС ДЕМИРЧЯН - ДИЛЕММА ЛИЧНОСТНОГО И НАДЛИЧНОСТНОГО В ТРАДИЦИЯХ АРМЯНСКОЙ ЭТНОПСИХОЛОГИИ

Ключевые слова: *индивид, личностное, надличностное, социально-культурная модель, мировоззрение, идеология, образование, деперсонализация*

В статье исследуются два уровня мышления и деятельности человека - личностный и надличностный. Утверждается, что для поддержания первого наиболее благоприятным является **повседневное бытие**, и чем более оно укоренено в социально-культурной модели жизни данного общества, тем сильнее влияет на другие виды отношений и сферы общественной жизни - экономику, политику, воспитание, образование и т.д. Надличностное же формируется в психике человека на основе личностного как **необходимое требование** последнего для дальнейшего развития. Но когда надличностное не исходит естественным образом из личностного и не является результатом его развития, то оно (надличностное) искусственно внедряется извне посредством воспитания, образования или идеологии. В этом случае в ментальной системе индивида личностное, образно говоря, угнетается, ограничивается надличностным (национальными, религиозными, моральными или другими идеями и представлениями), что в конечном итоге может привести к деиндивидуализации человека.

Данная тенденция своеобразно выражается в этнопсихологии армян, которая сформировалась во многом в инокультурном окружении и, как следствие, стала «заложником» наиболее узких сфер бытия - быта и повседневности. Последние являются наиболее благоприятными для личностного уровня мышления и деятельности человека, чем можно объяснить **индивидуализм** и не выходящий за рамки повседневных - семейных, кровных, дружеских - отношений **коллективизм**, присущие этнопсихологии армян. Для дальнейшего - надличностного развития человека требуется качественный переход в мышлении от идеологии к мировоззрению, от догматизма к критическому рационализму, что почти невозможно в рамках доминирующей **повседневно-бытовой** социально-культурной модели организации жизни. Это означает, что доминирующие повседневно-бытовые отношения переносятся во многие сферы общественной жизни - политику, экономику, образование и т.д., а вакуум в надличностной сфере психики человека в процессе воспитания, образования и социализации заполняется некими историческими, национальными, религиозными и другими нарративами, которые содержательно мало связаны с повседневно-бытовой сферой жизни и в сумме **угнетают, ограничивают** личностное развитие человека.

MOVSES DEMIRTSHYAN - THE DILEMMA OF THE PERSONAL AND THE TRANSPERSONAL IN THE TRADITIONS OF ARMENIAN ETHNOPSYCHOLOGY

Keywords: *individual, personal, transpersonal, socio-cultural model, worldview, ideology, education, depersonalization*

The article examines two levels of thinking and human activity - personal and transpersonal. It is argued, that for personal activity "everyday life" is the most favorable, and the more it is rooted in the socio-cultural model of life of a given society, the more it affects other types of relations and spheres of social life - economy, politics, upbringing, education, etc. The transpersonal is formed in the human psyche on the basis of the personal as a **necessary requirement** for further development. But when the transpersonal does not come naturally from the personal and is not the result of its development, then it (transpersonal) is artificially implanted from the outside through upbringing, education or ideology. In this case, in the mental system of the individual, the personal, figuratively speaking, is **oppressed, limited** by the transpersonal (national, religious, moral or other ideas and phenomena), which ultimately can lead to **deindividualization** of a person.

This tendency is peculiarly expressed in the ethnopsychology of the Armenians, which was formed in many respects in a foreign cultural environment and, as a result, became a "hostage" of the narrowest sphere of human being - everyday life. It is the most favorable for the personal level of thinking and human activity, which can explain individualism and the collectivism in the ethnopsychology of the Armenians, which does not go beyond the framework of everyday - family, friendship - relations. For further transpersonal development of a person a qualitative transition in thinking from ideology to worldview, from dogmatism to critical rationalism is required, which is almost impossible within the framework of the dominant everyday social and cultural model of life organization. This means that the dominant everyday relations are transferred to many spheres of social life - politics, economics, education, etc., and the vacuum in the transpersonal sphere of the human psyche in the process of upbringing, education and socialization is filled with some historical, national, religious and other narratives, that have little meaningful connection with the everyday life and, in total, depress, limit the personal development of a person.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Շաքարյան Հր. Գ., Փիլիսոփայությունը ստեղծագործության գաղտնիքների որոնումներում. Եր., Երևանի պետական համալսարանի հրատ., 2002, 232 էջ:

2. Շաքարյան Հր., Փիլիսոփայական-մեթոդաբանական հիմնահարցերը ժամանակակից հայ կրթամշակութային համակարգում, Աշխարհայացքայինը ժամանակակից հայ կրթամշակութային համակարգում. Եր., ԵՊՀ, 2002, էջ 9-18:
3. Շաքարյան Հր., Փիլիսոփայություն, Եր., Երևանի համալ. հրատ., 2005, 211 էջ:
4. Бердяев Н.А., Судьба России. М., Сов. писатель, 1990. 346 с.
5. Дюркгейм Э., Социология: ее предмет, метод, предназначение. М., Канон, 1995, 352 с.
6. Ковалева А. И., Социализация // Знание. Понимание. Умение. М., 2004. № 1. с. 139-143.
7. Лезов С., Попытка понимания. М.-СПб., Университетская книга. 1999, 575 с.
8. Лурье С.В., Национализм, этничность, культура: категории науки и историческая практика. // Общественные науки и современность. 1999 №4, с. 101-111.
9. Лурье С. Русские и армяне в Закавказье: динамика контактной ситуации. (Этнопсихологический подход), СПб., Фил. Ин-та соц. РА, 1994, 22с.

REFERENCES

1. Hr. G. Shaqaryan, P'ilisop'ayowt'yowny' steghc'agorc'owt'yan gaghtniqneri oronowmnerowm. Er., Er&ani hamal. hrat., 2002, 232 e'j
2. Hr.G. Shaqaryan, P'ilisop'ayakan-met'odabanakan himhaharcery' jhamana kacic hay krt'amshakowt'ayin hamakargowm // Ashxarhayacqayiny' jhamanakacic hay krt'amshakowt'ayin hamakargowm. Er., EPH, 2002, e'j 9-18
3. Hr. G. Shaqaryan, P'ilisop'ayowt'yown, Er., Er&ani hamal. hrat., 2005, 211e'j
4. Berdjaev N.A. Sud'ba Rossii. М., Sov. pisatel', 1990. 346 с.
5. Djurkgejm, Je. Sociologija. Ee predmet, metod, prednaznachenie. М., Kanon, 1995, 352 s.
6. Kovaleva, A. I. Socializacija // Znanie. Ponimanie. Umenie. М., 2004. № 1. s. 139-143.
7. Lezov S. Popytka ponimanija. М.-SPb., Universitetskaja kniga. 1999, 575 s.
8. Lur'e S.V. Nacionalizm, jetnichnost', kul'tura: kategorii nauki i istoricheskaja praktika. // Obshhestvennye nauki i sovremennost'. 1999 №4, s. 101-111.
9. Lur'e S. Russkie i armjane v Zakavkaz'e: dinamika kontaktnoj situacii. (Jetnopsihologicheskij podhod). SPb., Fil. In-ta soc. RAN. 1994, 22 s.

Ներկայացվել է՝ 10.03.2021
Գրախոսվել է՝ 10.03.2021

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

ԱՆԻ ԱՍԼԱՆՅԱՆ - հայցորդ, համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոն, ԲՊՀ

АНИ АСЛАНЯН - соискатель, каф. мировой литературы и культуры, ГУ им. В. Брюсова

ANI ASLANYAN - Ph.D. student, Chair of World Literature and Culture, BSU

ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱԼԱՅԱՆ - ավագ դասախոս, հայագիտության ամբիոն, ԲՊՀ

СУСАННА БАЛАЯН - старший преподаватель, каф. арменоведения, ГУ им. В. Брюсова

SUSANNA BALAYAN - senior lecturer, Chair of Armenian Studies, BSU

ԱՐԱՍ ԲԱՐԼԵԶԻԶՅԱՆ - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ռոմանական լեզուների ամբիոն, ԲՊՀ

АРАМ БАРЛЕЗИЗЯН - доктор филологических наук, профессор, каф. Романских языков, ГУ им. В. Брюсова

ARAM BARLEZIZYAN - Doctor of Sciences (Philology), Professor, Chair of Romance Languages, BSU

ԶՈՐԻ ԲԱՐՍԵԴՅԱՆ - մանկավարժական գիտությունների թեկնածու, ասիստենտ, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան

ЗОРИ БАРСЕГЯН - кандидат педагогических наук, ассистент, Национальный политехнический университет Армении

ZORI BARSEGHYAN - Ph.D. in Pedagogy, Assistant, National Polytechnic University of Armenia

ՍՈՒՍԱՆՆԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ - ք.գ.թ., ասիստենտ, դասախոս, հայոց լեզվի ամբիոն, ԵՊՀ

СУСАННА ГАБРИЕЛЯН - кандидат филологических наук, ассистент, каф. армянского языка, ЕГУ

SUSANNA GABRIELIAN - Ph.D., Chair of Armenian, YSU

ԼԻԼԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ - ք.գ.թ., դոցենտ, հայագիտության ամբիոն, ԲՊՀ

ЛИЛИТ ГЕВОРГЯН - к.ф.н., доцент, каф. арменоведения, ГУ им. В. Брюсова

LILIT GEVORGYAN - PhD, Associate Professor, Chair of Armenian Studies, BSU

ՆԱՐԻՆԵ ԳԻՇՅԱՆ - դասախոս, անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոն, ԲՊՀ

НАРИНЕ ГИШЯН - преподаватель, каф. коммуникации и перевода английского языка, ГУ им. В. Брюсова

NARINE GISHYAN - lecturer, Chair of English Communication and Translation, BSU

ԹԱՄԱՐԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ - ասպիրանտ, Օտար լեզուների ամբիոն, Արցախի պետական համալսարան

ТАМАРА ДАНИЕЛЯН - аспирант, каф. иностранных языков, Арцахский государственный университет

TAMARA DANIELYAN - Ph.D student, Chair of Foreign Languages, ASU

ՄՈՎՍԵՍ ԴԵՄԻՐՇՅԱՆ - փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ, Փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոն, ԵՊՀ

МОВСЕС ДЕМИРЧЯН - кандидат философских наук, доцент, каф. Истории, теории философии и логики, ЕГУ

MOYSES DEMIRTSHYAN - Ph.D, Associate Professor, Chair of History, Theory of Philosophy and Logic, YSU

ՐՈՒՀԱՆՆԱ ԴՈՒՆՅԱՆ - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, հայագիտության ամբիոն, ԲՊՀ

РУЗАННА ДОХОЯН - кандидат филологических наук, доцент, каф. арменоведения, ГУ им. В. Брюсова

RUZANNA DOKHOYAN - Ph.D., Associate Professor, Chair of Armenian Studies, BSU

ՄԱՐԻՆԵ ԽԱՌԱՏՅԱՆ - մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, անգլերենի ամբիոն, ԲՊՀ

МАРИНА ХАРАТЯН - кандидат педагогических наук, доцент, каф. английского языка, ГУ им. В. Брюсова

MARINA KHARATYAN - Ph.D., Associate Professor, Chair of English, BSU

ՄԵՐԻ ՀԱՄԲԱՐՅԱՆ - հայագիտության ամբիոնի ավագ դասախոս, ԲՊՀ

МЕРИ АМБАРЯН - старший преподаватель, кафедра арменоведения, ГУ им. В. Брюсова

MARY HAMBARYAN - senior lecturer, Chair of Armenian Studies, BSU

ՍԻՐԱՆՈՒՇ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - դասախոս, անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոն, ԲՊՀ

СИРАНУШ ОГАНЕСЯН - преподаватель, каф. коммуникации и перевода английского языка, ГУ им. В. Брюсова

SIRANUSH HOVHANNISYAN - lecturer, Chair of English Communication and Translation, BSU

ԱՐԱ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - ասպիրանտ, Արաբագիտության ամբիոն, Արևելագիտության ֆակուլտետ, Երևանի պետական համալսարան

АРА МАТЕВОСЯН - аспирант, каф. арабистики, факультет востоковедения, Ереванский государственный университет

ARA MATEVOSYAN - Ph.D. student, Department of Arabic Studies, Faculty of Oriental Studies, Yerevan State University

ԱՆԱՀԻՏ ՄԱՎԱՐՅԱՆ - ք.գ.թ., դասախոս, անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոն, ԲՊՀ

АНАИТ МАКАРЯН - кандидат филологических наук, каф. коммуникации и перевода английского языка, ГУ им. В. Брюсова

ANANIT MAKARYAN - Ph.D., Chair of English Communication and Translation, BSU

ԼՈՒԻԶԱ ՄԱՐԱՐՅԱՆ - դասախոս, կիրառական լեզվաբանության ամբիոն, ԵՀ

ЛУИЗА МАРАВЯН - преподаватель, кафедра прикладной лингвистики, ЕУ

LUIZA MARABYAN - lecturer, Chair of Applied Linguistics, EU

ՌԵԲԵԿԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, հայոց լեզվի ամբիոն, ԵՊՀ

РЕБЕКА МАРГАРЯН - кандидат филологических наук, доцент, каф. армянского языка, ЕГУ

REBEKA MARGARYAN - Ph., D., Associate Professor, Chair of Armenian, YSU

ՍՎԵՏԼԱՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, անգլերենի ամբիոն, ԲՊՀ

СВЕТЛАНА МАРКАРЯН - кандидат филологических наук, доцент, каф. английского языка, ГУ им. В. Брюсова

SVETLANA MARGARYAN - Ph.D., Associate Professor, Chair of English, BSU

ՍԻՐԱՆՈՒՇ ՊԱՊՈՅԱՆ - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, գերմաներենի ամբիոն, ԲՊՀ
СИРАНУШ ПАПОЯН - кандидат филологических наук, доцент, каф. немецкого языка, ГУ им. В. Брюсова
SIRANUSH PAPOYAN - Ph.D., Associate Professor, Chair of German language, BSU

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ - ասպիրանտ, Օտար լեզուների ամբիոն, Արցախի պետական համալսարան
ЛУСИНЕ САРКИСЯН - аспирант, каф. иностранных языков, Арцахский государственный университет
LUSINE SARKISYAN - Ph.D. student, Chair of Foreign Languages, ASU

ԱԼԻՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ - բանասիրական գիտությունների թեկնածու, դասախոս, Օտար լեզուների ամբիոն, ԵՊԲՀ
АЛИНА ПЕТРОСЯН - кандидат филологических наук, преподаватель, каф. иностранных языков, ЕГМУ
ALINA PETROSYAN - Ph.D., lecturer, Department of Foreign Languages, YSMU

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ - դասախոս, անգլերենի ամբիոն, ԲՊՀ
СЮЗАННА СТЕПАНИЯН - преподаватель, каф. английского языка, ГУ им. В. Брюсова
SYUZANNA STEPANYAN - lecturer, Chair of English, BSU

ԼՈՒՍԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - ք.գ.թ., դոցենտ, Օտար լեզուների ամբիոն, Վանաձորի պետական համալսարան
ЛУСИК ВАРДАНИЯН - к.ф.н., доцент, каф. иностранных языков, Ванadzорский государственный университет
LUSIK VARDANYAN - Ph.D. in Philology, Associate Professor, Chair of Foreign Languages, Vanadzor State University

Համակարգչային ծնավորումը՝

Հասմիկ Փիլավջյանի,
Աննա Ավետիսյանի

Տպաքանակը՝ 100

«Լինգվա» հրատարակչություն
«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամ
Հասցե՝ 0002, Երևան, Թումանյան փող. 42
Հեռ.՝ (+374) 60 830 111
Էլ. հասցե՝ info@brusov.am
<http://www.brusov.am>

«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի «Բանբեր» գիտական պարբերականի 1(56) համարը երաշխավորվել է տպագրության ԲՊՀ-ի գիտական խորհրդի 2021 թվականի հունիսի 3-ի № 11 նիստի որոշմամբ: